«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2021

ՆԱԽԱԲԱՆ

Արցախի պետական համալսարանի (այսուհետ՝ ԱրՊՀ, ՄՈՒՀ, բուհ, համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է ԱրՊՀ-ի ներկայացրած դիմումի համաձայն: Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, տեղացի և միջազգային փորձագետների առջև դրված էր երկու խնդիր. 1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան, 2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից: Սույն զեկույցը պարունակում է ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 19

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 19

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 19

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 22

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 22

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 24

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 29

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 41

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 48

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 54

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 63

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 69

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 73

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 77

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 81

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 88

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 89

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 89

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 91

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 94

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 96

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 97

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 98

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) համալսարանի փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԱրՊՀ-ի գործունեությունը նպատակաուղղված է մանկավարժական, հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտության, տեխնիկայի, սպորտի, մշակույթի ուղղություններով մասնագիտական գիտելիքներով, հմտություններով ու կարողություններով օժտված մասնագետների պատրաստմանը, նշված ուղղություններով հիմնարար ու կիրառական հետազոտությունների իրականացումը, հանրությանը ծառայությունների մատուցումը, գիտելիքի ու արժեքի փոխանցումը, ի մասնավորի, ազգային ինքնության պահպանումն ու զարգացումը:

Փորձագիտական խումբը նաև հաշվի է առել, որ ԱրՊՀ-ն գտնվում է անցումային շրջանում, և շատ գործողություններ կամ վերջերս են ավարտվել կամ իրականացման փուլում են, որպեսզի բարձրացնեն թե՛ համալսարանի կատարողականը, թե՛ դրա որակը: Համալսարանը բավականին քչացրել է իր առկա բացը և այստեղ առկա է նաև համալսարանի ղեկավարների ու ակադեմիական հանրության ուժեղ դիրքորոշումը այս քաղաքականության շարունակականության հարցում: Հարկ է նշել, որ ինքնավերլուծության մեջ ներկայացված SWOT վերլուծությունը իրապես նշում է ԱրՊՀ թույլ կողմերը և որ ամենակարևորն է, առաջարկում է դրանց հաղթահարման ուղիներ:

ԱրՊՀ-ում վերջին երկու տարիներին մեկնարկել է կրթական ծրագրերի բարեփոխումները: Մշակվել են մի շարք ինստիտուցիոնալ ձևաչափեր, որոնք նպաստում են բարեփոխումների կանոնակարգվածությանը: Որոշ ՄԿԾ-ների (Հայոց լեզու և գրականություն) բարելավումները հաջողված փորձ են համարվում և կարևորվում է լավ փորձի տարածումը ԱրՊՀ բոլոր կրթական ծրագրերում: Բարեփոխումների հաջորդ փուլը անհրաժեշտ է դիտարկել ՄԿԾ-ների բովանդակության բարելավման տեսանկյունից՝ հատուկ ուշադրություն դարձնելով աշխատաշուկայի կարիքների համապարփակ վերլուծությանը և ՄԿԾ-ների պրակտիկ ու հետազոտական բաղադրիչի ուժեղացմանը: Կրթական ծրագրերն աշխատաշուկայում կլինեն ավելի մրցունակ և տարբերվող, եթե ավելի հստակ ուղղություններով տարբերակված լինեին: Այս նպատակին կարելի է հասնել մոդուլային համակարգի ներդրման միջոցով: Այս ամենը կնպաստեն շրջանավարտների զբաղվածության բարձրացմանը և մրցունակության ապահովմանը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում այս համատեքստում ՄԿԾ-ների արդիականացմանն ուղղված աշխատանքների պլանավորումն ու շարունակական իրականացումը: ՄԿԾ-ներն իրականացվում են բարձր

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների իքնակենսագրականները

որակավորում ունեցող և իրենց կարողություններն անընդհատ լավարկող և մոտիվացված դասախոսական անձնակազմի կողմից: ԱրՊՀ-ին հաջողվում է դասավանդման մեջ ներգրավել նաև գործատուների, ովքեր ապահովում են գործնական բաղադրիչը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևորում է ԱրՊՀ-ի կողմից դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանն ուղղված աշխատանքների շարունակական իրականացումը և անհրաժեշտ է համարում առաջիկայում այս համատեքստում ուշադրություն դարձնել գործատուների հետ սերտ համագործակցությանը, որը կբերի պրակտիկ փորձի ներդրմանը, օտար (անգլերենի) լեզուների իմացության լավացմանը, որը կնպաստի միջազգային փորձի ուսումնասիրմանն ու տեղայնացմանը, ՀՀ-ի հետ համագործակցության ընդլայնմանը, որի արդյունքում կմեծանա դասախոսների փորձի փոխանակման հնարավորությունները, հետազոտական աշխատանքներում ներգրավվածությանը մեծացմանը:

ՄԿԾ-ների իրականացման համար ներկայում առկա են համապատասխան ռեսուրսներ: ԱրՊՀ-ում առկա են համապատասխան ուսումնական մասնաշենքեր, որոնցում համապատասխանաբար առկա են ուսումնական լաբորատորիաներ և գրադարան: Այդուհանդերձ, նոր մասնաշենքի կառուցումը, լաբորատորանիաների և գրադարանի վերազինումը կնպաստի ուսումնառության առավել արդյունավետ իրականացմանը: Փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում ֆինանսական ռեսուրսների բազմազանեցման անհրաժեշտությունը, քանի որ մեծամասամբ ֆինանսական ռեսուրսները գոյանում են ուսանողական վարձավճարներից, իսկ ուսանողների թվաքանակի նվազման պայմաններում կարող է վտանգվել բուհի ֆինանսական կայունությունը:

ՄԿԾ-ների բարեփոխումների հաջող մեկնարկը, ԱրՊՀ-ի ջանքերը ապահովելու առավել պրակտիկ ուղղվածությամբ կրթական ծրագրեր, դասախոսների շարունակական բարելավմանը միտված քաղաքականությունը և ուսումնական ռեսուրսների վերազինման հնարավորությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ որակավորումները արժանահավատ են շնորհվում, իսկ առկա խնդիրները հաղթահարելի կդառնան ԱրՊՀ-ի կողմից դրանց հստակ պլանավորման պարագայում:

ԱրՊՀ-ում կարևորվում է ռազմավարական կառավարումը բոլոր մակարդակներում: Մշակվել է բուհի առաջին ռազմավարական ծրագիրը՝ հիմք դնելով բուհի բոլոր մակարդակներում (ֆակուլտետներ, ստորաբաժանումներ, ամբիոններ) հստակ պլանավորումների իրականացմանը և բարեփոխումների նոր որակական փուլի մեկնարկին: Ռազմավարական կառավարման առավել արդյունավետ իրականացման համար կարևորվում է ներկայիս համատեքստին համապատասխան վերլուծության իրականացումը և ՌԾ-ի իրատեսականության ապահովումը: Այս տեսանկյունից կարևոր է Արցախի ռազմաքաղաքական, տնտեսական իրադրության առանձնահատկությունները հաշվի առնելով, վտանգներն ու ռիսկերը դիտարկելով, ռիսկերի կառավարման պլանի մշակումը, որով հնարավոր կլինի առաջադրված նպատակներին հասնել՝ տարբեր ռիսկերից ածանցվող սցենարների դիտարկմամբ: Ռազմավարական պլանավորմամբ կառավարումը տեսանելիորեն բարելավել է ԱրՊՀ-ի կառավարման համակարգի գործառնումը՝ բուհը մտցնելով բարեփոխումների որակական նոր փուլ: Կատարվել են կառուցվածքային-կազմակերպական բնույթի վերափոխումներ՝ բուհի առաքելությանն ու ռազմավարական նպատակներին հնարավորինս համահունչ. կառավարման համակարգում սահմանվել են բուհի միջազգայնացման և որակի ապահովման գործառույթները, ինչը բուհի զարգացումը որոշակի ուղու վրա դնելու հնարավորություն է ստեղծում: Բուհն առավել որոշակի քայլեր է

սկսել անել հանրության հանդեպ իր հանձնառությունն ու պատասխանատվությունը դրսևորելու հարցում, ինչի վկայություններից են իրավաբանական կլինիկայի և հոգեբանական կենտրոնի ստեղծումն ու հաջող գործարկումը: Դրական համարելով բուհի կողմից տվյալների հավաքագրման հանգամանքը, այդուհանդերձ փորձագիտական խումբը գտնում է, որ նախ՝ անկատար են տվյալների հավաքագրման ու վերիֆիկացման մեխանիզմները, երկրորդ՝ որոշումների կայացումն ամբողջապես չի հիմնվում հավաքագրված տվյալների վերլուծության վրա, որոշումները հաճախ կայացվում են տրամաբանության, փորձառության շրջանակներում:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ ԱրՊՀ-ում կարևորվում է արդյունքահեն կառավարումը և որակի ապահովման մշակույթի ստեղծումն ու զարգացումը: Ղեկավար կազմը, բուհի հետագա զարգացումը տեսնում է որակի ապահովման համակարգի շարունակական զարգացման մեջ, որը կարող է նպաստել բուհի կայուն զարգացմանը առաջիկա տարիներին:

ԱրՊՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ առաջընթացի ապահովման և ուսումնական միջավայրի արդյունավետության ապահովման տեսանկյունից: Ուսանողները հնարավորություն ունեն տարբեր խորհուրդներում ներգրավվածության, հարցումների և հանդիպումներին մասնկցելու միջոցով բարձրաձայնելու իրենց կարիքները: Առկա են մի շարք դեպքեր ուսանողների կարիքների բավարարման ուղղությամբ: Համալսարանի ղեկավարությունը, վարչական և պրոֆեսորադասախոսական կազմը գրեթե մշտապես հասանելի են ուսանողների համար և աջակցում են նրանց: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ կարիերայի կենտրոնը ակտիվ աշխատանքներ է իրականացնում շրջանավարտների բազայի ստեղծման ուղղությամբ, ինչը կնպաստի շրջանավարտների հետ կապի ամրապնդմանը և կրթական ծառայությունների գնահատման մեխանիզմների բարելավմանը: Փորձագիտական խումբը դրական համարելով վերջին շրջանում ուսանողներին հետազոտական աշխատանքերում ներգրավելու փորձերը, այնուամենայնիվ խիստ կարևոր է համարում ուսանողների վերլուծական հմտությունների ձևավորմանն ուղղված միջոցառումների ակտիվացումը, ուսանողներին հետազոտական նախագծերում ներգրավելու անհրաժեշտությունը, ինչպես նաև այս համատեքստում գործատուների հետ սերտ համագործակցությունը:

Փորձագիտական խումբը մեծապես կարևորում և դրական է գնահատում ԱրՊՀ-ի ջանքերը գիտելիքի փոխանցման ուղղությամբ տարվող աշխատանքներում: ԱրՊՀ իրավաբանական կլինիկան, հոգեբանական կենտրոնը, դպրոցների ուսուցիչների համար վերապատրաստումները, այցելությունները զորամասեր նպաստում են հասարակության շրջանում ԱրՊՀ գործունեության մասին տեղեկացվածության բարձրացմանը, ինչպես նաև ԱրՊՀ-ի կողմից ստեղծված արժեքների փոխանացմանը հասարակության լայն շերտերին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱրՊՀ-ն ջանքեր է գործադրում գիտահետազոտական ուղղության զարգացման համար: Այնուամենայնիվ չնայած հետազոտությունը պաշտոնապես առաջնահերթություն է համարվում ռազմավարական ծրագրում, այն ԱրՊՀ գործունեության ամենաքիչ զարգացած ուղղություններից է: Հետազոտության ռազմավարության և հետազոտական առաջնահերթությունների հստակ սահմանումը կնպաստի ոլորտի համաչափ զարգացմանը, ինչպես նաև կնախանշի բուհի զարգացումը առաջիկա տարիներին, իսկ հետազոտության իրականացման հստակ մեխանիզմների մշակումն ու իրագործումը կաջակցեն բարձրորակ հետազոտական

արտադրանքի ստեղծմանը: Հետազոտության ոլորտում ԱրՊՀ-ի այս թույլ առաջընթացը կապված է հետազոտությունը բավարար կերպով դասավանդման գործընթացում ներառված չլինելու հանգամանքով: Առկա չեն կառույցներ, որոնք կնպաստեն գիտական հետազոտությունների իրականացմանն ու տեխնոլոգիաների փոխանցմանը գործարարության կամ արդյունաբերության ոլորտներ: Զարգացման ներկա փուլում հետազոտության ոլորտում առաջընթաց ունենալը պահանջում է առավել արժեքավոր հետազոտություններին և հետազոտողներին աջակցության տրամադրում, որը կարող է հանդես գալ անհատական առաջխաղացման և համալսարանի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության տեսքով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԱրՊՀ-ն շարունակաբար զարգացնում է իր արտաքին կապերը՝ մեծացնելով համագործակցության շրջանակը ՀՀ բուհերի, տեղական կազմակերպությունների, դպրոցների հետ: Դրական է, որ ԱրՊՀ-ն գիտակցում է միջազգայնացման կարևորությունը և քայլեր է ձեռնարկում այս ուղղությամբ: ԱրՊՀ-ի ՌԾ-ում սահմանվել է արտաքին կապերի և միջազգայնացման զարգացումը որպես գերակայություն, մշակված են մի շարք կանոնակարգող փաստաթղթեր ոլորտի զանգարցման համար: Հատուկ ուշադրության են արժանի ԱրՊՀ ղեկավարության ջանքերը ակադեմիական մեկուսացվածությունը հաղթահարելու և միջազգային ասպարեզ դուրս գալու ուղղությամբ: Համալսարանը նախ զարգացնում է համագործակցությունը ՀՀ բուհերի և չճանաչված պետությունների բուհերի հետ: ԱրՊՀ-ի համար միջազգայնացումն ավելին է, քան պարզապես դասախոսների և ուսանողների փոխանակումը, քանի որ միջազգայնացման կարևորագույն բաղադրիչները ավելին են, քան շարժունության ծրագրերը, դրանք ներառում են կառավարման համակարգում միջազգային չափանիշների կիրառում, հետազոտություն և զարգացում, դասավանդում և ուսուցում, ուսումնական պլան: Նման բարդ իրավիճակում հարկ է, որ ԱրՊՀ-ն վերաձևակերպի այս ոլորտի համար առկա կետերը ռազմավարությունում, և այն ուղղի դեպի համալսարանի ներսում միջազգայնացմանն ուղղված քայլերի առավել ինտենսիվ զարգացմանը: Այստեղ ամենաառանցքայինը օտար լեզվի, հատկապես անգլերենի, իմացության բարելավումն է ուսանողների ու դասախոսական կազմի շրջանում: Կարևոր է պատկերացնել, թե ինչպես պետք է համապատասխանեցնել ուսումնական պլանն ու դասընթացները միջազգային, միջմշակութային և համաշխարհային արժեքներին ու հմտություններին, որոնք օգտակար են աշխատաշուկայում, ինչպես նաև օտարերկրյա կազմակերպությունների ու հաստատությունների հետ համագործակցության ժամանակ: Օտարերկրյա համալսարանների համար գրավիչ լինելու նպատակով պետք է բարելավվի հետազոտության որակը: Սփյուռքի հայտնի շրջանավարտներին որպես հրավիրված դասախոսներ, փորձագետներ, հովանավորներ, դոնորներ հրավիրելը խիստ անհրաժեշտ է: Եվ վերջապես, համալսարանի միջազգայնացումը բարձրացնող գործողությունները պետք է իրականացվեն միջազգայնացման համար ընդունված քաղաքականության սահմաններում, որը կհաստատի ԱրՊՀ խիստ հանձնառությունը միջազգայնացման ուղղությամբ:

Հաշվի առնելով բուհի կողմից իրականացվող աշխատանքները կարելի է եզրակացնել, որ առկա է ձգտում ապահովելու բուհի երկարաժամկետ զարգացում՝ հասարակությանը ծառայությունների մատուցման, ուսանողների առաջընթացին նպաստող քաղաքականության որդեգրման և իրականացման միջոցով: ԱրՊՀ-ն գիտակցում է հետազոտության և միջազգայնացման կարևորությունը բուհի համար, սակայն ներկայում այս աշխատանքների

համակարգման և արդյունավետ կառավարման խնդիրներ կան: Հետազոտության զարգացումն ու միջազգայնացումը կրթական ծրագրերին փոխկապակցելը կնպաստեն բուհի տեսանելիության բարձրացմանը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) ԱրՊՀ-ում ռազմավարական կառավարման նախադրյալների ստեղծումն ու իրականացումը:
2) Որակի ապահովման համակարգի հիմքերի ստեղծումն ու ներդրումը, ինչպես նաև որակի ապահովման որոշ մեխանիզմների կիրառումը:
3) Կառավարման համակարգի շարունակական բարելավման քաղաքականության իրականացումը և ԱրՊՀ-ն որպես սովորող կազմակերպություն դիտարկելը:
4) ՄԿԾ-ների ինստիտուցիոնալ բարեփոխումների մեկնարկը և այս համատեքստում հաջողված փորձերի առկայությունը:
5) Կառավարման և վարչարարության մեջ ՊԻԳԲ շրջափուլի ներդրումն ու իրականացումը:
6) Դասախոսական և վարչական կազմի բարձր որակավորումները, իրենց կարողությունների անընդհատ բարելավման մշակույթի իրականացումը:
7) Ուսանողների կարիքների բացահայտման մեխանիզմների արդյունավետ իրականացումն ու ուսանողների բավարարվածությունը ստացած կրթությունից և մատուցվող ծառայություններից:
8) Ենթակառուցվածքների և ռեսուրսների համալրման քաղաքականության իրականացումը:
9) ԱրՊ-ի կողմից հետազոտական գործունեության կարևորումը և ներառումը ռազմավարական ծրագրում:
10) Արտաքին սերտ կապերի առկայությունը ԱՀ գործատուների, կազմակերպությունների հետ:
11) Օտար լեզուների լավացմանն ուղղված միջոցառումների իրականացում և խրախուսում ՄՈՒՀ-ի կողմից:
12) Փոփոխությունների նկատմամբ հանդուրժող և բարձր մոտիվացիա ունեցող վարչական, ուսումնաօժանդակ և դասախոսական անձնակազմ:

Հաստատության թույլ կողմերն են.

1) Տվյալների հավաքագրման, վերլուծության և արդյունքների ամփոփման մեխանիզմների անկատարությունը:
2) Ուսանողների և դասախոսների հետազոտական աշխատանքներում ներգրավվածության սակավությունը:
3) Հետազոտական գործունեության զարգացման քաղաքականության բացակայությունը:
4) Ուսանողների վերլուծական և պրակտիկ հմտությունների թույլ լինելը:
5) Միջազգայնացման աշխատանքների ոչ հստակ պլանավորումը և առկա հնարավորությունների ոչ նպատակային օգտագործումը:
6) Դասախոսների և ուսանողների մոտ օտար լեզվի /անգլերենի/ իմացության թույլ լինելը:
7) Լավ փորձի վերլուծության և տարածման մեխանիզմների թույլ լինելը:
8) Ֆինանսական կայնության ապահովման քաղաքականության բացակայությունը:

9) ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի և պրակտիկ ուղղվածության սակավությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1) ԱրՊՀ-ի ռազմավարական պլանավորումը տեսանելիորեն կապակցել ՄՈՒՀ-ի առանձնահակություններին և պետական առաջնահերթություններին, Արցախի ռազմաքաղաքական, տնտեսական իրադրության առանձնահատկություններով պայմանավորված ռիսկերին:

Կառավարումն ու վարչարարությունը

2) բարեփոխել տվյալների հավաքագրման համակարգը և որոշումների կայացումը ավելի շատ իրականացնել տվյալների արդյունքների վերլուծությունների հիման վրա, տվյալների հավաքագրման ու վերլուծման համակարգում ուժեղացնել հարցազրույցների, ֆոկուս խմբերի բաղադրիչները:
3) վարչական և գիտակրթական ստորաբաժանումների միջնաժամկետ ու կարճաժամկետ պլանավորումները իրականացնել ռազմավարական ծրագրի բացվածքի տրամաբանությամբ՝ սահմանելով արդյունքի գնահատման չափելի ցուցիչներ:
4) ներդնել բուհում լավագույն փորձի բացահայտման և տարածման մեխանիզմներ:

Մասնագիտության կրթական ծրագրերը

5) Վերանայել առաջարկվող կրթական ծրագրերը և դրանք ավելի սերտորեն կապակցել աշխատաշուկայի պահանջների հետ, ինչպես նաև ներդնել մոդուլային համակարգ:
6) Մշակել դասավանդման և ուսումնառության, գնահատման մեթոդների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
7) Շարունակել ինքնուրույն հետազոտական աշխատանքների ձևերի բազմազանեցումը և վերջնական գնահատականում դրա բաղադրիչի հաշվեկշռի ավելացումը

Ուսանողները

8) Գնահատել և վերլուծել ուսանողների հավաքագրման մեխանիզմների արդյունավետությունը և մշակել ու ներդնել հավաքագրման նոր մոտեցումներ՝ դիմորդների թվի աճը ապահովելու նպատակով:
9) Մշակել և ներդնել ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավելու մեխանիզմներ, ինչպես նաև ակտիվացնել ՈՒԳԸ գործունեությունը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

10) դասախոսների ընտրության և գնահատման համակարգում ներդնել ելքային բնույթի գիտամանկավարժական կարողություններ ենթադրող չափանիշներ՝ հատկապես կարևորելով դասավանդման մեջ հետազոտական բաղադրիչ ապահովող կարողությունը:
11) դասախոսների որակավորման բարձրացման ծրագրում՝ ուժեղացնել դասախոսների հետազոտական կարողունակությունների ձեռքբերման, ակտիվ, հետազոտահեն և նորարարական դասավանդման բաղադրիչները:
12) վերանայել ուսումնական բեռնվածության չափերն ու բաշխվածությունը՝ լսարանային բաղադրիչի հաշվին (հատկապես հումանիտար և սոցիալ-

տնտեսագիտական կառուցամասերի դեպքում) մեծացնելով հետազոտական բաղադրիչը:

13) Մշակել և կենսագործել սկսնակ դասախոսների մենթորության քաղաքականություն:
14) Օգտագործել առցանց կրթության հնարավորությունները և խրախուսել դասախոսներին մասնակցելու միջազգային դասընթացների:

Հետազոտությունը և զարգացումը

15) Վերանայել ԱրՊՀ-ի 2019-2023 Ռազմավարական ծրագրի գիտահետազոտական գործունեությանը առնչվող խնդիրները և քայլերը՝ դարձնելով դրանք ավելի իրատեսական:
16) Մշակել և իրագործել գիտահետազոտական գործունեության/ոլորտի համակարգված ինստիտուցիոնալ զարգացման քաղաքականություն, գիտական ուղղությունների ցանկ, որը կարտացոլի Արցախի կայուն զարգացման հիմնախնդիրները:
17) Ստեղծել գիտահետազոտության ոլորտում երիտասարդ հետազոտողների համար բարենպաստ միջավայր և համապատասխան մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան խթանելու գիտահետազոտական, մասնավորապես միջգիտակարգային աշխատանքներ իրականացնելու հետաքրքրությունը:
18) Բարելավել ԱրՊՀ նյութատեխնիկական բազան բնական գիտությունների զարգացման համար:
19) Ակտիվացնել համագործակցությունը ՀՀ և արտերկրի բուհերի հետ գիտահետազոտության ոլորտում:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

20) Մշակել ենթակառուցվածքի արդիականացման համար երկարաժամկետ զարգացման ծրագիր՝ ֆինանսավորման աղբյուրներով:
21) Մշակել առնվազն հնգամյա բյուջե՝ հաշվի առնելով ԱրՊՀ-ի զարգացման տարբեր սցենարներ:

Հասարակական պատասխանատվությունը

22) Բարելավել հաշվետվողականության համակարգը՝դարձնելով այն առավել վերլուծական:
23) Բարելավել ԱրՊՀ կայք էջը՝ ապահովելով ՄՈՒՀ-ի մասին հիմնական տեղակատվությունը և կրթական ծրագրերի հասանելիությունը:
24) ԱրՊՀ կայքում տեղադրել և թարմացնել օտար լեզուներով (անգլերեն և ռուսերեն) տեղեկատվությունը, ընդլայնել կառուցվածքային ստորաբաժանումների կայքէջերում ներկայացված տեղեկատվությունը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

25) Վերանայել Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարությունը՝ ներառելով բուհի զարգացման ուղենիշները առաջիկա տարիների համար, ինչպես նաև հատկացնել բյուջե ոլորտի զարգացման համար:
26) Մշակել և իրագործել «միջազգայնացում տեղում» քաղաքականություն, որը ենթադրում է միջազգային փորձի ուսումնասիրություն տարբեր ոլորտներում (կառավարում, կրթական ծրագրեր և այլն) և տեղայանցում:

27) Տրամադրել անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ պատրաստելու միջազգայնացման համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններ (օրինակ՝ ՊԴ կազմի և ուսանողների օտար լեզվի իմացության բարձրացում, մրցունակ կրթական և գիտահետազոտական ծրագրեր և այլն):
28) ՀՀ և/կամ չճանաչված երկրների բուհերի հետ մշակել և իրականացնել համատեղ կրթական ծրագրեր:
29) Ներկայացնել աշխատակիցների մոտ օտար լեզուների իմացության խթանման համակարգ և մեկնարկել օտար լեզուների զարգացման դասընթացներ համալսարանի աշխատակիցների համար:

Որակի ներքին ապահովման համակարգը

30) Հստակեցնել Որակի ապահովման կենտրոնի գործառույթները և ներառել ԱրՊՀ բոլոր գործընթացների որակի ապահովման և արդյունավետության գնահատման գործողությունները:
31) Բազմազանեցնել տվյալների հավաքագրման, ինչպես նաև հավաքագրված արդյունքների մշակման և վավերացման մեխանիզմները:
32) Վերանայել որակի ապահովման քաղաքականությունը՝ ներառելով որակի ներքին ապահովման համակարգի արդյունավետության գնահատման ընթացակարգը:
33) Բարելավել որակի ապահովման գործընթացների պլանավորումը՝ ուշադրություն դարձնելով բացահայված խնդիրների հիման վրա բարելավման գործընթացների ներառումը պլաններում:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ընդհանուր դիտարկումներ. ԱրՊՀ-ն փոքր համալսարան է, որը գործում է բարդ պայմաններում՝ ստեղծված քաղաքական մեկուսացվածության և Արցախի Հանրապետության նկատմամբ միջազգային չճանաչվածության հետևանքով: Վերջերս պատերազմն ու COVID-19-ը խաթարել են բուհի գործունեությունը: Չնայած այս բացառիկ դժվարություններին՝ ԱրՊՀ-ն վճռականորեն ձգտում է զարգացնել համագործակցությունը միջազգային համալսարանների հետ և ձեռնարկում է լուծումներ ԵԲԿՏ-ին համահունչ: 2008-2009թթ. համալսարանն սկսել է իրականացնել ծրագրեր բարձրագույն կրթության երեք աստիճաններով՝ Բոլոնիայի գործընթացին համահունչ: Սկսած 2012թ.-ից ԱրՊՀ կրթական ծրագրերում սահմանվել են ակնկալվող կրթական վերջնարդյունքները, այսպիսով պայմաններ ստեղծելով համապատասխանեցնելու կրթական ծրագրերը ՈԱՇ-ին: Համալսարանը ներդրել է նաև կրեդիտային համակարգ՝ հնարավորություն տալով իրականացնել ուսանողների փոխանակում բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև: Համալսարանը հանձնառություն ունի նաև ուսանողակենտրոն ուսուցման և կրթության զարգացման տեսանկյունից: ԱրՊՀ առաջնահերթությունն է բարձրացնել միջազգային համբավն ու ճանաչումը: Դա է նպատակը, որ ներկայումս ՈԱԱԿ-ի կողմից իրականացվում է առաջին ինստիտուցիոնալ հավատարմագրում: Այս բոլոր գործընթացները շարունակական զարգացում եբ ապրելու, որպեսզի հասնեն իրենց բուն նպատակին՝ որակի մշակույթի զարգացմանը:

Ըստ ԱրՊՀ տեսլականի ու առաքելության՝ համալսարանը Արցախի Հանրապետության առաջատար բուհերից է, որն առաջարկում է նորարարական կրթություն մի շարք կրթական ծրագրերով, զարգացնում է հիմնարար և կիրառական հետազոտությունն ու ծառայություններ է մատուցում հանրությանը: Տեսլականն իր ներկայիս ձևակերպմամբ ավելի շատ նկարագրում է համալսարանի ընթացիկ գործողությունները, այլ ոչ թե երկարաժամկետ հավակնություններն ու ապագա դերը կրթական շուկայում: Հետևաբար այն վերանայման կարիք ունի: Իսկ առաքելությունն իր հերթին պետք է առավել հստակորեն ընդգծի համալսարանի առանձնահատկությունները: Գովելի է համալսարանի պատմության մեջ առաջին անգամ ռազմավարական ծրագրի ընդունումը (2019-2023): Այս փաստաթղթին կից առկա է նաև այսպես կոչված ռազմավարական զարգացման ծրագրի ժամանակացույց, որտեղ թվարկված են ռազմավարական նպատակները, ԳԱՑ-երը, վերջնաժամկետներն ու պատասխանատուները:

Վերջին իրադարձությունների համատեքստում (պատերազմ, COVID-19), ինչպես նաև պայմանավորված մարդկային ու ֆինանսական ռեսուրսների սահմանափակումներով, խնդիր է առաջանում, թե արդյոք ռազմավարական նպատակները իրագործելի են նշված ժամանակահատվածի համար, հետևաբար պետք է վերաձևակերպվեն միջնաժամկետ առաջնահերթությունները: Ռազմավարական ծրագրի հետագա փոփոխությունների համար հարկ է մշակել զարգացման մի քանի սցենարներ և դրանցում ներկայացնել նաև դրանց իրագործման ռիսկերի գնահատում: Ռազմավարական պլանավորման արդյունավետության մշտադիտարկումն ու գնահատումը սահմանափակվում է հիմնականում ֆակուլտետների ու համալսարանի տարեկան հաշվետվություններով: Նման գնահատման արդյունքները ներկայացվում են ռեկտորի տարեկան հաշվետվություններում: Այդուհանդերձ, ոչ բոլոր գործողություններն են գնահատվում նման կերպ, այսպիսով ռազմավարական պլանավորումը պահանջում է ավելի սերտ կապեր որակի ներքին ապահովման համակարգի հետ: Այցի ժամանակ տեղի ունեցած հանդիպումների արդյունքում կարելի է արձանագրել, որ շահակիցները, ներառյալ նաև ուսանողները, բավականին լավ ծանոթ են առաքելությանն ու ռազմավարական նպատակներին:

ԱրՊՀ-ն փոքր համալսարան է, սակայն կազմակերպական կառուցվածքը բավականին ընդարձակ է և ունի ղեկավար շատ պաշտոններ (5 ֆակուլտետներ, 5 պրոռեկտորներ, որոնցից մեկը ղեկավարում է միայն երկու ստորաբաժանման աշխատանք, շատ կոլեգիալ մարմիններ, մշտական հանձնաժողովներ), որոնք կարելի է ավելի նվազեցնել: Կառավարման համակարգի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ համալսարանի Կառավարման Խորհրդի կազմում կան մի քանի նախարարներ, ինչպես նաև պետական հատվածի գործադիր տնօրեններ/ ղեկավարներ: Եվրոպական համալսարաններում միանշանակ չեն հանդիպում կառավարության ներկայացուցիչներ բուհերի կառավարման մարմիններում, քանի որ դրանք կարող են հանգեցնել բուհերի քաղաքականացմանն ու սահմանափակեն բուհերի ինքնավարությունը:

Համալսարանի կառավարման գործառնությունը քննարկման և շարունակական փոփոխությունների տակ է: Նոր բաժիններ են կազմավորվում, ինչպես օրինակ Որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ): Վերջերս եվրոպական բուհերում հստակ անցում է կատարվել մեկուսված ծրագրերից դեպի միջգիտակարգային ծրագրերի: Կարելի է մտածել, թե ինչպես ձևափոխել կազմակերպական կառուցվածքը ու նպաստել միջգիտակարգային ուսուցման և միջգիտակարգային գիտական հետազոտությունների իրականացմանը: Կառավարման

կարգը միշտ չէ, որ հստակ է սահմանված: Կառուցվածքային տարբեր ստորաբաժանումների միջև հանձնարարությունների բաշխումը կարելի է մի փոքր այլ ձևով իրականացնել, մասնավորապես, ներկայումս ՈԱԿ-ի կողմից իրականացվող մի քանի գործընթացներ կարելի է տեղափոխել Կարիերայի Կենտրոն: Հանդիպման ժամանակ ռեկտորը ընդունեց, որ վարչական կազմի գերզբաղվածություն կա (over-employment):

ԱրՊՀ-ն մշակել է մեծ թվով ներքին կանոնակարգեր, ներառյալ նաև ակադմիական բարեվարքության վերաբերյալ (ընդունվել են էթիկայի կանոնները): Հանդիպումների ընթացում պարզ դարձավ, որ բավականին հազվադեպ են պատահում էթիկայից դուրս վարվելաձև: Այդուհանդերձ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ակադեմիական կեղծիք, կոռուպցիա, տարբերակված մոտեցում, անհանդուրժողականություն, և այլն, մինչ օրս չեն ուսումնասիրվել: Այս առումով պետք է մշակվի վերոնշյալ երևույթների կանխարգելման քաղաքականություն:

Գովելի է, որ շահակիցները, ներառյալ ուսանողները, մասնակցում են համալսարանի ղեկավարմանը տարբեր մակարդակներում: Շահակիցների կարիքների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է, չնայած դա արվում է ոչ միշտ համակարգային ձևով և ոչ բոլոր խմբերից: Երեք քայլեր կարող են բարելավել որոշումների կայացման գործընթացի որակը. առաջին՝ հավաքագրվող տեղեկատվության վստահելիության քննադատական վերլուծություն և տեղեկատվության հավաքագրման ուղիների բարելավում, երկրորդ՝ տեղեկատվության հոսքի ներմուծումը որակի թվայնացված թվյալների բազա, երրորդ՝ համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների համար ԳԱՑ-երի սահմանում:

Ադրբեջանի հետ սահմանային հրադադարից, ինչպես նաև համավարակի պայմաններում խառը տիպի կրթության կազմակերպումից հետո արագ վերականգնողական աշխատանքների իրականացումը հաստատում է, որ բուհի ղեկավար կազմն ունի ղեկավարման լավ կարողություններ: Այդուհանդերձ, օգտակար կլինի համալսարանի ղեկավար կազմի, ինչպես նաև կոլեգիալ մարմինների անդամների (ներառյալ խորհրդակցական հանձնաժողովները) համար իրականացնել վերապատրաստումներ:

Դասավանդման/ուսուցման գործընթացն իրականացվում է այնպես, ինչպես ԵԲԿՏ համալսարաններում: Միանգամայն գովելի է, որ ԱրՊՀ-ն ունի թեզերում և ավարտական քննություններին ներկայացվող կրթական վերջնարդյունքների գնահատման գործուն համակարգ, և այդ գնահատումն իրակացվում է արտաքին շահակիցների մասնակցությամբ: Ըստ ռազմավարական ծրագրում ներկայացված տեղեկատվության՝ ԱրՊՀ շրջանավարտներն իրենց ուսումը շարունակում են եվրոպական և ամերիկյան ամենամեծ համբավ ունեցող համալսարաններում: Սակայն այլ բուհերում ձեռք բերված կրթական վերջնարդյունքների ճանաչման ընթացակարգի բացակայությունն ու կրեդիտների փոխանցման բարդ համակարգը խոչընդոտում են ԱրՊՀ ռազմավարական խնդիրների իրականացմանը՝ կապված ուսանողների շարժունության հետ: Համաձայն Եվրոպական չափոփրոշիչների և ուղենիշների 1.6 չափանիշի՝ ուսանողական բոլոր խմբերի կարիքները, նույնիսկ նրանց կարիքները, ովքեր շատ առաջընթաց չունեն, պետք է արտացոլվեն դասավանդման/ուսուցման գործընթացներում:

Ինչպես նշվել է վերևում, համալսարանի դասախոսական կազմը բավականին փոքր է: ԱրՊՀ-ն մշակել է դասախոսական կազմի հավաքագրման, գնահատման և զարգացման համակարգ, որը նման է եվրոպական բուհերի համանման համակարգերին: Տվյալ ոլորտի գործնական աշխատողների (քաղաքական, սոցիալական և տնտեսական ոլորտների

ներկայացուցիչներ) ներգարվումը դասախոսական կազմում մեծ առավելություն է: Ինչևէ, հիմնականում ԱրՊՀ շրջանավարտների աշխատանքի վերցնումը կարող է նաև խնդրահարույց լինել, քանի որ հնարավոր չի լինում ծանոթանալ նաև այլ բուհերի շրջանավարտների կողմից կիրառվող դասավանդման մեթոդներին: Մեծ թվով դասախոսներ աշխատում են կարճաժամկետ (1 տարվա) պայմանագրերով կամ կես դրույքով: Սա չի խրախուսում նրանց ներգրավվել հետազոտական աշխատանքներում: Բացի այդ, դասախոսները բավականին ծանրաբեռնված են դասավանդման ժամերով, և հետազոտության համար քիչ ժամանակ ունեն: Դասախոսների գնահատման և առաջխաղացման գործընթացը կարող էր լինել ավելի հստակ ու թափանցիկ: Օրինակ, հստակ չէ, թե որքանով է հաշվի առնվում դասավանդման և հետազոտության որակը: Դասախոսների ձեռքբերումները գնահատելիս, չափազանց շատ ուշադրություն է դարձվում քանակական ցուցանիշների վրա (պրոֆեսորը պետք է տպագրի առնվազն 1 հոդված յուրաքանչյուր տարի և 1 ձեռնարկ յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ), փոխանակ արժևորելու որակական ցուցանիշները: Շահակիցների կարիքների հավաքագրման համակարգը չի ներառում ԱրՊՀ վարչական ու տեխնիկական անձնակազմերին, որոնք օժանդակում են դասավանդման/ուսուցման գործընթացին ու հետազոտությանը:

Ռեկտորը միջազգայնացումը նշում է որպես ԱրՊՀ հիմնական նպատակներից մեկը, քանի որ այն հնարավորություն է տալիս համալսարանին համաշխարհային համբավ ունենալ: Հատուկ ուշադրության են արժանի ԱրՊՀ ղեկավարության ջանքերը ակադեմիական մեկուսացվածությունը հաղթահարելու և միջազգային ասպարեզ դուրս գալու ուղղությամբ:

Միջազգայնացումն ավելին է, քան պարզապես դասախոսների և ուսանողների փոխանակում, քանի որ միջազգայնացման կարևորագույն բաղադրիչները ավելին են, քան շարժունության ծրագրերը, դրանք ներառում են կառավարման միջազգային չափանիշների կիրառում, առաջնորդություն, հետազոտություն և զարգացում, դասավանդում և ուսուցում, ուսումնական պլան: Նման բարդ իրավիճակում խելամիտ կլինի վերաձևակերպել այս ոլորտի համար առկա կետերը ռազմավարությունում, և այն ուղղել դեպի համալսարանի ներսում միջազգայնացմանն ուղղված քայլերի առավել ինտենսիվ զարգացմանը: Այստեղ ամենաառանցքայինը օտար լեզվի, հատկապես անգլերենի, իմացության բարելավումն է ուսանողների ու դասախոսական կազմի շրջանում:

Վերջերս որակի ներքին ապահովման համակարգի զարգացման հարցում լավ առաջընթաց է նկատվել, ինչպես նաև տեսանելի է պրոֆեսիոնալիզմ որակի ապահովման գործընթացներում: ԱրՊՀ-ն վերաձևակերպել է իր որակի ապահովման քաղաքականությունը և պաշտոնականացրել է մի շարք ընթացակարգեր: Համալսարանի, ֆակուլտետների ու ամբիոնների մակարդակներում առկա են որակի ապահովման հանձնաժողովներ: Նորաստեղծ Որակի ապահովման կենտրոնն ունի 4 աշխատակից և անմիջականորեն ենթակա է ռեկտորին: Ստեղծվել է ինքնավերլուծության հանձնաժողով՝ 10 աշխատանքային խմբերով: Բոլոր գործընթացները համակարգվում են համալսարանի Գիտական խորհրդի կողմից: ԱրՊՀ-ն տպագրել է Որակի ձեռնարկ և կազմման փուլում է ԱրՊՀ որակի ապահովման գործիքակազմը: Յուրաքանչյուր տարի համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները ներկայացնում են հաշվետվություններ, որոնք հեագայում ներառվում են ռեկտորի տարեկան համապարփակ հաշվետվության մեջ (վերջին հաշվետվությունը 150 էջանոց է եղել): Այդուհանդերձ, այս մարմինների միջև հանձնարարականների ու գործառույթների բաժանումը հստակ չէ: Հետևաբար, դժվար է տեսնել, թե որքանով է որակի

բարելավման շրջափուլն իրականացվում ներքևից վերև նախաձեռնությամբ կամ վերևից ներքև որոշումների հիման վրա: Ինչպես նաև պարզվեց հանդիպումների ընթացքում, ՈԱԿ գերծանրաբեռնված է չափազանց շատ խնդիրներով, որոնք կարելի էր բաշխել այլ ստորաբաժանումների միջև:

Փոքր համալսարաններում կարևոր դեր է խաղում ոչ ֆորմալ որակի ապահովման համակարգը՝ հիմնված ակադեմիական արժեքների ու անմիջական հարաբերությունների վրա: Սա ակնհայտ էր ուսանողների ու դասախոսների հետ հանդիպումների ընթացքում ունեցած քննարկումների ժամանակ, քանի որ նրանք բազմաթիվ օրինակներ նշեցին, թե ինչպես է գործում այս համակարգը: Նրանք նշեցին ստանձնած ակադեմիական արժեքների և բուհի ինքնության հարցում ունեցած իրենց հանձնառության մասին: Մի կարևոր հարց, որ պետք է հաշվի առնվի, այն է, թե արդյոք կես դրույքով աշխատողները նույնպես ամբողջությամբ ներգրավված են որակի ապահովման շրջափուլերում:

Ինչևէ, որակի ապահովման քաղաքականությունը դեռևս հաջողությամբ կապակցված չէ ռազմավարական կառավարման հետ և չի ընդգրկում ԱրՊՀ գործունեության բոլոր ուղղությունները (ինչպես օրինակ գիտական հետազոտություն կամ համալսարանի ղեկավարում): Մի շարք ընթացակարգեր ու մեխանիզմներ հստակեցման կարիք ունեն (Որակի ձեռնարկում որակի ներքին ապահովման համակարգը ներկայացված է ընդամենը 1 էջով): Ներկայիս որակի ներքին ապահովման համակարգը բավարար կերպով կապակված չէ Եվրոպական չափանիշների և ուղենիշների 1-ին գլխում ENQA-ի կողմից ներկայացված չափանիշներին ու խորհրդատվություններին: Հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը նկատեց, որ այս չափանիշները դասախոսական և ղեկավար կազմերի ոչ բոլոր ներկայացուցիչներին են ծանոթ:

Համալսարանի՝ որակին առնչվող գործողությունները, որոնք հիմնված են ՊԻԳԲ շրջափուլի վրա չեն պարունակում ԱրՊՀ կատարողականի վերաբերյալ վերլուծություն և նույնիսկ չեն պատասխանում այն հարցին, թե որքանով են կատարված փոփոխությունները բարելավել հիմնական գործընթացների որակն ու ռազմավարական ծրագրերի արդյունավետությունը: Նման վերլուծությունը պետք է ցույց տա, թե որքանով է ԱրՊՀ գործունեության հաջողությունը կախված ԱրՊՀ կառուցվածքից, որակի ներքին ապահովման համակարգի գործառնությունից, ակադեմիական մշակույթից, ուսանողների ու դասախոսական կազմի կատարողականից, ինչպես նաև արտաքին ազդակներից (մրցակցություն, կառավարության կանոնակարգեր): Առկա չէ նաև վերլուծություն, թե որքանով են առանձին գործընթացները, մեխանիզմները, ընթացակարգերն ու գործիքները արդյունավետ: Փորձագիտական խումբը քիչ արձագանքներ լսեց որակի ապահովման հանձնաժողովների՝ որակի ներքին ապահովման համակարգում ունեցած ներդրումների մասին: Հետևաբար, որակի շրջանակը փակված չէ, և շարունակական բարելավումը չի կարող բավարար կերպով խթանված լինել: Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ կատարվելու է անցում <<արտաքին վերահսկողությունից դեպի ինքնավերահսկում>>, հետևաբար, խորհուրդ է տրվում պարբերաբար իրականացնել ԱրՊՀ գործընթացների, ընթացակարգերի ու կառույցների ներքին աուդիտ:

Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումները ապացուցեցին, որ որակի ապահովմանն առնչվող խնդիրները բավարար կերպով չեն ընկալվում ակադեմիական հանրության կողմից: Հավանաբար որակի ներքին ապահովման համակարգի համեմատաբար կարճ ժամանակահատվածի գործառնությունն էր պատճառը, որ հանդիպման մասնակիցները

չէին կարողանում հստակ ներկայացնել այդ համակարգի օգտակարությունը: Ներքին շահակիցների իրազեկվածության բարձրացումը համարվում է ամենամեծ մարտահրավերը որակի մշակույթի արդյունավետ զարգացման գործընթացում: Այս առումով կարիք կա նախաձեռնելու համահամալսարանական քննարկում որակի ապահովման քաղաքականության, որակի ներքին ապահովման համակարգի ու դրա արդյունքների մասին: Անհրաժեշտ է ԱրՊՀ-ում առկա ինստիտուցիոնալ ավանդույթներում արմատացնել նաև <<որակի մշակույթ>> հասկացությունը: Ինքնավերլուծության զեկույցը և ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբի կողմից ներկայացվող զեկույցը կարևոր գործիքներ են որակի ապահովման քաղաքականության մեջ առանցքային առաջնահերթությունների բացահայտման և որակի բարձրացման գործընթացում դրանց նոր թափ հաղորդելու համար: Կարելի է ներգրավել ուսանողական կառույցներին ուսանողների շրջանում որակի ապահովման մեխանիզմների մասին իրազեկվածության բարձրացման համար: Ըստ փորձագիտական խմբի կարծիքի՝ որակի ապահովման համակարգը չի ապահովում ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը կրթության հետագա բարելավման համար: Հետևաբար ցանկալի է վերանայել գործընթացների որակի մասին տեղեկատվության հավաքագրման մեթոդը, գնահատել այդ մեթոդի վստահելիությունն ու համապատասխանությունը և հետո միայն այն տեղադրել տվյալների բազայում:

Բարելավման ուղղություններ

1. Վերանայել ԱրՊՀ տեսլականը, առաքելությունն ու ռազմավարական ծրագիրը՝ դարձնելով երկարաժամկետ ու միջնաժամկետ նպատակները ավելի իրատեսական ու իրագործելի:
2. Ստեղծել միջնաժամկետ ռազմավարական նպատակների մոնիթորինգի ու գնահատման համակարգ՝ սահմանելով ԳԱՑ-եր և վերահսկման գործընթացներ:
3. Ռազմավարական ծրագրի հետագա փոփոխությունների համար հարկ է մշակել զարգացման մի քանի սցենարներ և դրանցում ներկայացնել նաև դրանց իրագործման ռիսկերի գնահատումը:
4. Վերանայել կազմակերպական կառուցվածքը՝ այն ավելի պարզեցնելու և կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթներն ու նրանց տրվող հանձնարարականները օպտիմալացնելու նպատակով:
5. Ներկայացնել կազմակերպական դրույթներ, որոնք կնպաստեն միջգիտակարգային ուսուցման և միջգիտակարգային գիտական հետազոտությունների զարգացմանը, ինչպես նաև կխթանեն համագործակցությունը արդյունաբերության և գործարարության հետ:
6. Համալսարանի գործունեության բոլոր առանցքային ուղղությունների համար մշակել քաղաքականություններ:
7. Մշակել և իրականացնել զրոյական հանդուրժողականության քաղաքականություն՝ կանխելու ոչ էթիկական վարքագիծը:
8. Որոշումների կայացման համար ներկայացնել տեղեկատվության հավաքագրման և կիրառման վստահելի համակարգ:
9. Մշակել միջգիտակարգային ուսուցումն ու հետազոտությունները խթանող համակարգ:
10. Ստեղծել գործատուների կարիքների գնահատման ավելի մասնագիտական մոտեցում, որպեսզի ավելի հստակ համաձայնեցվեն կրթական առաջարկը աշխատաշուկայի պահանջարկին ու սոցիալական կարիքներին:

11. Ներկայացնել ուսանողների, դասախոսների, շրջանավարտների ու գործատուների շրջանում հարցումների իրականացման կայուն համակարգ և հետադարձ կապի մեխանիզմներ՝ որպես դասավանդման և ուսուցման գործընթացների շարունակական բարելավում:
12. Ուսումնական պլանում ավելի շատ ժամեր հատկացնել անգլերենի ուսուցմանն ու գործնական դասընթացներին:
13. Որոշ դասընթացներ համալրել մասնագիտական կազմակերպությունների պահանջներով (օրինակ՝ օտար լեզուներ, հաշվապահություն և ֆինանսներ), որպեսզի դասընթացն ավարտելուց հետո ուսանողները ստանան իրենց մասնագիտական որակավորումների մասին վկայող հավաստագրեր:
14. Ներկայացնել ուսանողների կրթական հաջողությունների վերլուծություն ողջ կրթական շրջափուլի ընթացքում և գնահատման համակարգում բարձրացնել ուսանողների անհատական աշխատանքների կարևորությունը:
15. Մշակել ԱրՊՀ-ում ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումների վերաբերյալ ձեռնարկ՝ ներկայացնելով դասավանդման տեխնիկաների ու կրթական գործընթացի կապը ակնկալվող կրթական վերջնարդյունքների ու դրանց գնահատման մեթոդների հետ:
16. Մշակել այլ համալսարաններում ձեռք բերված կրթական վերջնարդյունքների՝ ԱրՊՀ-ում ճանաչման ընթացակարգ:
17. Նշանակել ուսանողների իրավունքների պաշտպան:
18. Մշակել ուսանողներին հետազոտության մեջ ավելի լայնորեն ներգրավելու շրջանակ ու մեխանիզմներ:
19. Սահմանել հիմնական դասախոսական կազմն ու նրանց որակավորումները՝ ըստ յուրաքանչյուր կրթական ծրագրի:
20. Դասախոսների գնահատման քաղաքականության մեջ մեծ կարևորություն տալ դասավանդման և հետազոտության որակին:
21. Մշակել երիտասարդ դասախոսների ակադեմիական և մասնագիտական զարգացմանն աջակցության համակարգ:
22. Մարդկային ռեսուրսների զարգացման քաղաքականության մեջ հաշվի առնել վարչական և ուսումնաօժանդակ կազմերի կարիքները:
23. Ստեղծել Հետազոտությունների հանձնաժողով, որտեղ ներգրավված կլինեն նաև գործարարության ոլորտի և օտարերկրյա գործընկեր համալսարանների ներկայացուցիչներ:
24. Մշակել համալսարանի հետազոտությունների երկարաժամկետ ռազմավարություն և քաղաքականություն:
25. Մշակել իրականացված հետազոտությունների որակի գնահատման մեխանիզմ:
26. Մշակել մեխանիզմ՝ խթանելու անձնակազմի՝ բարձրորակ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու և գրախոսվող ամսագրերում տպագրվելու հետաքրքրությունը:
27. Մշակել միջգիտակարգային հետազոտությունները խթանող համակարգ:
28. Ստեղծել գործարարություն-համալսարան հետազոտական համագործակցությունը խթանող հարթակ

29. Քաղաքական սահմանափակումները հաղթահարելու համար, նախ և առաջ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել բարձրացնելու միջազգայնացման մակարդակը:
30. Ներկայացնել աշխատակիցների մոտ օտար լեզուների իմացության խթանման համակարգ և մեկնարկել օտար լեզուների զարգացման դասընթացներ համալսարանի աշխատակիցների համար:
31. Մշակել ՈԱ քաղաքականության և ՈՆԱ համակարգի արդյունավետության գնահատման ընթացակարգ:
32. Թարմացնել Որակի ձեռնարկը՝ համապարփակ ներկայացնելով որակի ներքին ապահովման համակարգը, ներառելով բոլոր գործընթացների, ընթացակարգերի սահմանումը, կազմակերպական կառուցվածքը, ստորաբաժանումների միջև փոխադարձ կապվածությունը, ինչպես նաև որակի կատարողականի ցուցանիշները:
33. Բարձրացնել որակի ապահովման ու որակի մշակույթի հանդեպ ակադեմիական հանրության տեղեկացվածությունն ու հանձնառությունը՝ կազմակերպելով վերապատրաստումներ, բարելավելով հետադարձ կապի մեխանիզմները, նպաստելով շահակիցների միջև երկխոսության իրականացման, ինչպես նաև խթանելով համալսարանի տարբեր կազռուցվածքային ստորաբաժանումների միջև համագործակցությունը:
34. Ստեղծել լավագույն փորձի բացահայտման ու տարածման մեխանիզմ:

21-ը հունիսի, 2021

Մենուա Սողոմոնյան, փորձագիտական խմբի ղեկավար

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

1. **Մենուա Սողոմոնյան՝** ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ, պատմական գիտ. թեկնածու,
2. **Միսչեսլավ Սոխա՝** Վարշավայի համալսարանի և Պետական կառավարման դպրոցի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, բարձրագույն կրթության հավատարմագրման Եվրոպական կոնսորցիումի (ECA) ֆինանսական կոմիտեի անդամ,
3. **Լիլիթ Բաղալյան՝** Բրյուսովի պետական համալսարանի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու,
4. **Վահագն Վարդանյան՝** Հայ-ռուսական համալսարանի Մաթեմատիկայի և Ինֆորմատիկայի ինստիտուտի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու,
5. **Աշխեն Արզումանյան՝** ԵՊՀ քիմիական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավար Վարդուհի Գյուլազյանը:

Բանավոր թարգմանությունը կատարել է՝ ԲՊՀ Թարգմանության ամբիոնի դասախոս Վարդանուշ Բաղդասարյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և քարտուղարությունը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԱրՊՀ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ԱրՊՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց, որն այնուհետև փոփոխվել է՝ պայմանավորված COVID19 համավարակով և ՀՀ-ում արտակարգ, այնուհետ՝ ռազմական դրությամբ:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերենով և անգլերենով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: ԱրՊՀ-ի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ԱՐՊՀ ռեկտորի հրամանով ձևավորված խումբը: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է ինքնավերլուծության

զեկույցը՝ տեխնիկական և բովանդակային առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև համակարգողն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ԱրՊՀ-ի հետ:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Նախանական այց

2021 թվականի մարտի 1-ին առցանց տեղի է ունեցել նախապատրաստական հանդիպում ԱրՊՀ ղեկավար կազմի և ՈԱ ներկայացուցիչների հետ: ՄՈՒՀի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները դիտարկվել են այցի նախօրեին՝ մարտի 8-ին, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2021 թ.-ի. մարտի 9-ից 12-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն՝ փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ԱրՊՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը: Այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը: Փորձագիտական այցին և քննարկումներին միջազգային փորձագետը միացե է առցանց տարբերակով: Կիրառվել է ZOOM հարթակը: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է ԱՐՊՀ ռեկտորի հետ հանդիպումներով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ բաց հանդիպման: Այցի ընթացքում իրականացվել են նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույցը

խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում[4] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում: Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար և անբավարար**:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի ներկայացուցիչները և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Միջազգային փորձագետը պատրաստել է գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք, որը ներառվել է զեկույցի տեքստում: Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 10.05.2021-ին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ԱրՊՀ-ն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 24.05.2021-ին: Բուհն իր դիտարկումները ներկայացրել է հայերեն, որը տրամադրվել է տեղացի փորձագետներին, ինչպես նաև քննարկվել է միջազգային փորձագետի հետ: 2021 թվականի հունիսի 11-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել է բուհի պատասխանը: Հաշվի առնելով բուհի դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 21.06.2021- ին:

21-ը հունիսի, 2021



Վարդուհի Գյուլազյան, փորձագիտական խմբի համակարգող

[3] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[4] Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

Պատմություն. Արցախի պետական համալսարանը իր ստեղծման օրից առայսօր առանձնահատուկ տեղ է գրավում Արցախի Հանրապետության ոչ միայն բարձրագույն կրթության և գիտության բնագավառում, այլև մշակութային, հասարակական-քաղաքական կյանքում՝ մշտապես կրելով «Մայր բուհ» պատվանունը: Արցախի մայր բուհը մանկավարժական ինստիտուտի կարգավիճակով ստեղծվել է 1969 թվականին Լեռնային Ղարաբաղի Ինք-նավար Մարզի կենտրոն Ստեփանակերտ քաղաքում՝ հզոր ազդակ հանդիսանալով հայկական երկրամասում ազգային գործոնի պահպանման ու զարգացման համար: Իր գործունեության 50 տարիների ընթացքում համալսարանը տվել է շուրջ 23.000 շրջանավարտ

Կրթություն. Համալսարանում 2008-2009թթ. դիպլոմավորված մասնագետներ պատրաստելու համակարգից անցում կատարվեց ուսուցման եռաստիճան համակարգի՝ բակալավրիատ, մագիստրատուրա և հետբուհական կրթություն՝ համաձայն Բոլոնյան հռչակագրի: Ներդրվեց ուսանողների գիտելիքների ստուգման համակարգչային թեստային եղանակը: Այս նորամուծությունների շնորհիվ բուհը գիտական աշխարհին ներկայացավ որպես մասնագետների պատրաստման բավականաչափ զարգացած ու խոշոր մի կենտրոն, որը զգալիորեն նպաստում է Արցախի Հանրապետության գիտատեխնիկական ու տնտեսական ներուժի ամրապնդմանը: Ներկայումս ԱրՊՀ-ն, բացի վարչական շենքից, ունի երեք ուսումնական մասնաշենք և մեկ ուսանողական հանրակացարան, 5 ֆակուլտետ, 16 ամբիոն, 174 հիմնական և 106 ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոս, շուրջ 2600 սովորող: Համալսարանում ժամավճարային հիմունքներով դասավանդում են բարձրաստիճան պաշտոնյաներ (ԱԺ նախագահը, փոխնախագահը, մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարը, արդարադատության նախարարը, Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետը և ուրիշներ): Կարևորելով Արցախի քաղաքական ու մշակութային առանձնահատկությունը՝ պարբերաբար համալսարան են այցելում և դասախոսություններով հանդես եկել անվանի գիտնականներ, պետական, քաղաքական, հասարակական, հոգևոր գործիչներ, ովքեր, իրենց փորձը և գիտելիքները դասախոսներին և ուսանողներին փոխանցելով, որոշակի ներդրում են ունենում Արցախի զարգացմանը:

Հետազոտություն. Ըստ ՌԾ-ի համալսարանը նախատեսում է ձևավորել անհրաժեշտ ներառական միջավայր գիտության բոլոր բնագավառների ուղղությամբ ԱրՊՀ-ում հիմնարար, հիմնախնդրային, կիրառական շեշտադրմամբ հետազոտությունների համար: Մասնավորապես՝ համալսարանը նպատակ ունի ձևավորել քննադատական մոտեցմամբ միջգիտակարգային հետազոտություններ կատարողների խումբ, որն իր մասնագիտական և գիտական մակարդակով կնպաստի գիտության բնագավառի նորարական վերափոխումներին, հետագայում՝ գիտական դպրոցների ձևավորմանը: ԱրՊՀ-ն առաջնահերթություն է դիտարկում Արցախի կայուն զարգացման գերակա ուղղություններով գիտահետազոտական թեմաների հնարավոր ցանկ ստեղծելը և նպատակ ունի չճանաչված պետությունների բուհերի գործընկերությամբ կազմակերպել գիտական գործունեության վարկանիշը բարձրացնող միջազգային ուսումնասիրություններ, նպաստել միջազգային

հարթակներում հետազոտությունների արդյունքների ներկայացմանը, նպաստել միջազգային, ՀՀ և հանրապետական գիտական ծրագրերին, դրամաշնորհներին ԱրՊՀ հետազոտողների մասնակցությանը, որպես առաջնահերթություն դիտարկելով հետազոտության և ուսումնառության միջև կապը՝ ուսանողներին մասնակից դարձնել հետազոտություններին՝ ապահովելով փոխակերպվող արդի պահանջներին համապատասխան կարողությունների ձևավորումը: Համալսարանը հետազոտության միջազգայնացման ուղղությամբ նպատակ ունի ներգրավել ՀՀ և միջազգային հետազոտական ներուժը ԱրՊՀ-ում իրականացվող նախագծերին:

Միջազգայնացում. Համալսարանում գործում են ուսումնական և գիտական մի քանի կենտրոններ, մասնագիտացված լաբորատորիաներ, կաբինետներ, այդ թվում՝ հայերենի, ռուսերենի, անգլերենի, գերմաներենի, ֆրանսերենի ուսուցման: Բուհը հաջողությամբ համագործակցում է ոչ միայն ԱՀ և ՀՀ բուհե-րի ու գիտահետազոտական կենտրոնների հետ, այլև միջազգային ճանաչում ունեցող այնպիսի կառույցների հետ, ինչպիսիք են Ռուսաստանի Դաշնության կրթության ակադեմիան, Լյովենի կաթոլիկ համալսարանը, Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանը, Բեյրութի Հայկազյան համալսարանը, կապեր են պահպանվում մի շարք չճանաչված երկրների՝ Բասկերի երկրի, Մերձդնեստրի, Հարավային Օսեթիայի, Աբխազիայի համալսարանների հետ, ինչը մենք անչափ բարձր ենք գնահատում:

Որակի ապահովում. Հաստատության հավակնությունները Որակի ապահովման ուղղությամբ ձևակերպված են որպես նպատակներ ԱրՊՀ որակի ապահովման ձեռնարկում: Առաջիկա տարիների համար նախատեսված է.

- սահմանված կրթական չափորոշիչների պահպանմամբ իրականացնել ԱրՊՀ կրթական ծրագրերն ու որակավորումների շնորհումը,
- բոլոր շահակիցների (ուսանողների, աշխատակիցների, գործատուների, հիմնադրի, լիազոր մարմնի և ֆինանսավորող այլ կազմակերպությունների) առջև ապահովել կրթության որակի համար ԱրՊՀ հաշվետվողականությունը,
- ԱրՊՀ և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար ստեղծել անհրաժեշտ մեթոդական և կազմակերպական հիմքեր,
- ԱրՊՀ-ում խթանել ուսուցման որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը,
- Հետամուտ լինել ԱրՊՀ տեսլականին, ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան առաքելության իրականացմանը, բարձրացնել մատուցվող կրթական ծառայությունների որակը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Արցախի պետական համալսարանի առաքելությունն ու տեսլականը ներկայացված է բուհի զարգացման 2019-2023 թթ. ռազմավարական ծրագրում, որի համաձայն բուհի գործունեությունը նպատակաուղղված է մանկավարժական, հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտության, տեխնիկայի, սպորտի մշակույթի ուղղություններով մասնագիտական գիտելիքներով, հմտություններով ու կարողություններով օժտված մասնագետների պատրաստումն է, նշված ուղղություններով հիմնարար ու կիրառական հետազոտությունների իրականացումը, հանրությանը ծառայությունների մատուցումը, գիտելիքի ու արժեքի փոխանցումը, ի մասնավորի, ազգային ինքնության պահպանումն ու զարգացումը:

Արցախի պետական համալսարանի զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագիրը առաջին երկարաժամկետ ռազմավարական պլանն է բուհի կեսդարյա պատմության մեջ: Ռազմավարական այս ծրագրում բուհի գերակա նպատակներ են հայտարարված.

- Մասնագիտությունների կրթական ծրագրերը դարձնել աշխատաշուկայի պահանջներին համահունչ՝ հագեցված անհրաժեշտ ռեսուրսներով և ապահովված համապատասխան դասախոսական ներուժով,
- Զևավորել մրցունակ և նորարարական մարդկային ներուժ Արցախի հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտական արդյունքի վրա հիմնված լուծումներ առաջարկելու կարողությամբ,
- Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման և ներգրավման համակարգը
- Բարելավել համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության ու թափանցիկության բարձրացմանը,
- Աջակցել հասարակության առաջընթացին՝ նպաստելով համալսարանի գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը,
- Ապահովել համալսարանի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, խթանել բուհի գործունեության միջազգայնացումը:

ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում նկարագրված են նշված նպատակների իրագործման համար առաջադրված խնդիրները, որոնք էլ, իրենց հերթին ներկայացված են դրանց լուծման ուղղությամբ առաջադրված գործողություններով: Ռազմավարական ծրագրին կից մշակված է դրա իրականացման ժամանակացույց-պլանը, որտեղ, ռազմավարական խնդիրների լուծման համար սահմանված են արդյունքի գնահատման քանակական ցուցիչներ, իսկ այդ խնդիրների լուծմանը տանող գործողությունների համար՝ քանակական և որակական ցուցիչներ, պատասխանատուներ ու ժամկետներ: Պետք է նշել, սակայն, որ բուհի ամենամյա հաշվետվություններում կատարված աշխատանքը չի ներկայացվում և վերլուծվում ըստ այդ ցուցիչների՝ ներքին ու արտաքին

շահակիցներին պարզ դարձնելու համար կատարողականի աստիճանն ու արդյունավետությունը: Մյուս կողմից, այն հանգամանքը, որ բուհի ռազմավարական ծրագրի ավարտին դեռ երկու տարի կա, առայժմ հնարավոր չէ գնահատել սահմանված քանակական ցուցիչներին համապատասխան խնդիրների լուծման կատարողականը (օրինակ՝ ուսանողների առնվազն 80 տոկոսի բավարարվածությունը տրամադրվող ծառայություններից), եթե ընդունելու լինենք, որ այդ խնդիրների լուծման վերջնարդյունքները նախատեսված են ապահովել մինչև ռազմավարական ծրագրի ավարտը:

ԱրՊՀ առաքելության համապատասխանությունը ՈԱԾ-ին փաստվում է այն հանգամանքով, որ բուհը իրականացնում է կրթական ծրագրեր ՈԱԾ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակների նկարագրիչների համաձայն, ինչպես նաև կրթական ծրագրերի վերջնարդյունքների՝ ՈԱԾ նկարագրիչներին համապատասխանության մատրիցաների առկայությամբ:

ԱրՊՀ կրթական ծրագրերի, բուհի անցած ուղու, այլ փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հատկապես աշխատաշուկայի սահմանափակության պայմաններում բուհի առաքելության բովանդակության ծանրակշիռ մասը վերաբերում է հանրակրթական դպրոցների համար մանկավարժական կադրերի պատրաստմանը: Ճիշտ է, բուհի կողմից իրականացվող որոշ կրթական ծրագրեր (օրինակ՝ ֆինանսներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն) շուկայամետ են, այդուհանդերձ կրթական ծրագրերի մեծ մասի արդյունքը հանգում է գերազանցապես մանկավարժներ պատրաստելուն: Այս հարցում իր դերն ունի այն հանգամանքը, որ բուհը տասնամյակներ շարունակ մանկավարժական պրոֆիլ է ունեցել: ԱրՊՀ-ն նաև Արցախի պետական ծառայության պաշտոնյաների գլխավոր դարբնոցն է:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում որոշ հավակնոտ նպատակադրումների ու դրանցից ածանցվող խնդիրների ու գործողությունների միջև առկա են անհամապատասխանություններ: Օրինակ՝ բուհի հետազոտական առաքելությունը բովանդակող նպատակադրմանը («Ձևավորել մրցունակ և նորարարական մարդկային ներուժ Արցախի հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտական արդյունքի վրա հիմնված լուծումներ առաջարկելու կարողությամբ») զուգահեռ, թեև խնդիր դրված է ապահովել բուհի մասնակցությունը հայտարարվող տեղական ու միջազգային դրամաշնորհներին, այնուամենայնիվ այս ուղղությամբ հստակ քայլեր իրականացված չեն[5]:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ԱրՊՀ-ի տարեկան պլանավորումները ոչ այնքան բխում են ռազմավարական ծրագրից, որքան իրենցից ներկայացնում են ավանդույթի ուժով ձևավորված տարեկան օպերացիոնալ պլանավորումներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհում ռազմավարական պլանավորման ու իրականացման գործընթացները արհեստավարժ կազմակերպելու հարցում մարդկային ռեսուրսի խնդիր կա:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Արցախի պետական համալսարանի ներքին շահակիցներն են ուսանողները, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական և սպասարկող անձնակազմը, արտաքին շահակիցներն են՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման

[5] Տեքստը խմբագրվել է համալսարանի դիտարկումների արդյունքում:

մարմինները, գործատուները, ուսանողների ծնողներն ու խնամակալները, գործընկեր կրթական հաստատությունները, շրջանավարտները, առանձին անհատներ և այլք: Համաձայն ինքնավերլուծության, թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցները աշխույժ և գործուն մասնակցություն են ունեցել ԱրՊՀ առաքելության, նպատակների և խնդիրների սահմանման, վերհանման ու ձևակերպման գործընթացներում: Փորձագիտական հանդիպումներից երևաց, որ, իսկապես, հատկապես պրոֆեսորադասախոսական ու վարչական կազմի և ուսանողության ներկայացուցիչները խորամուխ են համալսարանի խնդիրներում և վերհանել են բուհի ներքին համայնքի կարիքների մեծ մասը, ինչն իր արտացոլումն է գտել ռազմավարական ծրագրում: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբն այդպես էլ չստացավ նույն հարցում բուհի արտաքին շահակիցների գործուն ներգրավվածության մասին տպավորություն: Այն հանգամանքը, որ պետական կառավարման մարմինների որոշ ներկայացուցիչներ ու գործատուներ դասավանդում են ԱրՊՀ-ում, թեև ինքնին ենթադրում է արտաքին շահակիցների որոշ սեգմենտների կարիքների արտացոլում բուհի պլանավորման ու կազմակերպման գործընթացներում, այդուհանդերձ բուհի ռազմավարական պլանավորման, զարգացման ուղղությունների ու տրամաբանության սահմանման հարցում արտաքին շահակիցների ոչ բավարար ու ոչ արդյունավետ ներգրավվածության մասին խոսում են հետևյալ փաստերը.

- բուհը կայուն ու կանոնավոր հետադարձ կապ չի ստանում իր շրջանավարտներից,
- գործատուների հետ հանդիպումները կրում են հատվածային ու տարերային բնույթ,
- կառավարման խորհրդի նիստերը տեղի են ունենում, որպես կանոն, տարեկան ընդամենը մեկ անգամ,
- բացակայում են ծնողների կարծիքի ու կարիքների ուսումնասիրության մեխանիզմները:

Փորձագիտական այցի ժամանակ ևս բուհի ռազմավարական ծրագրի մշակման գործում արտաքին շահակիցների գործուն մասնակցության մասին հիմնավոր փաստեր չներկայացվեցին: Ներքին շահակիցների կարիքների բացահայտումը հիմնականում տեղի է ունենում ինչպես աշխատանքային կարգով՝ ամենօրյա շփումների ընթացքում, այնպես էլ կառավարման մարմինների նիստերի (ամբիոնների նիստեր, ֆակուլտետային խորհուրդների նիստեր, գիտխորհրդի նիստեր և այլն) միջոցով: Այդուհանդերձ, ներքին շահակիցների ամբողջական սպեկտրի կարիքների խորքային բացահայտման մեխանիզմներ (դասախոսների և այլ աշխատակիցների հարցումներ, խորին հարցազրույցներ, ֆոկուս խմբեր) գրեթե չեն կիրառվում՝ ռազմավարական պլանավորման հիմքում դնելու համար: Եթե ինքնավերլուծությունը և ռազմավարական ծրագիրը տեսանելիորեն ցույց են տալիս, թե ինչպես են ներքին շահակիցների կարիքներն արտացոլված բուհի երկարաժամկետ ռազմավարական պլանավորման մեջ, ապա ո՛չ ՌԾ-ն, ո՛չ էլ ինքնավերլուծությունը ցույց չեն տալիս, թե ինչպես ու որքանով են պետական առաջնահերթություններն արտացոլված բուհի զարգացման ռազմավարական ծրագրում: Ինքնավերլուծության մեջ այս առնչությամբ թեև նշվում է, որ պատճառը Արցախի հանրապետության պետական առաջնահերթությունների կամ զարգացման ուղղությունների վերաբերյալ ծրագրային փաստաթղթերի բացակայությունն է, այդուհանդերձ փաստ է, որ բուհը կարող էր այս հարցում հաշվի առնել ՀՀ պետական առաջնահերթությունները, նկատի ունենալով վերջինիս ԱՀ-ի ինտեգրացվածության բարձր աստիճանը:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Արցախի պետական համալսարանում առկա է ներքնից վերև հաշվետվողականության մշակույթ, ինչը կարևորվում է բուհի առաքելության ու նպատակների իրականացման աստիճանը գնահատելու տեսանկյունից: Բուհում յուրաքանչյուր տարեվերջի ամբիոնները հաշվետվություն են ներկայացնում ֆակուլտետային խորհուրդներին, ֆակուլտետային խորհուրդները, բուհի կառուցվածքային տարբեր ստորաբաժանումներ էլ հաշվետվություններ են ներկայացնում գիտական խորհրդին, իսկ ռեկտորը՝ կառավարման խորհրդին: Հատկանշական է, որ կառավարման խորհրդի նիստերի օրակարգում, բուհի զարգացման ռազմավարական ծրագրի ընդունումից հետո, մշտապես դրվում է ռազմավարական ծրագրի կատարողականի հարցը:

Պետք է նկատել, սակայն, որ ամենամյա հաշվետվությունները թեև պարունակում են նախորդող ուստարում համալսարանի գործունեության վերաբերյալ ամբողջական տվյալներ, այդուհանդերձ դրանց կառուցվածքն ու բովանդակությունն այնպիսին են, որ հնարավոր չէ գնահատել զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված գործողությունների կատարողականը: Այսպես, ռազմավարական ծրագրում նկարագրված են խնդիրներ, դրանց լուծմանը տանող գործողություններ՝ հստակ ժամկետներով (հաճախ՝ որպես շարունակական գործընթաց) ու պատասխանատուներով, ինչպես նաև խնդիրների լուծման վերջնարդյունքային ցուցիչներ ու գործողությունների արդյունքի գնահատման ցուցիչներ: Հաշվետվություններում, սակայն, բացակայում է շարադրանք առ այն, թե ՌԾ-ով սահմանված այսինչ գործողությունները նախատեսված ժամկետում որքանո՞վ են կատարվել, առկա՞ են սահմանված ցուցիչների համապատասխան կատարողականները, թե՞ ոչ: Ավելին՝ հաշվետվությունները զուտ քանակական տվյալներ են իրենցից ներկայացնում, նկարագրողական են և չունեն վերլուծական բաղադրիչ. վերլուծված չեն, թե որքանո՞վ է հաջողվել լուծել այս կամ այն խնդիրը, եթե չի լուծվել, ի՞նչ հանգամանքներ են խոչընդոտել և այլն: Փոխարենը հաշվետվությունները ներկայացվում են զուտ ըստ պատասխանատու անձանց (օրինակ՝ պրոռեկտորներ) և ըստ կառուցվածքային ստորաբաժանումների (ֆակուլտետներ/ամբիոններ, վարչություններ):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱրՊՀ-ն առաջին անգամ է իրականացնում զարգացման ռազմավարական ծրագիր, պետք է նկատել, որ այս ուղղությամբ ՊԻԳԲ շրջափուլը բուհում դեռևս փակված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԱրՊՀ-ն իր պատմության մեջ առաջին անգամ մշակել և իրականացնում է զարգացման ռազմավարական ծրագիր, որում վերհանված են բուհի առաքելությունն ու տեսլականը, նպատակներն ու խնդիրները, դրանց լուծմանը տանող գործողությունները՝ իրենց պատասխանատուներով, ժամկետներով ու արդյունքի գնահատման ցուցիչներով: Այս հանգամանքը միանշանակ դրական ազդեցություն ունի բուհի զարգացումը պլանավորված ու հաշվարկված կերպով առաջ տանելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ, բուհի առաքելության, տեսլականի, նպատակների ու խնդիրների՝ բուհի ներքին ու արտաքին շահակիցների շրջանում ոչ բավարար տարածվածությունն ու յուրացվածությունը, ռազմավարական ծրագիրը բուհի բոլոր ստորաբաժանումներում դեռևս սեղանի փաստաթուղթ դարձած չլինելու հանգամանքը դանդաղեցնում է դրանում սահմանված

հավակնոտ տեսլականի ու նպատակների իրականացումը։ Ավելին՝ հաշվի առնելով Արցախի ռազմաքաղաքական, տնտեսական իրադրության առանձնահատկություններով պայմանավորված վտանգներն ու ռիսկերը՝ բուհին անհրաժեշտ է նաև ռիսկերի կառավարման պլան, որով հնարավոր կլինի առաջադրված նպատակներին հասնել՝ տարբեր ռիսկերից ածանցվող սցենարների դիտարկմամբ։

Հարկ է նաև նշել, որ երկրամասի զարգացման հնարավորությունների, ուղղությունների համակարգված կերպով վերհանված ու վերլուծված չլինելու հանգամանքը հնարավորություն չի տալիս ԱրՊՀ-ին՝ իր առաքելության որոշ բաղադրիչներ սահմանել հստակ ու տեսանելի նպատակադրումներով, որով նաև կշեշտվեր բուհի պրոֆիլային առանձնահատկությունը (օրինակ՝ իր կրթական ծրագրերում հնարավոր է զարգացնել այն գիծը, որ այդ կրթական ծրագրերն ավարտած և դպրոցներում դասավանդող մանկավարժները պատրաստեն արդեն իսկ աշխատաշուկա մուտք գործելու պատրաստ դպրոցի շրջանավարտներ)։

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ բուհի առաջին երկարաժամկետ ռազմավարական պլանավորմանը մասնակից են եղել բուհի առավել կարողունակ ու մոտիվացված դասախոսները, վարչական աշխատողներն ու ուսանողները, ովքեր մասնակցել են նպատակների, խնդիրների ու գործողությունների սահմանմանը՝ իրենց պատկերացրած խնդիրների ու հնարավորությունների սահմաններում, այլ կերպ ասած՝ կոգնիտիվ միջավայրում։ Այդուհանդերձ, բուհի ներքին շահակիցների ամբողջական սպեկտրի խորքային կարիքները վերհանելու մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործուն ու կանոնավոր մեխանիզմների բացակայությունը վտանգում է առավել իրատեսական, իրականությանը մոտ ու օբյեկտիվ կարիքներին համապատասխան նպատակադրումներ սահմանել և ձեռնամուխ լինել դրանց իրականացմանը։

Բուհում վարից վեր հաշվետվողականության գոյության, հաշվետվությունների առանձին հատվածներ ռազմավարական նպատակադրումներին (ուսումնական գործընթաց, հետազոտություն) զուգորդելու հանգամանքը դրական համարելով հանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվությունների ոչ վերլուծական բնույթը, դրանք ըստ ռազմավարական պլանի խնդիրների, գործողությունների վերջնարդյունքների ու գնահատման ցուցիչների չներկայացնելը, ինքնաքննադատության բացակայությունը հնարավորություն չեն տալիս բուհին՝ լիարժեք վերհանելու իր առջև դրած խնդիրների լուծված լինելու աստիճանը, առկա խոչընդոտները, որպեսզի նաև հնարավոր լինի իրականացնել բարելավման միջոցառումներ։ Այլ կերպ ասած՝ ռազմավարական պլանավորման ու իրականացման գործընթացների որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի կարևոր մասերից մեկը՝ գնահատումը, հաշվետվությունների վերոնշյալ էական թերության պատճառով լիարժեք տեղի չի ունենում։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ռազմավարական կառավարումը վերջերս է ներդվել ԱրՊՀ-ում, բուհի պատմության մեջ առաջին ՌԾ-ն է մշակվել, որտեղ ներկայացված է բուհի տեսլականն ու առաքելությունը, նպատակն ու խնդիրները, մշակվել և իրագործվում է ՌԾ իրականացման ժամանակացույց՝ ժամկետներով, պատասխանատուներով ու արդյունքի գնահատման ցուցիչներով, վերջին տարիների ընթացքում ռազմավարական կառավարման որոշ տարրեր են ներդրվել ֆակուլտետների և ամբիոնների մակարդակում (զարգացման ծրագրեր), ՌԾ-ն քննարկվել է բուհի արտաքին և, ավելի շատ, ներքին շահակիցների հետ,

ներկա իրավիճակից ելնելով բուհը նախատեսում է կատարել որոշակի բարելավումներ ՌԾ-ում, խնդիրներն ու նպատակները հիմնականում համապատասխան են բուհի վարած քաղաքականությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱրՊՀ-ն բավարարում է առաջին չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը բուհի ինստիտուցիոնալ կարողությունները Չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

Խորհրդատվություններ.

- Հստակեցնել արտաքին ու ներքին շահակիցների՝ ԱրՊՀ-ի ՌԾ նպատակների սահմանման ու իրագործման գործընթացներում մասնակցության կամ նրանց կարիքների արտացոլման մեխանիզմները:
- Բարելավել ռազմավարական նպատակների իրագործման վերաբերյալ հաշվետվողականությունը և ցուցիչները՝ դարձնելով դրանք վերլուծելի, չափելի ու իրատեսական:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան. և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Արցախի պետական համալսարանի կառավարումն իրականացվում է կառավարման կոլեգիալ և միանձնյա ձևերի զուգակցմամբ: ԱրՊՀ-ի բարձրագույն կառավարման կոլեգիալ մարմիններն են ԱրՊՀ խորհուրդը և գիտական խորհուրդը: Գործադիր մարմինն է ռեկտորը: Բուհի կառավարման մարմինների լիազորությունները սահմանված են Արցախի օրենսդրությամբ, ԱրՊՀ-ի կանոնադրությամբ, նրանց գործունեությունը կարգավորվում է համապատասխան կանոնակարգերով: Միջին օղակներում կառավարման կոլեգիալ մարմիններ են ֆակուլտետային խորհուրդները, միանձնյա՝ դեկաններն ու ամբիոնի վարիչները, ինչպես նաև վարչական ստորաբաժանումների ղեկավարները:

Համաձայն ԱրՊՀ զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագրի՝ համալսարանի կառավարման համակարգի բարելավումը, արդյունավետության բարձրացումը, թափանցիկության մեծացումը սահմանվել է որպես բուհի գերակա ռազմավարական նպատակ, որի իրականացման համար բուհը խնդիր է դրել կատարելագործել համալսարանի կազմակերպական կառուցվածքը, համապատասխանեցնել ակադեմիական, մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարումը բուհի ռազմավարական նպատակների իրագործմանը:

Բուհը մշակել և ընդունել է գիտական խորհրդի և ռեկտորատի կանոնակարգերը, ամբիոնի գործունեության կարգը, ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը, էթիկայի կանոնագիրքը, ռեկտորի, ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգերը, որոնցով Արցախի պետական համալսարանն ապահովում է կառավարման համակարգի գործառնման ինստիտուցիոնալ-նորմատիվ հենքը:

2019թ.-ից սկսած, երբ մեկնարկել է բուհի զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագիրը, Արցախի պետական համալսարանում տեղի են ունեցել կառուցվածքային-կազմակերպական մի շարք բարեփոխումներ. ստեղծվել է բուհի որակի ապահովման կենտրոնը, ուսումնական գործընթացի վերահսկման բաժինը, գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժինը, ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժինը, իրավաբանական կլինիկան, հոգեբանական կենտրոնը և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշված կառուցվածքային-կազմակերպական փոփոխությունները թեև արժանացել են բուհի ղեկավարության և կառավարման խորհրդի գոհունակությանը, այդուհանդերձ բուհը դեռևս չունի կատարված փոփոխությունների արդյունավետության և, հատկապես, ԱրՊՀ ռազմավարական նպատակներին դրանց համապատասխանության գնահատմանը միտված համալիր վերլուծություն: Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ բուհն ինքը գիտակցում է այս հանգամանքը՝ կառավարման մարմինների գործունեության գնահատման կառուցակարգերի անկատարությունը համարելով թույլ կողմ:

Ինքնավերլուծության, ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և, հատկապես, այցի արդյունքներով փորձագիտական խումբը, կառուցվածքային-կազմակերպական նշված փոփոխությունների առնչությամբ, վերհանել է մի քանի դրույթներ, մասնավորապես.

- Վերջին շրջանում ԱրՊՀ-ն կարևորել է կրթական ծրագրերի որակի ապահովումը՝ այդ գործառույթները վերապահելով առանձին ստորաբաժանման (Որակի ապահովման կենտրոն), որի աշխատակիցները վերապատրաստման որոշ դասընթացներ են անցել ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում: Միևնույն ժամանակ, որակի ապահովման գործառույթները հիմնականում վերաբերում են կրթական ծրագրերին, կրթական գործունեությանը և չեն վերհանում վարչական գործընթացների, վարչական աշխատակազմի գործունեության հետ կապված շատ խնդիրներ:
- ԱրՊՀ-ի վարչական որոշ պատասխանատուների գործունեության մեջ և վարչական որոշ ստորաբաժանումներում առկա են գործառութային-աշխատանքային անհավասարակշռություններ ու խնդիրներ: Գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի համակարգման ներքո միայն մեկ վարչական ստորաբաժանում է՝ գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժինը: Վերջինիս գործառույթների բնույթը մինչ այժմ գերազանցապես վարչա-բյուրոկրատական բնույթի է. բաժինը հիմնականում զբաղվում է իր գործառութային ոլորտի գործընթացների գրանցմամբ, փաստաթղթավորմամբ, դեռևս չի թիրախավորում զարգացման միտված գործունեություն (դրամաշնորհների ներգրավում, կապերի ստեղծում, վարում և զարգացում և այլն):
- Մի կողմից ընդունելով, որ ԱրՊՀ-ն օբյեկտիվորեն խնդիր ունի լավագույն մարդկային ռեսուրսներ ներգրավելու հարցում (հատկապես վերջին պատերազմից հետո ավելի է սրվել մարդկային ռեսուրսների սահմանափակության հարցը, քանի որ ՀՀ-ի հետ շփումը դժվարացել է), մյուս կողմից ակնառու է, որ բուհի կադրերի բաժինը զբաղվում է սոսկ փաստաթղթավորման գործընթացներով: Բաժնի առջև դեռևս չի դրվել մշակելու և իրագործելու մարդկային ռեսուրսների ներգրավման, պահպանման,

առաջխաղացման և մոտիվացման համալիր ու համակարգված քաղաքականություն, հոգ չի տարվել նշված գործառույթներն ապահովող աշխատակիցների վերապատրաստման կամ նոր կադրերի ներգրավման մասին։

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով տրված փաստաթղթերն ու շփվելով բուհի ղեկավարության, կառավարման խորհրդի, ներքին ու արտաքին շահակիցների հետ, փաստում է նաև ԱրՊՀ-ի կառավարման համակարգի հետ կապված որոշ իրողություններ, մասնավորապես.

- ԱրՊՀ-ի վարչական աշխատակիցները, պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները բավարարված են բուհի ղեկավարության հետ շփումներից, խնդիրներին լուծում տալու հարցում բուհի ղեկավարության մոտեցումներից, բուհում առկա աշխատանքային և միջանձնային հարաբերություններից։ Բուհի ղեկավարությունը, առավել ևս ռեկտորը, բաց ու համագործակցային են ներքին ու արտաքին շահակիցների հետ շփումներում, ինչի շնորհիվ առկա խնդիրները դյուրությամբ են վերհանվում։
- Կորոնավիրուսի և պատերազմի հետևանքով ստեղծված ճգնաժամային իրավիճակները պատշաճ կառավարվել են։ Մասնավորապես, կորոնավիրուսի համաճարակի պայմաններում ԱրՊՀ-ն կարողացել է արագ անցնել դասընթացների հեռավար կազմակերպմանը՝ ներդնելով «Google Classroom» հարթակը, իսկ ռազմական գործողությունների դադարից կարճ ժամանակ անց կարողացել է լուծել անօթևան մնացած շատ ուսանողների (հիմնականում Հադրութի և Շուշիի տարածաշրջանների բնակավայրերի, որոնք մնացել են թշնամու վերահսկողության ներքո) համար կացարանների հարցը և վերսկսել ուսումնական բնականոն գործընթացը՝ առկա ձևով։
- ԱրՊՀ-ում կան կրթական ծրագրերի, հետազոտության և այլ գործընթացների իրականացման հաջողված փորձեր։ Մասնավորապես, հայագիտական հետազոտությունների ուղղությունը (արցախյան բանահյուսություն, բարբառագիտություն, բնակավայրերի պատմություն և այլն) և համապատասխան կրթական ծրագիրը գտնվում են առաջանցիկ զարգացման վիճակում։ Միևնույն ժամանակ նկատելի էր հորիզոնական կապերի թուլություն ու լավագույն փորձի փոխանակման մեխանիզմների ոչ հստակություն։
- ԱրՊՀ-ն հավաքագրում է տվյալներ իր գործունեության տարբեր կողմերի վերաբերյալ։ Միևնույն ժամանակ, տեսանելի չէ, որ որոշումների կայացումը հիմվում է տվյալների վրա։
- Չնայած այն հանգամանքին, որ հետազոտության զարգացումը ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում հռչակված է որպես ռազմավարական առանձին նպատակ և գերակա ուղղություն, թեև առկա է գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի հաստիքը, այդուհանդերձ ո՛չ արդյունքի, ո՛չ էլ գործընթացի առումներով տեսանելի չէ բուհում հետազոտության մենեջմենթն ու համակարգումը։
- ԱրՊՀ-ի խորհրդի արտաքին անդամների մեծ մասը բուհի հետ ունեն առանձին կապեր . նրանցից ոմանք դասավանդում են բուհում, ոմանք էլ՝ աշխատանքային հարաբերությունների բերումով առնչվում են բուհի բարձրագույն և միջին օղակի կառավարման պատասխանատուների հետ։ Միևնույն ժամանակ խորհուրդը կանոնավոր հանդիպումներ և քննարկումներ չի իրականացնում, խորհրդի նիստերը գերազանցապես ֆորմալ-ընթացակարգային բնույթի են, անցկացվում են

հիմնականում տարին մեկ անգամ՝ խորհրդի լիազորություններից բխող ֆորմալ գործողություններ կատարելու համար (զարգացման ռազմավարական ծրագրի տարեկան կատարողականի հաստատում, բյուջեի և նախորդ տարվա կատարողականի հաստատում, կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատում և այլն):

2.2 ՄՈՒՀ_ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Համաձայն Արցախի օրենսդրության, Արցախի պետական համալսարանի կանոնադրության և նորմատիվ այլ ակտերի՝ բուհի դասախոսներին ու ուսանողներին հնարավորություն տրվում է մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը: Բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի հետ մեկտեղ ԱրՊՀ-ի կանոնադրությունը, գիտական խորհրդի և ռեկտորատի կանոնակարգերը, ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները հանդիսանում են որոշումների կայացմանը բուհի ներքին շահակիցների մասնակցությունն ապահովող իրավական հենքը:

Համաձայն Բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգի և ԱրՊՀ-ի կանոնադրության, բուհի կառավարման խորհրդի 28 անդամների ¼-ը բուհի պրոֆեսորադասախոսական կազմի, ևս ¼-ը՝ ուսանողության ներկայացուցիչներն են: Բուհի պրոֆեսորադասախոսական կազմը ներկայացված է նաև բուհի կոլեգիալ կառավարման մյուս մարմնում՝ գիտական խորհրդում, որին ի պաշտոնե անդամակցում են նաև ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահները: Ուսանողները ներկայացված են նաև բուհի գիտական խորհրդին կից գործող հանձնաժողովներում: Դասախոսները և ուսանողները ներկայացված են նաև ֆակուլտետային կոլեգիալ կառավարման մարմիններում՝ մեծ խորհուրդներում և խորհուրդներում: Այս ամենով ապահովվում է ԱրՊՀ-ի ներքին շահակիցների մասնակցությունը իրենց վերաբերվող բոլոր որոշումների ընդունմանը, քանի որ համալսարանի կոլեգիալ կառավարման բարձրագույն և միջին օղակներում կայացվող գրեթե բոլոր որոշումներն անմիջաբար առնչվում են թե՛ դասախոսներին, թե՛ ուսանողներին: Պետք է նկատել, որ բուհի կառավարման խորհուրդն այն մարմինն է, որտեղ դասախոսների և ուսանողների մասնակցությունն իրենց վերաբերող որոշումների ընդունմանը գերազանցապես ֆորմալ բնույթ է կրում, քանի որ, ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, վերջինիս նիստերը, որպես կանոն, տարին մեկ անգամ են լինում և այնքանով, որքանով հոգաբարձուների խորհուրդը վերևից ներքև բուհի առջև չի դնում ռազմավարական, ուղենիշային բնույթի խնդիրներ, դրանով իսկ պայմանավորված՝ այն չի դառնում արդյունավետ, մասնակցային որոշումների կայացման հարթակ:

Իրենց առնչվող որոշումների կայացմանը ԱրՊՀ-ի դասախոսների մասնակցության հիմնական ձևաչափն ամբիոնի նիստերն են, որտեղ նրանք հնարավորություն են ունենում կարծիք հայտնել բուհում շրջանառվող նախագծերի, խոսույթի վերաբերյալ, հանդես գալ դիտարկումներով և առաջարկություններով: Դասախոսները անմիջաբար կամ միջնորդավորված կերպով հնարավորություն ունեն բարձրացնել իրենց հուզող հարցերը ֆակուլտետային խորհուրդներում: Ֆակուլտետային մեծ խորհուրդների գործառույթներն ավելի սահմանափակ են, դրանք որպես կանոն վերաբերում են դեկանի ընտրությանը, ամենամյա հաշվետվությանն ու ամբիոնների հաշվետվություններին: Փաստաթղթերի ուսումնասիրությունն ու փորձագիտական այցը ցույց տվեցին, որ դասախոսների

մասնակցությունը ֆակուլտետային մեծ խորհուրդների նիստերին կրկին ֆորմալ բնույթ է կրում, քանի որ մեծ խորհուրդներում քննարկվող օրակարգային հարցերի ժամանակ ակտիվ քննարկումներ տեղի չեն ունենում: Փոխարենը դասախոսներն ակտիվ են ֆակուլտետային խորհուրդներում, որոնց նիստերի օրակարգերում առավել հաճախ ակադեմիական բնույթի հարցեր են, և դասխոսների մասնակցությունը որոշումների կայացմանը հիմնականում այնպիսի հարցերի շուրջ է, որոնք վերաբերում են դասավանդմանն ու ուսումնառությանը:

Արցախի պետական համալսարանը թեև կարևորում է դասախոսների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում, ինչն արտացոլվել է, մասնավորապես բուհի զարգացման ռազմավարական ծրագրում համապատասխան գործողություն արձանագրելով (խնդիր 4.4, գործողություն 6՝ խրախուսել դասախոսական կազմի մասնակցությունը համալսարանի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում), այդուհանդերձ դեռևս չունի մեխանիզմ՝ դասախոսների՝ բուհի կառավարմանը և որոշումների կայացմանը մասնակցությունը գնահատելու համար. համապատասխան վերլուծությունները բացակայում են:

ԱրՊՀ-ի դասախոսների և ուսանողների շրջանում անցկացվող հարցումները, որոնք հանդիսանում են կարիքների գնահատման ձև և դրսևորում, նույնպես կարելի է որոշակիորեն համարել մասնակցություն բուհի որոշումների կայացմանը: Այդուհանդերձ, այս առումով խնդրահարույց է այն, որ հարցումների արդյունքները թեև ամփոփվում են, սակայն չեն վերլուծվում ու չեն վերիֆիկացվում հետադարձ կապի այլ միջոցներով, ինչպիսիք ֆոկուս խմբերն են ու խորը հարցազրույցները:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ԱրՊՀ-ում երկարաժամկետ պլանավորումն իրականացվում է բուհի հնգամյա ռազմավարական ծրագրով (տվյալ դեպքում՝ ԱրՊՀ-ի զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագիր), որը, պետք է նշել, առաջինն է բուհի պատմության մեջ: Երկարաժամկետ պլանավորման դրսևորում է հանդիսանում ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագիրը, որտեղ հաջողությամբ տեղայնացված են բուհի ՌԾ-ի դրույթներից բխող պահանջները, ինչպես նաև Հայոց լեզվի զարգացման ռազմավարական ծրագիրը:

Արցախի պետական համալսարանում կարճաժամկետ ու միջնաժամկետ պլանավորումները, որպես ռազմավարական կառավարման բաղադրիչ, կարևորված չեն բուհի զարգացման ռազմավարական ծրագրում: Ռամավարական ծրագրում կառավարման արդյունավետության բարձրացմանն առնչվող նպատակադրման խնդիրների և գործողությունների ցուցակում միջնաժամկետ ու կարճաժամկետ պլանավորումներ իրականացնելու հանձնառություն դրված չէ: Մինչդեռ երկարաժամկետ պլանավորման հանձնառություն արձանագրված է բուհի ռազմավարական ծրագրում, որը կապված է կրթական ստորաբաժանումների գործունեությունը բուհի ՌԾ-ին համահունչ պլանավորելու հետ:

Արցախի պետական համալսարանի գործունեությունը, ինչպես նաև առանձին-առանձին բոլոր ստորաբաժանումների գործունեությունը ենթարկվում է ամենամյա կարճաժամկետ պլանավորման: Սակայն հատկանշական է, որ նման պլանավորումն իրենից ներկայացնում է ոչ թե ռազմավարական, այլ օպերացիոնալ կառավարման գործընթաց: ԱրՊՀ-

ի և նրա ստորաբաժանումների աշխատանքային տարեկան պլանները փոխկապակցված չեն բուհի երկարաժամկետ ռազմավարական պլանի հետ, իսկ միջնաժամկետ պլանավորում, ինչպես առհասարակ, այնպես էլ ստորաբաժանումների մակարդակում, որպես այդպիսին, չի իրականացվում: Կարճաժամկետ պլանավորումը չի հանդիսանում բուհի զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների բացվածք՝ համալսարանի մասշտաբով: Ստորաբաժանումների տարեկան պլաններում ներկայացված գործողությունները ոչ այնքան ռազմավարական պլանի դրույթներից բխող, որքան օպերատիվ պլան, գործընթացի կազմակերպման ժամանակացույց հիշեցնող գործողություններ են: Նշված խնդրի լուծման առնչությամբ կարիքի հետազոտում չի արվել և չեն նախանշվել խնդրի լուծման քայլերը:

Ռազմավարական ծրագրի խնդիրների լուծումը և գործողությունների կատարումը հստակեցնելու և չափելի դարձնելու նպատակով ԱրՊՀ-ը մշակել է ռազմավարական ծրագրի ժամանակացույց պլան, որտեղ յուրաքանչյուր խնդրի լուծումը չափելի դարձնելու համար սահմանվել են վերջնարդյունքներ և դրանց գնահատման ցուցիչներ: Խնդիրներից բխող գործողությունների արդյունքի գնահատման ցուցիչներ ևս զետեղված են ժամանակացույց-պլանում:

Արցախի պետական համալսարանում երկարաժամկետ պլանավորումների մշտադիտարկման մեխանիզմները ամբիոնների, ֆակուլտետային խորհուրդների և մեծ խորհուրդների, վարչական ստորաբաժանումների, ռեկտորի հաշվետվություններն են, որոնք, սակայն, վերլուծական բնույթի չեն, չեն բխում ռազմավարական ծրագրում ամրագրված դրույթներից կամ ռազմավարական ծրագրի ժամանակացույց պլանում սահմանված արդյունքի ցուցիչների ձեռքբերվածության վերլուծությունից:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Համաձայն ինքնավերլուծության՝ իր գործունեության պլանավորման մեջ Արցախի պետական համալսարանը կարևորում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը: Դա, առաջին հերթին, արտահայտվում է պլանավորվող ընդունելության համար պոտենցիալ դիմորդների թվի վերհանմամբ, պետության կողմից բուհին, կամ, առհասարակ, կրթական հաստատություններին տրամադրվելիք ֆինանսավորման չափերի հավաստագրմամբ: Այն հանգամանքը, որ իր զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագրում բուհը նպատակ է դրել կրթական ծրագրերի բովանդակությունը համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին, վկայում է բուհի՝ արտաքին միջավայրից ազդակներ ստանալուն միտված գործողություններ պլանավորելու մասին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նման ազդակներ բուհը ստանում է մի քանի ձևով.

1. Բուհում դասավանդում են զգալի թվով արտաքին համատեղող պրակտիկ մասնագետներ, հիմնականում հանրային հատվածից (պետական կառավարման, տարածքային կառավարման մարմիններ, դատարաններ և այլն), տնտեսությունից (հիմնականում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և ֆինանսաբանկային ոլորտներ), ովքեր իրենց ամենօրյա գործունեության մեջ առնչվում են ոլորտի փոփոխություններին կամ դրանց միտումներին և ինչ-որ կերպ այդ ամենն արտացոլում դասընթացների մեջ կամ ներկայացնում ամբիոնների նիստերին, ինչն էլ անդրադառնում է կրթական ծրագրերի բովանդակությունների բարելավումների վրա:

2. Բուհում երբեմն կազմակերպվում են հանդիպումներ գործատուների հետ, որի ժամանակ վերջիններս ներկայացնում են աշխատաշուկայի միտումները, ինչն էլ արտացոլվում է կրթական ծրագրերի և այլ գործընթացների պլանավորումների մեջ։
3. Բուհի ղեկավարությունը գրեթե ամենօրյա կապի մեջ է Արցախի պետական հաստատությունների հետ, ինչը հնարավորություն է տալիս տեղեկատվություն ստանալ բուհի գործունեությանն այս կամ այն կերպ առնչվող, տեղի ունեցող կամ սպասվող գործընթացների մասին։
4. Որոշ ազդակներ բուհն ստանում է ուսանողների փորձուսուցման արդյունքների դիտարկումից։

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ բուհի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների նման դիտարկումները տարերային, ոչ համակարգված բնույթ են կրում. դրանք, որպես կանոն, չեն փաստաթղթավորվում և չեն վերլուծվում։ Բացակայում են վերլուծություններ կամ տեղեկություններ առ այն, թե բուհը ուսումնասիրե՞լ է պետական այն առաջնահերթությունները (որոնք, օրինակ, ամրագրված են կառավարության ծրագրերում, կառավարական կամ գերատեսչական հայեցակարգերում և այլն), որոնք ինչ-որ չափով համահունչ են իր առաքելությանն ու նպատակներին, կրթական պրոֆիլին։ Իր գործունեության վերաբերյալ հավաստի տվյալներ ստանալու համար մարքեթինգային ու տվյալագիտական գործառույթ ԱրՊՀ-ում սահմանված չէ, որպեսզի ապահովվի ճիշտ որոշումներ կայացնելու հենքը։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բուհի շրջանավարտների զգալի մասի աշխատաշուկան միջնակարգ դպրոցն է, բայցև դպրոցների զարգացման հետ կապված վիճակը ստատիկ է, հնարավոր չի լինում ստանալ ազդակներ այս ոլորտից, բուհի շատ կրթական ծրագրեր այդպիսով մշակվում և վերամշակվում են առանց միջնակարգ կրթության համակարգի փոփոխությունների վերաբերյալ որակական տվյալների։ Բայց, օրինակ, այն կրթական ծրագրերը, որոնք առնչվում են ֆինանսաբանկային ոլորտին կամ տեղեկատվական տեխնոլոգիաներին, այս առումով շահեկան վիճակում են գտնվում, քանի որ դյուրին է լինում այս ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների ազդակների վերհանումը, ինչն էլ դրականորեն ազդում է տվյալ ծրագրերի դինամիկայի վրա։ ԱրՊՀ-ը սակավ է իրականացնում խորին հարցազրույցներ, ֆոկուս խմբեր կամ պատվիրված հետազոտություններ աշխատաշուկայի միտումները վերհանելու գործում։

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում)։

Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլով իրականացնելու վերաբերյալ խոսույթը Արցախի պետական համալսարանում սկզբնավորման փուլում է։ Բուհը ստեղծել է որակի ապահովման ձեռնարկ, ինչը կարևոր է բուհի բարձրագույն և միջին օղակների ղեկավարության համար՝ ՊԻԳԲ շրջափուլ կիրառելու անհրաժեշտության գիտակցման տեսանկյունից։ ԱրՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի ժամանակացույց-պլանում խնդիրների լուծումը և գործողությունների կատարումը չափելու համար սահմանված են արդյունքի գնահատման ցուցիչներ, որոնք կարևոր հիմք են պլանավորված գործողությունների ու գործընթացների կատարումը գնահատելու առումով։ Այն հանգամանքը, որ առաջին անգամ է բուհում մշակվում ռազմավարական ծրագիր, որ նոր է հիմնվում որակի ապահովման ենթակառուցվածք, հասկանալի է դառնում, ցույց է տալիս, որ որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի սկզբունքի կիրառումը Արցախի պետական համալսարանում գտնվում է ներդրման

փուլում: Ինքնավերլուծությունը ևս այս պահի դրությամբ խնդրահարույց է համարում շրջափուլի երրորդ՝ գնահատում բաղադրիչի ապահովման հանգամանքը՝ պատասխանատուների պարտականությունների հետ կապված որոշ անորոշությունների առումով: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ պլանավորված գործողությունների իրականացման վերաբերյալ հաշվետվությունների հիմնականում ոչ վերլուծական բնույթը ևս դժվարացնում է իրականացնել գործընթացների գնահատումը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռազմավարական ծրագրով պլանավորված գործընթացները գտնվում են իրականացման փուլում (որոշների իրականացումը դեռևս չի մեկնարկել), և որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքները, ոչ ամբողջությամբ, դեռևս միայն կրթական ծրագրերի իրականացման գործընթացներում են կիրառվում:

Արցախի պետական համալսարանում 2020 թվականի համար պլանավորված որոշ կարևոր գործընթացներ դանդաղել են՝ կապված Covid19 համավարակով:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Համաձայն ինքնավերլուծության, փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցից ստացած տեղեկությունների ու տպավորությունների, ԱրՊՀ-ի կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն իրականացվում է ուսանողական և շրջանավարտների հարցումների, նրանց, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի և գործատուների հետ տարվող քննարկումների, հանդիպումների, սեմինարների ու աշխատաժողովների միջոցով, ինչպես նաև օգտագործելով համալսարանի կայքէջի հետադարձ կապի հատվածը, որը, ի դեպ, սկսել է կիրառվել ԱրՊՀ-ի ինքնավերլուծությունը գրելուց հետո:

ԱրՊՀ-ում մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմներ են ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման հարցումները, ինչպես նաև բուհում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշված մեխանիզմները երբեք չեն գնահատվել այն տեսանկյունից, թե որքանով արդյունավետ են, չնայած դրանց փոխանցած տվյալները դրվել են որոշումների կայացման և գործընթացների լավարկման հիմքերում: Պարզ դարձավ նաև, որ հարցումների արդյունքների վերլուծությունները, դրանց հիման վրա կատարվող բարելավումների վերաբերյալ հաշվետվությունները բացակայում են, և որ տվյալների հավաքագրման վերլուծությունները կատարվում են աշխատանքային կարգով և չեն կապակցվում բուհի որդեգրած նպատակներին: Փորձագիտական այցի ժամանակ բուհում առկա էր ընդհանուր համաձայնություն առ այն, որ շրջանավարտների հարցումները՝ որպես մեխանիզմ, այն ձևով, ինչպես անց է կացվել մինչ օրս, ի զորու չեն ապահովել ակնկալվող արդյունավետությունը հավաստի տվյալների փոխանցման տեսանկյունից այն պատճառով, որ հարցումներն անցկացվում են ոչ թե մի քանի տարի առաջ բուհն ավարտած ուսանողների, այլ տվյալ տարի բուհն ավարտող ուսանողների շրջանում. վերջիններս գնահատում են դեռևս համալսարանական իրողությունների համատեքստում, ինչը փոքրացնում է հարցման օբյեկտիվությունը: Մինչդեռ մի քանի տարի առաջվա շրջանավարտները, ովքեր

կպատասխանեին համալսարանական իրողությունների համատեքստից դուրս, առավել հստակ կհասկանային իրենց ստացած կրթության լավ ու վատ կողմերը և առավել օբյեկտիվ պատկեր կապահովեին:

ԱրՊՀ-ում կազմակերպվում են հանդիպումներ և աշխատաժողովներ գործատուների հետ՝ կրթական ծրագրերի բովանդակության ու կառուցվածքի, դրանց վերջնարդյունքների, արդյունավետության և այլնի քննարկման ու հետագա բարելավման համար: Նշել ենք նաև, որ գործընթացը տարերային է. ոչ բոլոր կրթական ծրագրերի առնչությամբ են դրանք կազմակերպվում: Իհարկե, ԱրՊՀ-ի կրթական ծրագրերում լավարկումները վերջին տարիներին նկատելի են, այդուհանդերձ այն հանգամանքը, որ նշված հանդիպումների ու աշխատաժողովների ժամանակ վերհանված խնդիրները, դրանց վերլուծությունն ի մի բերող փաստաթղթերը բացակայում են, հնարավոր չի լինում գնահատել, թե նշված լավարկումները որքանո՞վ են պայմանավորված այդ հանդիպումների ու աշխատաժողովների արդյունքներով:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Արցախի պետական համալսարանի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվությունը հիմնականում ապահովվում է բուհի կայքէջի, ֆեյսբուքյան էջի միջոցով, ինչպես նաև շրջանավարտների, գործատուների և այլ շահակիցների կողմից տեղեկատվությունը բանավոր կերպով փոխանցմամբ: Բուհը ներկայացված է նաև Թվիթեր, Ինստագրամ և Յութուբ սոցիալական ցանցերում: Համալսարանի կայքէջում ներկայացված են բուհի կրթական ծրագրերի մասին որոշ հակիրճ տեղեկություններ (շնորհվող որակավորումը, մասնագիտությունը և դասընթացների ցանկը): Որոշ կարևոր տեղեկություններ, ինչպիսիք են դասընթացների ծրագրերը, կարիերայի հնարավորությունները, դասավանդման և ուսումնառության մեթոդներն ու մոտեցումները և այլն, կայքէջում բացակայում են: Բուհի ֆեյսբուքյան էջում տեղեկատվությունը գերազանցապես վերաբերում է բուհում տեղի ունեցող միջոցառումներին: Կրթական ծրագրերի որակի, շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ նյութեր, շրջանավարտների հաջողության պատմություններ չկան: Բացակայում են նաև կրթական ծրագրերն ավարտած ուսանողների կարիերային, առաջխաղացմանը վերաբերող տեղեկությունները: Բուհի հաշվետվություններում ևս թեև զետեղվում է քանակական բնույթի տեղեկատվություն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին, այդուհանդերձ նման տեղեկատվության գնահատում տեղի չի ունենում: Ինքնավերլուծությունում առկա չեն տվյալներ կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմների մասին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ Արցախի պետական համալսարանի կառավարման բոլոր մարմինների (այդ թվում՝ կառավարման միջին օղակների) դերերն ու գործառույթները, ձևավորման ու լուծարման ընթացակարգերը հստակ սահմանված են՝ ապահովելով բուհի կառավարման համակարգի գործառնման ինստիտուցիոնալ-նորմատիվ հենքը, ինչը հնարավորություն է տալիս բուհի կոլեկտիվին՝ ունենալու կանոնավոր աշխատանքային հարաբերություններ:

Ռազմավարական պլանավորմամբ կառավարումը տեսանելիորեն բարելավել է ԱրՊՀ-ի կառավարման համակարգի գործառնումը՝ բուհը մտցնելով բարեփոխումների որակական նոր

փուլ: Կատարվել են կառուցվածքային-կազմակերպական բնույթի վերափոխումներ՝ բուհի առաքելությանն ու ռազմավարական նպատակներին հնարավորինս համահունչ. կառավարման համակարգում սահմանվել են բուհի միջազգայնացման և որակի ապահովման գործառույթները, ինչը բուհի զարգացումը որոշակի ուղու վրա դնելու հնարավորություն է ստեղծում: Բուհն առավել որոշակի քայլեր է սկսել անել հանրության հանդեպ իր հանձնառությունն ու պատասխանատվությունը դրսևորելու հարցում, ինչի վկայություններից են իրավաբանական կլինիկայի և հոգեբանական կենտրոնի ստեղծումն ու հաջող գործարկումը:

Բուհի ղեկավար կազմի, առանձին վարչական և կրթական ստորաբաժանումների ղեկավարներ մոտիվացված ու հանձնառու են հաստատության կառավարման համակարգը բարեփոխելու, դասախոսների և ուսանողների կարիքները բավարարելու, կրթական ծրագրերը զարգացնելու, տարբեր ուղղություններով բուհի գործունեության ցուցանիշները բարելավելու հարցերում: Բուհում առկա է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, ղեկավարության, աշխատակիցների և ուսանողների հարաբերությունները ջերմ են ու համագործակցային: Բուհի ղեկավար կազմի հանձնառության, ինչպես նաև բուհի ներքին շահակիցների թվակազմի համեմատաբար փոքրության շնորհիվ առաջացող հարցերն օպերատիվ լուծում են ստանում: Վարձատրության ոչ բարձր մակարդակը, մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից մոդելի բացակայությունը, ինչպես նաև որոշ օբյեկտիվ պատճառներ (հեռավորություն, ավելի դժվարացած կապ) դեռևս թույլ չեն տալիս ավելի շատ որակյալ մասնագետներ ներգրավել բուհի դասավանդման ու հետազոտական գործընթացներում:

Միևնույն ժամանակ, վարչական առանձին ստորաբաժանումների և պատասխանատուների գործունեության մեջ առկա գործառութային-աշխատանքային անհավասարակշռություններն ու խնդիրները, ինչի մասին վերը նշվել է, դանդաղեցնում են բուհի զարգացմանն ուղղված պլանավորված գործողությունների կատարումը:

ԱրՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի դերն ու գործառույթը բուհի զարգացման հարցում մինչ այժմ հստակ սահմանված ու որոշակիացված չէ: Խորհրդի աշխատանքների ֆորմալ բնույթը թույլ չի տալիս, որ այդ մարմինն իր հնարավորությունների ողջ ծավալով մասնակցի բուհի զարգացմանը, սահմանի այդ զարգացման ուղղությունները, համապատասխան խնդիրներ դնի բուհի ղեկավարության առջև և գործուն մեխանիզմներով վերահսկի այդ խնդիրների լուծման կատարողականը:

Դրական համարելով բուհի կողմից գործունեության որոշ տվյալների հավաքագրման հանգամանքը, այդուհանդերձ փորձագիտական խումբը գտնում է, որ նախ՝ անկատար են տվյալների հավաքագրման ու վերիֆիկացման մեխանիզմները, երկրորդ՝ որոշումների կայացումն ամբողջապես չի հիմնվում հավաքագրված տվյալների վերլուծության վրա, որոշումները հաճախ կայացվում են տրամաբանության, փորձառության շրջանակներում:
Կառավարման ոլորտի էական խնդիրներից մեկն էլ առնչվում է հետազոտության համակարգմանն ու մենեջմենթին: Հետազոտության խրախուսման քաղաքականությունը, բացառությամբ մեկ-երկու ոլորտներից, որտեղ առկա են ավանդույթներ, որոշակի չէ, հատկացվող միջոցները քիչ են:

ԱրՊՀ դասախոսները և ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը համալսարանի կոլեգիալ կառավարման բոլոր օղակներում: Եթե բուհի գիտական խորհրդում, ֆակուլտետային խորհուրդներում և

ամբիոններում ներքին շահակիցների մասնակցությունն արդյունավետ է, ապա հոգաբարձուների խորհրդում և ֆակուլտետային մեծ խորհուրդներում անհամեմատ նվազ է նրանց մասնակցության արդյունավետությունը՝ վերջիններիս գործունեության ֆորմալ բնույթի պատճառով: Հարցումները բուհի ներքին շահակիցների կարիքների բացահայտման մեխանիզմ համարելով հանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ դրանք կարիքների բացահայտումը ոչ խորապես են իրականացնում: Մասնագիտական խորը հարցազրույցներն ու ֆոկուս խմբերը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների (շրջանավարտներ, գործատուներ, պետական հատված, գործընկեր կառույցներ) շրջանում հնարավորություն կտան մեծացնել որոշումների կայացման տվյալների բազան և ըստ այդմ բարձրացնել որոշումների արդյունավետությունն ու հասցեականությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ բուհն առաջին անգամ կիրառում է երկարաժամկետ ռազմավարական պլանավորում և որ բուհի կրթական առանձին ստորաբաժանումներ բուհի ռազմավարական նպատակները, խնդիրներն ու գործողությունները տեղայնացրել են սեփական պլանավորումներում: Սակայն այն հանգամանքը, որ երկարաժամկետ պլանավորումից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումներ չկան (կարճաժամկետ պլանները ոչ թե ռազմավարական, այլ օպերացիոնալ բնույթի են), իսկ պլանավորված գործողությունների կատարողականը չի դիտարկվում ցուցիչային հենքով մշտադիտարկման-վերլուծական արդյունավետ մեխանիզմներով, որոշակիորեն ստվերում են պլանավորման գործընթացների հավուր պատշաճի իրականացումը:

Դրական համարելով այն հանգամանքը, որ ԱրՊՀ-ը իր գործունեության հետ կապված ազդակներ է ստանում պետական մարմիններից, աշխատաշուկայից, դպրոցներից, փորձագիտական խումբը գտնում է, որ քանի դեռ այս գործընթացները համակարգված կերպով չեն իրականացվում, չեն վերլուծվում, չեն փաստաթղթավորվում, չեն կազմակերպվում մարքետինգային գործիքակազմով, այդ ամենը պատշաճի հենք չի ապահովում արտաքին միջավայրն ընկալելու և համապատասխան որոշումներ կայացնելու առումով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի սկզբունքների շուրջ ԱրՊՀ-ում սկսել է ձևավորվել մասնագիտական խոսույթ: ԱրՊՀ-ի որակի ապահովման ձեռնարկը, որոշ կրթական ծրագրերի իրականացման գործում ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը կարող են դառնալ բուհում կառավարման որակի բարելավման ու որակի մշակույթի ներդրման հենք: Դրան կարող է նպաստել նաև բուհի մի քանի պաշտոնյաների՝ ՈԱԱԿ-ում վերապատրաստված լինելու հանգամանքը: Այդուհանդերձ դեռևս հիմնավորված չէ գիտակցումն առ այն, որ բուհի որակի ապահովման գործառույթները պետք է վերաբերեն ոչ միայն կրթական ծրագրերին, այլև վարչական ստորաբաժանումների կամ պատասխանատուների գործունեությանը, դրանցում առկա խնդիրների վերհանմանը: Գործընթացները ՊԻԳԲ շրջափուլով իրականացնելու մոտեցումը չկարևորվելու պարագայում կարող է վտանգվել ԱրՊՀ-ի սահմանած ռազմավարական նպատակների ձեռքբերումն ու առաքելության հստակ իրացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ Արցախի պետական համալսարանում կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն իրականացվում է կանոնավոր կերպով (ուսանողների և շրջանավարտների հարցումներ, գործատուների հետ հանդիպումներ), ինչը բուհին որոշ հնարավորություններ տալիս է՝ գնահատելու կրթական ծրագրերի և այլ

գործընթացների վերաբերյալ արդյունավետությունը: Սակայն այդ իսկ մեխանիզմների արդյունավետության վերլուծությունների բացակայությունը (ինչպես, օրինակ, այն հանգամանքը, թե որքանո՞վ է արդյունավետ շրջանավարտների հարցումը կազմակերպել տվյալ ուստարում բուհն ավարտող ուսանողների շրջանում), ինչպես նաև այդ մեխանիզմներով վերհանված խնդիրների վերլուծությունների բացակայությունը կամ անհասանելիությունը կարող են կասկածի տակ առնել հավաքագրված տվյալների հիմքով որոշումների կայացման արժանահավատությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱրՊՀ-ն գտնվում է փոփոխությունների մեջ և անցումային ժամանակաշրջանում, ստեղծված բարդ իրավիճակում իրականացվում է բուհի առաքելությունը, կատարվել են դրական փոփոխություններ բուհի կազմակերպական կառուցվածքում, օրինակ հոգեբանական կենտրոնի, ՈԱ կենտրոնի ստեղծում, առկա է էթիկայի կանոնների պահպանման մեխանիզմներ, առկա են երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումներ, որոնք գրված են ըստ ակնկալվող արդյունքների, հիերարխիկ կապերը գործում են արդյունավետ, բուհում միջանձնային հարաբերությունները նպաստում են ՌԾ նպատակների իրականացմանը, բուհի ռեկտորը տիրապետում է բուհում առկա խնդիրներին, հետազոտող է /հայագիտություն/, որը կնպաստի հետազոտական ուղղության զարգացմանը, առկա է բարոյահոգեբանական առողջ միջավայր, ներդրվել են մի շարք նորամուծություններ տարբեր գործընթացների կառավարման համար, օրինակ «Google Classroom» հարթակը, ուսանողներն ու դասախոսները ներգրավված են տարբեր խորհուրդներում, ուսանողների ձայնը լսելի է, ուսանողները հաստատում են, որ իրենց ձայնը լսելի է, ՄԿԾ-ների վերաբերյալ տվյալներ հավաքագրվում են արտաքին և ներքին շահակիցներից, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը բուհի ինստիտուցիոնալ կարողությունները Չափանիշ 2-ի պահանջներին, գնահատում է **բավարար:**

Խորհրդատվություններ.

- Հստակեցնել ու ուժեղացնել Հոգաբարձուների խորհրդի գործառույթը ԱրՊՀ-ի զարգացման ուղղությունները սահմանելու, զարգացման շղթան կառուցելու, բուհի առջև խնդիրներ սահմանելու և դրանց կատարումը վերահսկելու հարցում:
- Հստակեցնել միջազգայնացման, մարդկային ռեսուրսների ներգրավման, պահպանման ու առաջխաղացման և հետազոտության համար պատասխանատու ստորաբաժանումների իրավասությունների և գործառույթների շրջանակները:
- Կապ հաստատել Ստեփանակերտի մոտակա զորամասերի այն զինծառայողների հետ, ովքեր հաջողություններ են ունեցել բուհերում ուսանած ժամանակ՝ մտքեր փոխանակելու ուսումնառություն-հետազոտություն-արտադրություն (ծառայություն) շղթայի հարցում նրանց փորձառության վերաբերյալ:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԱրՊՀ-ի 2019-2023թթ ռազմավարական պլանում, ինչպես նաև Ֆակուլտետների և ամբիոնների զարգացման ռազմավարական ծրագրերում կարևորվորվում են ՄԿԾ-ների պարբերական վերամշակումն ու բարելավումը: Ներկայում համալսարանի 5 ֆակուլտետներում իրականացվում է 75 կրթական ծրագիր, որից 25-ը՝ բակալավրի (13 մանկավարժական և 12 սոցիալական կամ համալսարանական/, 44-ը՝ մագիստրոսի /17 մասնագիտություն և 27 մասնագիտացում), 6-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առաջիկայում նախատեսվում է կատարել ՄԿԾ-ների օպտիմալացում:

Առկա է ՈԱՇ-ի բնութագրիչներին ՄԿԾ-ների վերջնարդյունքների քարտեզագրում, որով ցույց է տրվում ՄԿԾ-ների և ՈԱՇ-ի համահունչությունը:

Ներկայացված ՄԿԾ-ները («Հայոց լեզու և գրականություն» , «Ֆինանսներ /ըստ ոլորտի», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ») համահունչ են ԱրՊՀ-ի առաքելությանը այն առումով, որ նպատակաուղղված են մանկավարժական, հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտության և տեխնիկայի, սպորտի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը:

ԱրՊՀ-ում վերջին երկու տարիներին բարելավվել են ՄԿԾ-ները, մշակվել են մասնագրեր, որտեղ նկարագրված են ՄԿԾ վերջնարդյունքները, մշակվել են առարկայական նկարագրեր, որտեղ նկարագրված են առարկայի վերջնարդյունքները, դասավանդման և գնահատման մեթոդները, իսկ որոշ ՄԿԾ-ներում (Հայոց լեզու և գրականություն) հանձնարարականների ցանկը: Առկա են ինստիտուցիոնալ ձևաչափեր, այնուամենայնիվ ոչ բոլոր ծրագրերում է լավ փորձը տեղայնացվել:

Դիտարկված երեք ՄԿԾ-ներում ուսումնառության վերջնարդյունքները տարանջատված են մասնագիտական գիտելիքի և իմացության, գործնական մասնագիտական կարողությունների, ընդհանրական փոխանցելի կարողությունների: Դասընթացների ուսումնառության վերջնարդյունքները ևս համադրվել են ՄԿԾ-ների վերջնարդյունքների հետ: Հայոց լեզու և գրականության ՄԿԾ-ի լրամշակման շրջանակում փորձ է կատարվել ընդլայնել մանկավարժական կրթամասը մասնավորապես փորձուսուցման տևողության ու ձևերի բազմազանեցման միջոցով: Անհրաժեշտ է սակայն նշել, որ ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքներում, ինչպես նաև դասընթացների վերջնարդյունքներում շեշտը դրված է բանասիրական հմտությունների վրա, իսկ մանկավարժական հմտություններն ու

կարողունակությունները հստակ ձևակերպված չեն կամ ներկայացված են որպես ընդհանրական և ոչ թե մասնագիտական հմտություններ[6]:

Ֆինանսներ (ըստ ոլորտի) ՄԿԾ-ում կարևորում են տեսական և գործնական բաղադրիչների համադրումը տարբեր դասընթացերում: Այս առումով պարբերաբար քննարկումներ են իրականացվում գործատուների հետ և նախատեսվում է ՄԿԾ-ում ավելացնել գործնական հատվածը: Ֆինանսներ (ըստ ոլորտի) ՄԿԾ-ում առանձնացված է մակրո և միկրո տնտեսագիտություն ուղղությունները, իսկ նեղ մասնագիտացում առկա չէ: Չնայած կրթական ծրագրերն ունեն գործնական բաղադրիչներ, ներառյալ փորձուսուցումները, սակայն ուսանողները, շրջանավարտները, գործատուները մատնանշում էին դասընթացներում և ուսումնական պլաններում գործնական բաղադրիչի ավելացման անհրաժեշտությունը:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ՄԿԾ-ների արդիականացման հետ մեկտեղ բարելավվել են ուսումնառության և դասավանդման մեթոդները: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գրեթե բոլոր առարկաների համար մշակված նկարագրերում առկա են դասավանդման և ուսումնառության մեթոդները ըստ վերջնարդյունքների: Դասընթացների նկարագրերում մասնավորեցված են յուրաքանչյուր թեմայի ներկայացման և ուսուցման համար առաջարկվող մեթոդները: Վերջնարդյունքահեն մոտեցումը, ինչպես նաև համապատասխան մեթոդների ընտրությունը հնարավորություն է տալիս ավելի կառավարելի և վերահսկելի դարձնել ուսումնառության գործընթացը, ինչի մասին փաստեցին և դասախոսները, և ուսանողները փորձագիտական այցի շրջանակում կազմակերպված հանդիպումների ընթացքում: Դասախոսները մատնանշում են, որ ակնկալվող արդյունքների ամրագրումը մեծապես բարելավել է կրթական գործընթացը՝ օգնելով իրենց դասավանդվող նյութի, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության հարցում: Ուսանողներն էլ նշեցին, որ առարկայական նկարագրերի շնորհիվ կարողանում են վերահսկել իրենց ուսումնառության գործընթացը, արդյոք դասախոսի կողմից կիրառվում են նշված մեթոդները, իսկ դասընթացի վերջում դասախոսի հետ քննարկում են, թե արդյոք հաջողվել է ձևավորել նախանշված վերջնարդյունքները:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ուսումնասիրված երեք ՄԿԾ-ների շրջանակներում կիրառվում են ինչպես ավանդական դասավանդման մեթոդներ, այնպես էլ թիմային աշխատանք, «առաջանցիկ հետադարձ կապի (feed forward)» մեթոդը, պրակտիկ խաղեր, մասնագիտական քննարկումներ և այլն: Պարզ դարձավ, որ «Google Classroom» հարթակի ներդնելուց հետո նշանակալիորեն քչացել են դասախոսությունների թելադրումները:

Ուսանողները կատարում են ինքնուրույն աշխատանքներ բոլոր առարկաներից:

Բանասիրության ֆակուլտետում իրականացված մի շարք դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ թեև բոլոր դասախոսները փորձում էին ինտերակտիվ դաս վարել ուսանողների ներգրավմամբ, այնուամենայնիվ գրատախտակի կամ տպված նյութի՝ «handouts» օգտագործումը սակավ էր, ինչը նոր նյութի ընկալումը ավելի մատչելի կդարձներ:

[6] Տեքստը խմբագրվել է համալսարանի դիտարկումների արդյունքում:

Նկատելի էր նաև, օրինակ, կոնկրետ լսարանի անգլերենի իմացության մակարդակի և հանձնարարված նյութի բարդության անհամապատասխանություն:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ոչ բոլոր դասախոսներն են կիրառում ժամանակակից դասավանդման մեթոդներ: Թեև ինքնավերլուծության մեջ նշվում է ուսանողակենտրոն ուսուցման առկայության մասին, սակայն առկա չէ քաղաքականություն և չկան դեպքեր ուսանողի կողմից ուսուցման իր ուղին ձևավորելու անհատական հնարավորության մասին: Թեև այցի ժամանակ նշվեց, որ կամընտրական առարկաները շատացել են, այնուամենայնիվ դրանց թիվը դեռևս փոքր է, իսկ առկա կամընտրական առարկաների դեպքում նշված չեն դրանց նպատակը՝ օրինակ նախապատրաստել փորձուսուցմանը, թե, այլ ոլորտներում աշխատանքին: Օրինակ՝ Հայոց լեզու և գրականություն ՄԿԾ-ում կամընտրական դասընթացները կարող են ներկայացնել մեկ գրողի ստեղծագործություններ, հայերենի կետադրությունը և այլն: Դասախոսների պնդմամբ դրանք միտված են զարգացնելու ուսանողների հետազոտական հմտությունները:

3.3 ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ԱրՊՀ-ում մշակվել է գնահատման ընդհանուր քաղաքականություն և հստակեցվել են վերջնական գնահատականի ձևավորման բաղադրիչները: Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է գնահատման 4 ձևերով՝ ավանդական ստուգարքի, ավանդական քննության, առանց եզրափակիչ գնահատմամբ ստուգման, եզրափակիչ գնահատմամբ քննության միջոցով:

Անաչառության պահպանման նպատակով ներդրվել է համակարգչային թեստ՝ ըստ Ուսանողների գիտելիքների համակարգչային թեստային ստուգման գործընթացի կանոնակարգի: Իրականացվել են թեստային գնահատման գործընթացի բարելավման աշխատանքներ. բուհի բոլոր ստորաբաժանումներում թեստային լավորակ առաջադրանքների կազմման հարցի շուրջ կազմակերպվել են մեկշաբաթյա դասընթացներ և հանդիպում թեստավորման կենտրոնի տնօրենի հետ: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ համակարգչային թեստի արդյունավետության մասին կարծիքները հակասական են և ՊԴ կազմի, և ուսանողների շրջանում: Մի մասի կարիքով, որոշ առարկաների դեպքում, օրինակ՝ գրականություն, այն արդարացված չէ: Սակայն, եզրափակիչ ստուգումը անցկացվում է բանավոր քննությամբ:

ՄԿԾ-ում և առարկայական նկարագրերում սահմանված են գնահատման մեթոդները, որոնք վերանայման կարիք ունեն, քանի որ որոշ դեպքերում թվարկված են գնահատման բազմաթիվ, երբեմն մինչև 10 մեթոդ[7], սակայն գնահատման բաղադրիչներից պարզ է դառնում, որ վերջնական գնահատականը կուտակվում է երկու ստուգման՝ յուրաքանչյուրը 8 միավոր և ինքնուրույն աշխատանքի՝ 2 միավոր, միջոցով: Փորձագիտական խումբի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ինքնուրույն աշխատանքով խթանվում է ուսանողների վերլուծական հմտությունների ձևավորումը: Այս պարագայում ինքնուրույն աշխատանքի միավորը (2) բավականին քիչ է:

Հայոց լեզու և գրականություն ՄԿԾ-ի դեպքում գրավոր թեստերում ընդգրկված են գործնական հմտությունները ստուգող առաջադրանքներ:

[7] Տեքստը խմբագրվել է համալսարանի դիտարկումների արդյունքում:

Մի շարք ընթացակարգերով՝ Կուրսային աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության կարգ, Ավարտական աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության կարգ, Մագիստրոսական թեզի նախապատրաստման և պաշտպանության կարգ, Ակադեմիական ազնվության և անազնվության կանոնակարգ, հստակեցվել են նաև ուսանողների ինքնուրույն աշխատանքների, ավարտական աշխատանքների և թեզերի գնահատման չափորոշիչները և ակադեմիական ազնվության ապահովման հարցերը: Սակայն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի աշխատանքների գնահատման ժամանակ ցածր միավոր է տրվում աշխատանքի արդիականությանն ու նորույթին (2 –ական միավոր յուրաքանչյուրին, մինչդեռ 8 միավոր տրվում է ներկայացման, իսկ 4 միավոր լեզվի համար): Հարկ է նշել նաև, որ ուսումնասիրված աշխատանքներում թույլ էր հետազոտական բաղադրիրը:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

ԱրՊՀ-ն կրթական ծրագրերի մշակման հենանիշ է ընդունել նախ՝ ԵՊՀ, ապա՝ ՀՊՄՀ կրթական ծրագրերը: Հիմնական կրթական ծրագրերը մշակելիս հաշվի են առնվել նաև ՀՀ այլ բուհերի ծրագրային չափորոշիչներն ու պահանջները, որն էլ ապահովել է ուսանողների արտահամալսարանական շարժունությունը:

ԱրՊՀ-ում տրամադրվող կրթական ծրագրերը լրամշակվել են ՄԿԾ-ների մշակման վերջնարդյունքահեն մոտեցմամբ՝ ըստ «ԱրՊՀ բակալավրի կրթական կառուցվածքի և բովանդակության ծրագրի կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 28-ի N6-Լ և «Մասնագիտության կրթական ծրագրի» ձևաչափը լրացնելու մեթոդական ցուցումները հաստատելու մասին ԱրՊՀ գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 28-ի N5-Լ որոշումների:

ՄԿԾ-ների լրամշակման համար ուսումնասիրվել են նաև Ղազախստանի Հանրապետության Տարազի պետական համալսարանի, ՌԴ Մոսկվայի մանկավարժական ինստիտուտի, ՌԴ Վոլգոգրադի պետական համալսարանի, ՌԴ Ուրալյան պետական մանկավարժական համալսարանի ժամանակակից կրթական մոդելների հնարավորությունները: Փորձագիտական այցի ընթացքում, սակայն պարզ չէր թե փորձագետների կողմից ուսումնասիրված ՄԿԾ-ներում ինչ փոփոխություններ են կատարվել բենչմարքինգի արդյունքում:

«Հայոց լեզու և գրականություն» ՄԿԾ-ի լրամշակման համար իրականացվել է բենչմարքինգ՝ Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի և Վանաձորի պետական համալսարանի համապատասխան ծրագրերի, ինչպես նաև Ռուսաստանի մի շարք բուհի ծրագրերի հիման վրա: Լրամշակման գործընթացում որպես արտաքին շահակիցներ ներգրավվել են Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 դպրոցի փոխտնօրենը և Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան N11 ավագ դպրոցի ուսումնամեթոդական խորհրդի նախագահը:

Լրամշակված ծրագիրը ուղարկվել է արտաքին կարծիքի ՀՀ Վանաձորի Պետական Համալսարան: Արտաքին կարծիքը այնուհետև քննարկվել է ծրագրի պատասխանատու ամբիոններում (ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն և Գրականության և լրագրության ամբիոն) և որոշ դիտակումներ հաշվի են առնվել վերջնական ծրագիրը ներկայացնելիս:

Ֆինանսներ (ըստ ոլորտի) ՄԿԾ-ի հիմքում ՀՊՏՀ-ի համապատասխան կրթական ծրագիրն է, ինչպես նաև կատարվել է բենչմարքինգ Տարազի պետական համալսարանի ՄԿԾ-ի հետ: Իսկ ՏՏ ՄԿԾ-ն համադրվել է Երևանի պետական համալսարանի ՄԿԾ-ի հետ: Հարկ է նշել, որ բենչմարքինգի ինստիտուցիոնալ մոտեցում առկա չէ:

Ըստ ԱրՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ԱրՊՀ-ում մասնագիտական կրթական ծրագրերը բովանդակային առումով համադրելի են այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերին, քանի որ առկա են միջբուհական տեղափոխությունների տվյալներ: Հնարավոր է նաև համագործակցային պայմանագրի շրջանակում ուսանողի փոխանակման՝ ԵՊՄՀ-ով միջնորդավորված արտերկրյա մեկամյա ուսուցման հնարավորության իրացումը: 2017-2018 ուստարում 2 ուսանող («Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության, 2-րդ, 4-րդ կուրսեր), 2018-2019 ուստարում 1 ուսանող («Թարգմանչական գործ» մասնագիտության, 3-րդ կուրս), ՀՊՄՀ-ով միջնորդավորված, հնարավորություն են ստացել մեկ տարի ուսանելու Հունգարիայի Պիտեր Պազման կաթոլիկ համալսարանում, ապա վերադառնալու և կրթությունը շարունակելու ԱրՊՀ-ում:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԱրՊՀ-ի 2019-2023թթ ռազմավարական պլանում, ինչպես նաև Ֆակուլտետների և ամբիոնների զարգացման ռազմավարական ծրագրերում կարևորված են ՄԿԾ-ների պարբերական վերամշակման և լրամշակման խնդիրը:

Ռազմավարական ծրագրի մշակման և ԱրՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության աշխատանքների շրջանակում ԱրՊՀ-ն մի շարք քայլեր է ձեռնարկել կրթական ծրագրերը բարելավելու ուղղությամբ, ինչպիսիք են կրթական ծրագրերի պատասխանատուների նշանակումը, բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության կարգի մշակումը, ուսումնական պլանների համապատասխանեցումը բուհի ՌԾ-ին պահանջներին: Մշակվել են առարկայական նկարագրերի ձևանմուշներ, այդ թվում նաև փորձուսուցման համար: Փորձուսուցման նկարագրերը բավականին հստակ և մանրակրկիտ են ձևակերպված:

ՄԿԾ-ների մշտադիտարկման հիմնական մեխանիզմը ուսանողական հարցումներն են, որոնց համար մշակվել են կանոնակարգեր՝ ԱրՊՀ ՊՈԱԿ ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը և հարցաթերթը հաստատելու մասին, ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգը և հարցաշարը:

Վերջին շրջանում ընդլայնվել է ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման և բարելավման համար արտաքին շահակիցների շրջանակը, ովքեր ընդգրկվում են ՄՈՒՀ-ի տարբեր օղակների խորհուրդներում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում, հրավիրվում են կլոր-սեղան քննարկումներին, որտեղ մի շարք հարցերի հետ մեկտեղ արծարծվում են ՄԿԾ-ների լրամշակման և բարելավման խնդիրները, մասնավորապես դրանք աշխատաշուկայի պահանջներին համապասխանեցնելու տեսանկյունից: Այդ քննարկումների և հարցումների արդյունքում որպես կարևոր ձեռքբերում և դասախոսները, և ուսանողները նշում են փորձուսուցման ժամկետների ընդլայնում, դրա բովանդակության վերանայումը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ վերջին երկու տարիների ընթացքում մեկնարկել է ՄԿԾ-ների բարելավման գործընթացը, մշակվել են մի շարք ինստիտուցիոնալ ձևաչափեր ՄԿԾ-ների լրամշակման համար: Մի քանի ՄԿԾ-ներում առկա է լավ փորձի օրինակներ: Լավ փորձի տեղայնացումը բոլոր ՄԿԾ-ներում կնպաստի ՄԿԾ-ների մակարդակում բարեփոխումների լայնածավալ իրականացմանը և շրջանավարտների որակի բարձրացմանը:

ԱրՊՀ-ն առաջարկում է կրթական ծրագրերի մեծ բազմազանություն (75)՝ ըստ կրթական երեք աստիճանների: Կրթական ծրագրերի նման մեծ բազմազանությունը մասնակի պայմանավորված է նաև այն առանցքային դերով, որ ունի համալսարանը Արցախի Հանրապետության կարիքների բավարարման հարցում: Յուրաքանչյուր տարի իրականացվում է կրթական ծրագրերի գնահատում և վերանայում: Ռազմավարական նպատակների տեսանկյունից կրթական ծրագրերի ու դրանց կրթական վերջնարդյունքների վերանայումը դեռևս պետք է վերջնականացվի: Կրթական ծրագրերն աշխատաշուկայում կլինեն ավելի մրցունակ և տարբերվող, եթե ավելի հստակ ուղղություններով տարբերակված լինեին: Այս նպատակին կարելի է հասնել մոդուլային համակարգի ներդրման միջոցով: Չնայած կրթական ծրագիրն ունի գործնական բաղադրիչներ, ներառյալ փորձուսուցումները, սակայն ուսանողները, շրջանավարտները, գործատուները մատնանշում էին դասընթացներում և ուսումնական պլաններում գործնական բաղադրիչի ավելացման անհրաժեշտությունը: Ուսումնական պլաններում ձեռնարկատիրության և գործարարության վերաբերյալ դասընթացների ավելացումը կարող է բարձրացնել շրջանավարտների զբաղվածության մակարդակը՝ նպաստելով հատկապես մասնավոր հատվածում իրենց սեփական գործի ստեղծմանը:

Միանգամայն գովելի է, որ ԱրՊՀ-ն ունի թեզերում և ավարտական քննություններին ներկայացվող կրթական վերջնարդյունքների գնահատման գործուն համակարգ, և այդ գնահատումն իրականացվում է արտաքին շահակիցների մասնակցությամբ: Ըստ ռազմավարական ծրագրում ներկայացված տեղեկատվության՝ ԱրՊՀ շրջանավարտներն իրենց ուսումը կկարող են շարունակել եվրոպական և ամերիկյան համալսարաններում: Սակայն այլ բուհերում ձեռք բերված կրթական վերջնարդյունքների ճանաչման ընթացակարգի բացակայությունն ու կրեդիտների փոխանցման բարդ համակարգը խոչընդոտում են ԱրՊՀ ռազմավարական խնդիրների իրականացմանը՝ կապված ուսանողների շարժունության հետ:

Վերջին տարիներին բարելավվել է ուսանողների գնահատման համակարգը, սակայն հմտությունների և գիտելիքի գնահատման տարանջատում առկա չէ: Այս տեսանկյունից ուսանողների գնահատման համակարգի բարելավումը կնպաստի ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորմանը: Հարկ է նաև նշել, որ ուսանողների մոտ վերլուծական կարողությունների զարգացումը նույնպես պետք է ԱրՊՀ-ի համար դառնա բարելավման նախանշան առաջիկա տարիներին:

Համալսարանը նշում է, որ իրականացնում է ուսանողակենտրոն ուսուցման գաղափարը և բազմաթիվ քայլեր է ձեռնարկում կրթական գործընթացի արդիականացման համար: Ուսանողների ու դասախոսների հետ հանդիպումների ընթացքում նրանք ներկայացրեցին ավանդական դասավանդումից (նույնիսկ դասախոսի կողմից դասի բովանդակության թելադրում) փոխներգործուն (ինտերակտիվ) դասավանդման ու ուսուցման մեթոդներին անցնելու բազմաթիվ օրինակներ: Փորձագիտական խումբը կարևորում է

հանձնարականների նկարագրությունը ՄԿԾ-ներում, որը կնպաստի ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

Արդյունավետ կլինի ուսումնասիրել, թե ինչպես է COVID-19-ի ընթացքում իրականացված առցանց ուսուցումը բարձրացրել ուսանողների ներգրավվածությունը կրթական գործընթացին և ինչ նոր լուծումներ պետք է տրվեն հետհամավարակային ժամանակահատվածում: Նորարարական դասավանդման և դասավանդման փորձերի վերաբերյալ տարբեր քննարկումների արդյունքներից կարելի է ուրվագծել ԱրՊՀ-ի համար հայեցակարգային շրջանակ, որը կօգնի կատարելագործել ուսանողակենտրոն ուսուցման դերը ուսանողների կրթական գործընթացի և դրա վերջնարդյունքների բարելավման հարցում: Ուսանողներն ունեն որոշակի ազդեցություն համալսարանի կառավարման գործընթացում և արտահայտում են իրենց կարծիքը դասավանդման որակի և հարմարությունների վերաբերյալ: Ուսանողների ու արտաքին շահակիցների բավարարվածությունը կրթությունից համեմատաբար բարձր է: Ամեն դեպքում պետք է նշել, որ հարցումները պարբերական բնույթ չեն կրում և հետադարձ կապի ու որակի ապահովման համակարգերը լավ չեն գործում այս ուղղությամբ: Հանդիպումների ժամանակ տեղեկացանք, որ ուսանողները, դասախոսներն ու նույնիսկ ամբիոնների վարիչները չունեն անմիջական հասանելություն հարցումների արդյունքներին: Հավանաբար դա է պատճառը, որը ինքնավերլուծության ուսումնասիրության և հանդիպումների արդյունքներում չբացահայտվեց ուսանողների հարցումների ու որակի բարելավման միջև առկա հստակ կապ:

Կրթական ծրագրերի վերլուծության ընթացում ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել ուսանողների առաջընթացի դինամիկային, որը չափվում է ձեռք բերված կրթական վերջնարդյունքներով: Դասավանդման և ուսուցման գործընթացների արդյունավետության բացահայտման համար արժե իրականացնել ուսանողների՝ ուսման առաջին և վերջին տարիների ձեռքբերումների համեմատական վերլուծություն: Ի տարբերություն եվրոպական մի շարք համալսարանների՝ ԱրՊՀ ուսանողները քիչ հնարավորություն ունեն անհատականացնելու իրենց ուսման ուղին, քանի որ առկա են քիչ թվով կամընտրական առարկաներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ վերջին տարիներին կատարվել են ՄԿԾ-ների փոփոխություններ, ընդհանուր առմամբ, ՄԿԾ-ների կազմակերպումը մոտ է եվրոպական մոտեցումներին վերջնարդյունքահենության, կրեդիտների համակարգի տեսանկյունից, վերանայվում են ՄԿԾ-ները, առկա է բենչմարքինգի, թեզերի գնահատման համակարգ, առկա են պրակտիկ ուղղվածությամբ դասընթացներ, շրջանավարտների մոտ յոթանասուն տոկոսն աշխատում է, ունեն բավականաչափ կապեր գործատուների հետ, կազմակերպում են կլոր սեղաններ, գործատուների կարծիքի հիման վրա ՄԿԾ-ներում փոփոխություններ են կատարվել, կան նորարար դասախոսներ, դասավանդման մեթոդները հիմնականում նորարարական են, ուսանողները գիտեն որտեղ կարող են աշխատել, բուհի բոլոր մակարդակներում գիտակցում են ՄԿԾ-ներում առկա խնդիրները և լուծումներ են փնտրում խնդիրների համար, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱրՊՀ-ն բավարարում է չափանիշ երրորդի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

Խորհրդատվություններ.

1. Հստակեցնել ՄԿԾ-ների, ինչպես նաև դասընթացների վերջնարդյունքների ձևակերպումները՝ դարձնելով դրանք կիրառելի դասախոսի համար:
2. Վերանայել առաջարկվող կամընտրական դասընթացների բովանդակությունը և նպատակը՝ որքանով են դրանք նախապատրաստում փորձուսուցմանը կամ ապահովում հավելյալ փոխանցելի հմտություններ և կարողություններ:
3. Մշակել ԱրՊՀ-ում ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումների վերաբերյալ ձեռնարկ՝ ներկայացնելով դասավանդման տեխնիկաների ու կրթական գործընթացի կապը ակնկալվող կրթական վերջնարդյունքների ու դրանց գնահատման մեթոդների հետ:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԱրՊՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմներ և գործընթացների իրականացման կարգեր, ինչպես ավագ դպրոցի, այնպես էլ քոլեջների շրջավարտների համար՝ առկա և հեռակա ուսուցման համակարգերում:

ԱրՊՀ-ն հանրապետությունում բարձրագույն ուսումնական ամենամեծ հաստատությունն է և դիմորդների թվով առաջատարն է: Ավագ դպրոցի շրջանավարտների թվով պայմանավորված՝ նվազել է նաև համալսարանի դիմորդների թիվը:

Ըստ ինքնավերլուծության՝ հավանական դիմորդների ներգրավման համար գործում են մի շարք մեխանիզմներ: Համագործակցելով ավագ և միջնակարգ դպրոցների հետ՝ համալսարանը կազմակերպում է փոխադարձ այցելություններ և առարկայական օլիմպիադաներ՝ դիմորդների մասնագիտական կողմորոշման նպատակով: Փորձագիտական այցի ընթացքում հայտնի դարձավ, որ ապագա դիմորդների համար ամբիոնները կազմակերպում են նախապատրաստական դասեր, որոնք, ըստ համալսարանի ներկայացրած տվյալների, նպաստել են քիմիայի և օտար լեզուների բաժիններում ուսանողների թվի ավելացմանը:

Դիմորդների տեղեկացվածությունը բարձրացնելու և ընդունելության գործընթացի թափանցիկությունն ավահովելու համար համալսարանի պաշտոնական կայքում գործում է “Դիմորդ” բաժինը: Այնտեղ հասանելի է ընդունելության կարգի, մասնագիտությունների և քննությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը: Պատրաստվում են համալսարանի մասին պատմող տեսանյութեր, բուկլետներ, որոնք հրապարակվում են սոցցանցերում, ԱրՊՀ պաշտոնական կայքում:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԱրՊՀ-ն, լինելով փոքր համալսարան, հնարավորություն է ընձեռնում ուսանողների կարիքների վերհանումը իրականացնել ոչ միայն մշակված ընթացակարգերի, այլ նաև ուսանողների հետ անմիջական շփման միջոցով:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման համար գործում են հետևյալ մեխանիզմները.

- Ռեկտորի և ՈՒՀՏԱ պրոռեկտորի պարբերական հանդիպումներ ուսանողական ակտիվի հետ,
- Ուսանողական ակտիվի՝ ավագների, կուրսղեկների և ՈՒԽ-ի կողմից կարիքների վերհանում և ուսումնասիրում,
- Ուսանողների և շրջանավարտներտների շրջանում իրականացվող հարցումներ,
- Հոգեբանական կենտրոնի կողմից տարատեսակ միջոցառումների իրականացում:

Ռեկտորի հետ հանդիպումների համար մշակվում է ժամանակացույց և տեղադրվում պաշտոնական կայքում: Հանդիպումների ընթացքում հիմնականում քննարկվում են կազմակերպչական բնույթի հարցեր, մինչդեռ ուսումնական գործընթացի վերաբերյալ առաջարկներն ու խնդիրները լուծում են ստանում կառավարման ստորին օղակներում:

Որակի ապահովման կենտրոնի և ՈՒՀՏԱ և Կարիերայի բաժնի համագործակցության արդյունքում վերամշակվել է դասախոսների գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման հարցաթերթիկը: Հարցումները իրականացվում են էլեկտրոնային տարբերակով և ստացված արդյունքների հիման վրա ամբիոններում տրվում են համապատասխան հանձնարարականներ:

Ուսանողների կարիքների վերհանման համար ակտիվ գործում է նաև հոգեբանական կենտրոնը: 2017-2018թթ. ուստարում այն իրականացրել է ուսանողների մոտիվացիայի ուսումնասիրման հետազոտություն, սակայն արդյունքների հիման վրա կատարված փոփոխությունները ներկայացված չեն: Իրավիճակով պայմանավորված՝ կենտրոնը ուսանողների հետ կազմակերպում է տարաբնույթ հանդիպումներ՝ վերջիններիս կայուն հոգեբանական վիճակի ապահովման և աջակության ցուցաբերման համար: Նշված հանդիպումներին հրավիրվում են նաև մասնագետներ, օրինակ ՌԴ խաղաղապահ ուժերի ԱԻՆ-ի ներկայացուցիչներից:

Հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ինքնավերլուծության կատարումը նպաստել է ԱրՊՀ-ում մի շարք խնդիրների վերհանմանը, ինչը հնարավորություն է տվել համալսարանի ղեկավարությանը ՌԾ-ից բխող քայլերում համապատասխան փոփոխություններ կատարել:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Ըստ ինքնավերլուծության՝ ԱՀ կառավարության աջակցությամբ 2016թ.-ից համալսարանում իրականացվում է ոչ ֆորմալ կրթական ծրագիր, որի շնորհիվ ուսանողների համար լրացուցիչ պարապմունքներ են կազմակերպվում, որոնք վարում են ոլորտի մասնագետներ, ճանաչված գործիչներ: Նմանատիպ դասընթացներ են կազմակերպվում համագործակցող բուհերից՝ ԵՊՀ-ից, ՀՊՏՀ-ից, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ից, Հայաստանում ամերիկյան համալսարանից և այլ բուհերից մասնագետների հրավիրման ճանապարհով, ինչպես նաև համալսարանի ուսանողներին այդ բուհերում մասնագիտական դասընթացների ուղարկելով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները բավարարված են այդ դասընթացների բովանդակային հատվածով, սակայն տարեկան քանակը շատ չէ:

2018թ.-ից սկսած համալսարանը կազմակերպում է ամառային միջազգային ճամբար-դպրոց, որտեղ դասախոսություններով հանդես են գալիս ճանաչված գործիչներ:

Ակադեմիական խորհրդատվություններն ու լրացուցիչ պարապմունքները կազմակերպվում են ամբիոնների կողմից: Դրանք հիմնականում նախաքննական և

հետազոտական աշխատանքի քննարկման խորհրդատվություններ են: Ըստ ինքնավերլուծության տվյալների՝ ուսանողների մոտ 82%-ը բավարարված է դրանցից, ինչում համոզվեցինք նաև այցի ընթացքում: Հատկապես հեռավար ուսուցման անցնելուց հետո խորհրդատվությունների գրաֆիկը ճկուն է դարձել և ուսանողները կարող են ցանկացած պահի կապ հաստատել դասախոսի հետ[8]:

Ուսանողները մասնակցում են հոգեբանական կենտրոնի և իրավաբանական կլինիկայի աշխատանքներին՝ փորձառու մասնագետների ղեկավարությամբ խորհրդատվական ծառայություններ մատուցելով բնակչությանը:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

ԱրՊՀ ներքին կանոնակարգով սահմանվում է համալսարանի կողմից տրամադրվող օժանդակությունից օգտվելու, այդ թվում հանրակացարանում բնակվելու, առաջարկությունների, դիմում-բողոքների լրացման և ներկայացման կարգը:

Արցախի տարբեր շրջաններից եկած և բնակության խնդիր ունեցող ուսանողները դիմում են ներկայացնում՝ հանրակացարանում բնակվելու համար: Հանրակացարանի ուսանողները ընտրում են ՈւԽ-ում իրենց ներկայացուցչին, ով ներկայացնում է իրենց խնդիրները նախագահությունում: Վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգը և անհրաժեշտ տեղեկատվությունը ուսանողներին ներկայացվում է առաջին կուրսում, ինչպես նաև ուղեցույցի ձևով ամփոփվում և հրապարակվում է պաշտոնական կայքում:

Ուսանողները հնարավորություն ունեն հանդիպելու ռեկտորի հետ՝ ուստարվա սկզբում կազմված և հրապարակված ժամանակացույցի համաձայն: Հանդիպումներից պարզ դարձավ, որ ինչպես վարչական, այնպես էլ պրոֆեսորադասախոսական աշխատակազմը մշտապես պատրաստ է աջակցություն ցուցաբերել ուսանողներին՝ տարաբնույթ հարցերի լուծման համար, ինչպիսիք են անհատական աշխատանքների թեմաների ընտրությունը, առարկաների ժամաքանակի փոփոխությունը, դասի թեմայի վերաբերյալ անհասկանալի հարցերի քննարկումը:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժինը ստեղծվել է 2018թ և ձեռնամուխ է եղել ՌԾ-ում նշված քայլերի ուղղությամբ աշխատանքների կատարմանը: Ներկայումս առկա է 4 տարվա շրջանավարտների տվյալների բազա, որը շարունակվում է թարմացվել և համալրվել՝ շրջանավարտների հետ հետադարձ կապի ամրապնդման համար: Կարիերայի կենտրոնը, համագործակցելով գործատուների հետ, ուսանողներին պարբերաբար տեղեկացնում է շուկայում առկա թափուր հաստիքների վերաբերյալ՝ սոցիալական կայքերի խմբերում հրապարակումների միջոցով: Ներդրվել է ուսանողների էլեկտրոնային փոստի հասցեների ներբուհական համակարգը:

Համագործակցելով Հայաստանում ամերկյան համալսարանի հետ՝ կարիերայի կենտրոնը կազմակերպել է ինքնակենսագրության կազմման վերաբերյալ դասընթաց: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ դասընթացը օգնել է ուսանողներին աշխատանքի ընդունման հարցում: Կազմակերպվում են հանդիպումներ, թեմատիկ քննարկումներ գործատուների, հրավիրյալ մասնագետների հետ: Ուսանողների շրջանում իրականացվող հարցումները

[8] Տեքստը խմբագրվել է համալսարանի դիտարկումների արդյունքում:

կազմակերպվում են ՈԱԿ-ի հետ համատեղ, սակայն դրանք կենտրոնացված չեն և արդյունքների լիարժեք վերլուծություն դեռ չի արվել:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Ուսանողների ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում համալսարանի՝ 2018-2023թթ. ռազմավարական ծրագրի գերակա խնդիրներից է: Վերջինիս ապահովման համար ՄԿԾ-ներում ներդրվել է հետազոտական բաղադրիչը՝ ինքնուրույն աշխատանքի ձևով, մագիստրոսական ծրագրում ավելացվել է «Գիտահետազոտական աշխատանքի պլանավորում և մեթոդներ» պարտադիր առարկան:

Առարկայական հետազոտական աշխատանքները, ըստ ուսանողների, նպաստում են վերլուծական հմտությունների ձևավորմանը: Ըստ դասախոսների՝ հետազոտական բաղադրիչի շնորհիվ բարձրացել է ավարտական աշխատանքների որակը: Սակայն ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերլուծական բաղադրիչը թույլ է: Աշխատանքների կիրառական նշանակությունը բարձրացնելու համար մեխանիզմներ ձևավորված չեն:

Նոր մասնաշենքի կառուցման հետ կապված մասնաշենքի սահմանափակ հնարավորությունների պատճառով, միջգիտակարգային հետազոտության համար եղած միջոցները սահմանափակ են: Իրականացված հետազոտությունները և տպագրված մեծածավալ աշխատանքները հիմնականում պատմության և բարբառագիտական ուղղություններով են[9]: Վերակառուցվող մասնաշենքում լաբորատորիաների ստեղծումն ու այլ բուհերի հետ համագործակցությունը կնպաստեն ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը:

ԱրՊՀ-ում գործում է նաև ՈւԳԸ-ն, որը համագործակցելով ՈւԽ-ի հետ, կազմակերպում է կրթական և մշակութային միջոցառումներ՝ ամենամյա գիտաժողովներ, սեմինարներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԳԸ-ի գործունեությունը չի նպաստում ուսանողների ներգրավմանը գիտական գործունեության մեջ:

Ուսանողների կատարած անհատական գիտական աշխատանքները ամփոփվում և ներկայացվում են ուսանողների կողմից կազմակերպվող գիտաժողովների ժամանակ և հրապարակվում են գիտական տեղեկագրերում:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ԱրՊՀ ուսանողների իրավունքները սահմանվում են ԱՀ օրենսդրությամբ և ԱրՊՀ ներքին իրավական ակտերով: Ուսանողների իրավունքների պաշտպանության և ինքնակազմակերպման համար համալսարանում գործող մարմինը ՈՒԽ-ն է, որը գործում է 2015թ. ընդունված կանոնադրության համաձայն: Ձևավորված է նաև էթիկայի հանձնաժողով, որը վերահսկում է ակադեմիական ազնվության ու սովորողների իրավունքների ապահովումը:

Ուսանողները տարբեր խնդիրներով դիմում են կուրսղեկներին, ՈՒՀՏԱ մեթոդիստին, ՈՒԽ-ին, ամբիոնի աշխատակիցներին: Կարող են ուղղակիորեն կամ ՈՒԽ-ի միջոցով դիմել ռեկտորին:

ՈՒԽ-ն ապահովում է ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, բացահայտում, բարձրաձայնում և կառավարման մարմիններում քննարկման է ներկայացնում ուսանողների խնդիրները: Բացի կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներից, ՈՒԽ-ն նպաստում է նաև կարիքավոր ուսանողներին հավելյալ օժանդակության տրամադրմանը,

[9] Տեքստը խմբագրվել է համալսարանի դիտարկումների արդյունքում:

հանրակացարանում բնակվող ուսանողների խնդիրների լուծմանը: ՈՒԽ-ին հատկացվող ֆինանսական միջոցներից նախագահությունը նախորդ տարիներին հատկացրել է հանրակացարանի կոմունալ ծախսերի, կարիքավոր ուսանողների ուսման վճարի փոխհատուցմանը:

ՈՒԽ-ի գործունեության վերաբերյալ տեղեկացվածությունը բարձր է: Նորությունները հրապարակվում են համալսարանի պաշտոնական կայքում, սոցցանցերի էջերում, ինչպես նաև ուսանողներին տեղեկացնում են ավագների միջոցով: Սակայն հեռակա ուսուցման համակարգի ուսանողների հետ ակտիվ աշխատանքներ չեն տարվում:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

2018թ.-ից համալսարանում սկսել է գործել որակի ապահովման կենտրոնը և 2019թ.-ին հրատարակվել է «ԱրՊՀ Որակի ապահովման ձեռնարկ» ուսումնամեթոդական ուղեցույցը: Մշակվել են որակի ապահովման մեխանիզմներ, որոնց որոշ մասը գտնվում է փորձարկման փուլում:

ՈԱԿ-ը համագործակցում է ամբիոնների հետ՝ դասախոսների գնահատման հարցումների կազմակերպման շրջանակներում: Ստացված տվյալները ուղարկվում են ամբիոն, քննարկվում նիստի ընթացքում և տրվում են հանձնարարականներ: Կազմակերպվում են դասալսումներ, հետևում են դասախոսների մասնագիտական աճին: Ուսանողների տված գնահատականների և կարծիքի հիման վրա ավելացվել է փորձուսուցման ժամաքանակը, որոշ առարկաներ տեղափոխվել են, ավելացվել է դասախոսների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում:

Կարիերայի կենտրոնի հետ համատեղ մշակվել են տարողունակ հարցաթերթիկներ ուղանողների՝ ռեսուրսներից և կրթությունից բավարարվածության գնահատման համար: Արդյունքների ամփոփ վերլուծություն դեռ չի իրականացվել:

Հարցումներ են անցկացվում նաև շրջանավարտների և գործատուների շրջանում:

ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի գործունեության ներկայացվում է ինքնավերլուծությունների տեսքով: Ֆակուլտետի ՈՒԽ-ի ամենամսյա վերլուծությունը ներկայացվում է դեկանին, ապա քննարկվում ՈՒՀՏԱ և կարիերայի բաժնում: Ինքնագնահատման արդյունքում ակտիվ ուսանողները խրախուսվում են կրթաթոշակներով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ բուհում գործում են ուսանողների ընդունելության և ընտրության մեխանիզմներ, այդ թվում այցելություններ դպրոցներ, դպրոցների աշակերտների այցելություններ ԱրՊՀ, նախապատրաստական դասեր դիմորդների համար: Կատարված աշխատանքները նպաստում են ԱրՊՀ տեսանելության բարձրացմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևոր է համարում ուսանողների ընտրության և համալրման տարբեր աղբյուրների արդյունավետության ուսումնասիրման անհրաժեշտությունը, որը թույլ կտա բացահայտել առկա խնդիրները, բազմազանեցնել հավաքագրման մեխանիզմները, որն էլ իր հերթին կնպաստի դիմորդների թվի աճին:

Փորձագիտական խումբը դրական է համարում ուսանողների կարիքների վերհանման համար կիրառվում են տեղեկատվության ստացման բազմաթիվ աղբյուրներ՝հարցումներ, ռեկտորի, դեկանների, ամբիոնների վարիչների, կուրսղեկների, կուրատորների հետ հանդիպումներ: Ուսանողների կարիքները գրանցվում են նաև հատուկ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից՝ Ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի

բաժին, Հոգեբանական կենտրոն, ուսանողական կառույցներ և առաջարկությունների արկղ: Այս մեխանիզմների ակտիվորեն կիրառման արդյունքում ուսանողները հնարավորություն ունեն մշտապես բարձրաձայնել իրենց կարիքների մասին և լուծում ստանալ: Ուսանողները նաև հնարավորություն ունեն դիմելու վարչական անձնակազմին խնդիրների բարձրացման նպատակով, ինչը դրական ազդեցություն է ունենում ուսանողների մոտիվացիայի վրա: ԱրՊՀ-ում մշակվել է նաև ուսանողների ձեռնարկ, որտեղ ներկայացված են ուսանողների պարտականություններն ու իրավունքները: Փորձագիտական խումբը նշում է, որ ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստելու համար արդյունավետ կլիներ նաև ներառել կրթական ծրագրերի հակիրճ նկարագրերը ուսանողների ձեռնարկում:

Դրական է այն, որ ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների համար մշակված են գրաֆիկներ, կազմակերպվում են լրացուցիչ դասախոսություններ՝ մասնագետների ներգրավմամբ: Սակայն հեռակա համակարգի ուսանողների համար խորհրդատվությունների համակարգը լրամշակման կարիք ունի: Խորհրդատվական ծառայությունների բարելավումը կնպաստի ուսանողների առաջընթացին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ կարիերայի կենտրոնը ակտիվ աշխատանքներ է իրականացնում շրջանավարտների բազայի ստեղծման ուղղությամբ, ինչը կնպաստի շրջանավարտների հետ կապի ամրապնդմանը և կրթական ծառայությունների գնահատման մեխանիզմների բարելավմանը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև կարերայի կենտրոնի և գործատուների ակտիվ համագործակցության կապերի ստեղծումը, ինչը հնարավորություն կտա շրջանավարտների զբաղվածության ապահովմանը և բուհ-գործատու կապի ամրապնդմանը:

Դրական հանգամանք է ՄԿԾ–ներում հետազոտական բաղադրիչի ներդնումը և գիտական կենտրոնի գործունեությունը, որոնք նպաստում են ուսանողների ներգրավմանը հետազոտական աշխատանքներում: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ ուսանողները դեռևս ակտիվ ներգրավված չեն հետեզոտական նախագծերում, իսկ կատարված ինքնուրույն աշխատանքները վերլուծական բնույթ չեն կրում և չեն տանում վերլուծական հմտությունների ձևավորմանը: Այս տեսանկյունից անելիքներ ունի նաև ԱրՊՀ ՈՒԳԸ, որի գործունեությունը դեռևս ակտիվ չէ ուսանողներին հետազոտական աշխատնքերում ներգրավման հարցում:

Դրական է այն, որ ՈՒԽ–ն ակտիվ գործունեություն է ծավալում ուսանողների իրավունքների պաշտպանության, տարաբնույթ միջոցառումների կազմակերպման, կարիքավոր ուսանողներին աջակցություն տրամադրելու ուղղությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում առկա է դիմորդների հավաքագրման աշխատանքներ, ունեն համագործակցություն դպրոցների հետ այս առումով, առկա են մեխանիզմներ ուսանողների կարիքների վերհանման համար, օրինակ հարցումներ, տարբեր հանդիպումներ ռեկտորի, պրոռեկտորների հետ, ԱրՊՀ կարիերայի կենտրոնը նույնպես նպաստում է կարիքների վերհանմանը, առկա է ֆինանսական աջակցություն սոցիալական խնդիր ունեցողների համար, կարիերային նպաստող ծառայությունները գործում են, ուսանողները որոշ չափով ներգրավում են հետազոտական աշխատքներում, գործում է ՈՒԽ-ն, գործում է հոգեբանական կենտրոնը, որը ծառայություններ է մատուցում ուսանողների համար, ուսանողները մոտվիացված են, գիտակցում են իրենց դերը խնդիրների լուծման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողներին տրամադրում է

համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱրՊՀ–ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4–ի պահանջներին գնահատում է **բավարար**:

Խորհրդատվություններ.

- Բարելավել կարիերային նպաստող ծառայությունները՝ ստեղծելով բուհ-գործատու համագործակցության սերտ կապեր:
- Ապահովել ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման արդյունքների վերլուծությունը և ներկայացումը ուսանողներին, ինչպես նաև խնդիրների հիման վրա բարելավումների պլանի կազմումը և իրականացումը:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԱրՊՀ-ում պրոֆեսորադասախոսական համակազմի ձևավորումը և ընտրությունը իրականացվում ըստ համապատասխան ընթացակարգի:

Ըստ ինքնավերլուծության ԱրՊՀ-ում հիմնական դասախոսական կազմում գերակշռում են միջին տարիքի դասախոսները, որը վերջին 3 տարիների ընթացքում տատանվում է 50-ից 51-ի միջակայքում: Վերջին տարիներին հիմնական դասախոսական կազմում կին դասախոսների թիվը գերակշռում է տղամարդկանց թվին և կազմում է 75%:

Սույն չափորոշչի ուղղությամբ Արցախի պետական համալսարանի մտադրություններն արտահայտված են մարդկային ռեսուրսների կառավարումը բուհի ռազմավարական նպատակներին համապատասխանեցնելու վերաբերյալ ռազմավարական խնդրում (ԱրՊՀ զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագրի թիվ 4.4 խնդիր): Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ու գնահատման քաղաքականությունն իրականացվում է «ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման», «ԱրՊՀ ամբիոնի վարիչի ընտրության» և «ԱրՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության» ընթացակարգերով:

ԱրՊՀ-ի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգով բուհի դասախոսների ընտրությունն ու գնահատումն իրականացվում է դասախոսներին ներկայացվող գիտամանկավարժական գործունեության պահանջների համաձայն: Պետք է նշել, որ այդ պահանջներն ինչպես քանակական (օրինակ՝ դոցենտի պաշտոնի համար տասը տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ, առնվազն մեկ հրատարակված գիտական կամ գիտամեթոդական աշխատանք մրցույթին նախորդող տարում) այնպես էլ որակական (գիտական աստիճանի և կոչման առկայություն) բնույթի տվյալներ են հաշվի առնում: Ընթացակարգը պաշտոնների համար սահմանում է ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական

աշխատանքի որոշակի ձևեր (օրինակ՝ դոցենտի պաշտոնի համար, դասախոսությունների վարում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով, մագիստրոսական ծրագրի ղեկավարում, գիտական սեմինարի ղեկավարում և այլն):

Ըստ ընթացակարգի, յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի վերջում հաշվառվում են թափուր մնացած պաշտոնները, և հայտարարվում է բաց մրցույթ: Հայտարարությունը զետեղվում է բուհի կայքէջում: Մրցույթն իրականացվում է թեկնածուների գործերը դիտարկող մանդատային հանձնաժողովի, ամբիոնի, ֆակուլտետային խորհրդի և ԱրՊՀ գիտխորհրդի խողովակներով: Պետք է նկատել, որ մրցույթին մասնակցող դասախոսների գնահատման չափանիշները իրենցից մուտքային բնույթի (input) տվյալներ են ենթադրում (գիտական աստիճանի առկայություն, գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների առկայություն, վերապատրաստման դասընթացներ), մինչդեռ գնահատման նաև ելքային բնույթի (output) չափորոշիչներ ընտրության ժամանակ (ինչպե՞ս է կազմակերպում անհատական աշխատանքը, ինչպե՞ս է մատուցում նյութը, ինչպե՞ս է խրախուսում հետազոտությունը և այլն) չեն կիրառվում, թեև ընթացակարգով որոշ ելքային չափանիշների կիրառման հնարավորություն սահմանվում է (օրինակ՝ առկայության դեպքում ինքնագնահատում և գործընկերային գնահատում), ինչը, սակայն, համաձայն փորձագիտական այցի արդյունքների, պարզվեց, որ չի կիրառվում: Հատկանշական է, որ նշված չափանիշները որևէ կերպ, օրինակ, միավորների տեսքով, կշռելի չեն: Հատկանշական է նաև, որ մրցութային ընտրության հիմքում ոչ թե դասընթացը վարելու որակական պահանջներն են, այլ զուտ դասախոսի պաշտոնի թափուր դառնալը: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ այս ընթացակարգով իրականացվող ընտրությունները խիստ հազվադեպ են մրցակցային լինում (աշխատում է մեկ հաստիքի համար մեկ թեկնածու սկզբունքը):

Ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի, այնպես էլ ամբիոնի վարիչի ու դեկանի մրցութային ընտրության ընթացակարգերը հստակ ու որոշակի կերպով չեն արտահայտում ՄՈՒՀ-ի առանձնահատկությունները: Չի ընդգծվում ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի դերը, գործառույթը պրոֆեսորադասախոսական կազմի լավագույն կադրերի ներգրավման, խրախուսման ու առաջխաղացման հարցում, ինչը ինչ-որ կերպ կարտահայտեր մարդկային ռեսուրսները ռազմավարական նպատակներին համապատասխանեցնելու վերաբերյալ ԱրՊՀ-ի այն հանձնառությունը, որը նշված է բուհի ՌԾ-ում:

Միաժամանակ պետք է նաև նկատել, որ լավագույն կադրերի ներգրավման առումով բուհն ունի օբյեկտիվ դժվարություններ, առաջին հերթին, մայրաքաղաքից մեծ հեռավորության վրա գտնվելու և այդպիսով կադրերի առաջարկին արձագանքել չկարողանալու պատճառով:

ԱրՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության մեջ գերակայում է լսարանային բաղադրիչը, փոխարենը թույլ է արտահայտված հետազոտական բաղադրիչը: ԱրՊՀ դասախոսների աշխատավարձերը թեև համադրելի են ՀՀ բուհերի միջին աշխատավարձերի հետ, այդուհանդերձ, առկա ուսումնական մեծ բեռնվածության պայմաններում (պրոֆեսորի բեռնվածությունը 700-750 ժամ, դոցենտինը՝ 750-800 ժամ, ավագ դասախոսինը՝ 800-850 ժամ, դասախոսինը՝ 850-900 ժամ, ասիստենտինը 900-950 ժամ) դրանք ակնհայտ բավական չեն նախատեսված ծավալով գիտամանկավարժական գործունեությունն արդյունավետ կերպով իրականացնելու համար: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ժամանակ դասախոսները ցուցաբերում էին բարձր մոտիվացիա:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Սույն չափորոշչի մասով կարողությունների զարգացմանն ուղղված գործողություն պլանավորված է ԱրՊՀ զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագրում՝ կատարելագործել դասախոսի աշխատանքի տեղակալման չափանիշները և գործընթացները՝ սահմանելով դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ կրթական ծրագրի ելքային արդյունքների (խնդիր 1.4, գործողություն 2)։ Ըստ ՌԾ ժամանակացույց-պլանի, սույն գործողությունը նախատեսված է եղել կատարել մինչև 2019թ. վերջը։

Ինչպես նշվեց, ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգում տրված է պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների նկարագրությունն ու հավակնորդներին առաջադրվող պահանջները։ Պետք է նշել, որ այս պահանջներն ընդհանրական բնույթի են։ ՄԿԾ-երի նկարագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այնտեղ դասախոսների մասնագիտական որակների սպեցիֆիկ պահանջներ սահմանված չեն։ ՄԿԾ-ների փաթեթների «Ռեսուրսային ապահովվածությունը» հատվածում շատ հակիրճ ներկայացված է, որ կրթական ծրագիրն իրականացնելու համար առկա է համապատասխան գիտամեթոդական անհրաժեշտ որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ։ Նշված են կրթական ծրագրերն սպասարկող ամբիոնների դասախոսների թիվը և բաշխվածությունն ըստ գիտական աստիճանի և կոչման։ Չնայած այս հանգամանքին, ակնհայտ դարձավ, որ նոր աշխատանքի անցնող դասախոսների մասնագիտական որակների պահանջները սահմանվում և ստուգվում են աշխատանքային կարգով. ասվածը վերաբերում է ինչպես ասպիրանտների մասնագիտական աճը կազմակերպելու ավանդական ձևերին, այնպես էլ նոր աշխատանքի անցնող դասախոսների հետ վարվող հարցազրույցներին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերում դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների զետեղումը ձգձգվել է 2020թ. բռնկված համավարակի, իսկ այնուհետ՝ պատերազմական գործողությունների հարուցած դժվարությունների պատճառով։ Պարզ դարձավ նաև, որ այս գործողությունն իրականացնելու համար բուհում առկա է բավական ներուժ, բայց կա նաև մեթոդական աջակցության և ուղղորդման կարիք։

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ դասախոսների շրջանում օտար լեզվի տիրապետման և թվային հմտությունների պակասի խնդիր կա։ Միաժամանակ, համավարակով պայմանավորված, հեռվար ուսուցման ամիսներին Google Classroom գործիքակազմի օգտագործման հարցում դասախոսների վերապատրաստումները ցույց են տվել, որ նրանք պատրաստ են հեշտությամբ յուրացնել թվային պահանջվող հմտությունները։ Դասախոսների ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության նորմերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բեռնվածության մեջ գիտահետազոտական աշխատանքների համար ժամաքանակ դեռևս սահմանված չէ։

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Արցախի պետական համալսարանում դասախոսների պարբերաբար գնահատման քաղաքականությունն իրականացվում է մի շարք ֆորմալ և ոչ ֆորմալ մեխանիզմներով։

Առաջին կարևոր ֆորմալ մեխանիզմը դասախոսների մրցութային ընտրությունն է, որով փաստորեն մեկ, երեք կամ հինգ տարվա պարբերականությամբ գնահատվում են դասախոսների կատարողականները նրանց կողմից իրականացվող գիտամանկավարժական գործունեության հարցում: Այս մեխանիզմով գնահատումն իրենից ներկայացնում է բազմափուլ գործընթաց. թափուր պաշտոնների հաշվառում, մրցույթի հայտարարում, թեկնածուների հայտագրում, հայտերի ուսումնասիրություն և մրցույթի թույլտվություն, նախնական գնահատում ամբիոնի նիստում, ընտրություն ֆակուլտետային խորհրդում և հաստատում բուհի գիտխորհրդում: Ինչպես վերը նշեցինք, գնահատման այս մեխանիզմը կենտրոնանում է գերազանցապես դասախոսների կարողությունների մուտքային բնույթի չափանիշների վրա: Հատկանշական է, որ ԱրՊՀ-ը դեռևս չի վերլուծել այս մեխանիզմի արդյունավետությունը:

Երկրորդ կարևոր ֆորմալ մեխանիզմը ուսանողների կողմից դասախոսների գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման հարցումներն են: Գնահատման այս մեխանիզմի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ հարցումների արդյունքներն օգտագործվում են պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության ժամանակ, և սահմանված շեմը չապահովված դասախոսներին չի թույլատրվում մասնակցել մրցույթի: Այդուհանդերձ այս մեխանիզմի արդյունավետության ամբողջական վերլուծություն ևս կատարված չէ: Ուսանողական հարցումների արդյունքների վերիֆիկացման նպատակով ֆոկուս խմբեր բուհում կանոնավոր կերպով չեն կազմակերպվում: Փոխարենը ուսումնական գործընթացի պատասխանատուները հետամուտ են լինում հարցումների ընթացքում վերհանված խնդիրները դասախոսների և ուսանողների հետ քննարկելու և պարզելու հարցում:

Թեև ինքնավերլուծության մեջ նշված է, որ ուսանողական հարցումների արդյունքներն օգտագործվում են դասախոսների ինքնավերլուծության իրականացմանը և նրանց կողմից դասավանդման մոտեցումների և կիրառվող մեթոդների շարունակական բարելավմանը աջակցելու, պաշտոնակալման, առաջխաղացման նպատակով, ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման ժամանակ, աշխատանքային պայմանագրի վաղաժամ լուծման կամ երկարաձգման նպատակով: Սա վկայում է, որ ԱրՊՀ-ում ինքնըստինքյան առկա են գնահատման այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են դասախոսների ինքնավերլուծությունը և նրանց գնահատումը ուսումնական բեռնվածության բաշխմամբ: Այդուհանդերձ դասախոսների ինքնավերլուծության փաստաթղթավորված տարբերակներ առկա չէին: Փորձագիտական այցի ժամանակ նաև պարզ չդարձավ, թե ինքնավերլուծության ի՞նչ ֆորմալ գործընթացներ են առկա բուհում:

Դասախոսների գնահատման մեկ այլ ֆորմալ մեխանիզմ կարող է հանդիսանալ Արցախի պետական համալսարանում դասախոսների հավելավճարի կարգը, որը հաստատվել է 2018թ.-ից, սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով դեռևս գործողության մեջ չի մտել:

Դասախոսների գնահատման ոչ ֆորմալ մեխանիզմներ են դասալսումները, որոնք կատարվում են ըստ նախապես սահմանված ժամանակացույցի, արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերում: Պետք է նշել, որ դասալսումների արդյունքների, դրանց ընթացքում վերհանված խնդիրների փաստաթղթավորում բուհում չի կատարվում՝ խնդիրները պարզորոշ վերհանելու համար:

ԱրՊՀ-ում չի անցկացվում դասընթացների գնահատում՝ հիմնված դասընթացների վերջնարդյունքների ձեռքբերվածության աստիճանը պարզելու, դասավանդման ու ուսումնառության անրդյունահենության աստիճանը վերհանելու և այլ չափանիշների հիման վրա:

ԱրՊՀ-ում ներդրված չեն դասախոսների ինքնագնահատման և գործընկերային գնահատման մեխանիզմներ: Այստեղ բացակայում է նաև սկսնակ դասախոսների մենթորության վերաբերյալ բուհի հստակ քաղաքականությունը, ինչը ավելի շատ ավանդույթի ուժով է տեղի ունենում:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Դասավանդողների կատարելագործումը կարևորված է ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում: Այս ուղղությամբ բուհը նախատեսել է վերամշակել դասախոսների որակավորման բարձրացման ծրագիրը, կազմակերպել դասախոսների վերապատրաստումներ՝ ուղղված կրթական նոր տեխնոլոգիաների, դասավանդման ինտերակտիվ մեթոդների յուրացմանը, էլեկտրոնային ուսուցման դասընթացների մշակմանն ու յուրացմանը: Բուհը դասախոսների որակավորման բարձրացման գործող ծրագրի շրջանակներում շարունակական կերպով իրականացնում է վերապատրաստումներ: Պետք է նշել, սակայն, որ համաձայն ԱրՊՀ դասախոսների որակավորման բարձրացման 2012-2017թթ ծրագրի կատարման հաշվետվության, ծրագրի շրջանակներում գերազանցապես կարևորվում է անգլերենի գծով վերապատրաստումը:

Ինչպես արդեն նշել ենք, 2020թ. կորոնավիրուսի համավարակը առիթ հանդիսացավ Google Classroom հարթակի գործարկման համար, ինչի շրջանակներում մեծ թվով դասախոսներ վերապատրաստվեցին:

Փորձագիտական այցից հայտնի դարձավ, որ բուհը սկսել է վերապատրաստումներ կազմակերպել նաև վերջնարդյունքահեն դասընթացների ծրագրեր մշակելու, վերջնարդյունքահեն գնահատման մեթոդաբանության ոլորտներում: Այս գործընթացը համակարգվում է ԱրՊՀ որակի ապահովման կենտրոնի կողմից: Այստեղ սակայն, վերապատրաստումների ծավալն ու արդյունավետությունը տարբերվում է ֆակուլտետից ֆակուլտետ կամ ամբիոնից ամբիոն, և նշանակություն ունի, թե կառավարման միջին օղակներում ով է հետամուտ լինում գործընթացին:

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ ԱրՊՀ-ում առկա է համակարգչային գիտելիքների, մանկավարժական հմտությունների, ընդհանուր հետազոտական կարողությունների, տարբեր մասնագիտությունների արդի խնդիրների, դասավանդման նորարարական մոտեցումների և այլ ուղղություններով վերապատրաստումների կարիք: Խնդրի սրության պատճառներն առաջին հերթին օբյեկտիվ բնույթի են՝ պայմանավորված լինելով մայրաքաղաքից մեծ հեռավորությամբ (այլ բուհերի վերապատրաստումների ծրագրերին մասնակցելու հնարավորության իմաստով), ֆինանսական միջոցների սղությամբ, երկրորդ հերթին՝ հարցին ծրագրային խնդրալուծման մոտեցում չցուցաբերելու փաստով (այլ բուհերի փորձի ուսումնասիրություն, ծրագրի կազմում, հնարավորությունների վերհանում և այլն): Մյուս կողմից հատկանշական է, որ թեև բուհում առկա է դասավանդման որոշակի

առաջավոր փորձ, սակայն դրա փոխանցման ու տարածման ուղղությամբ բավարար ջանքեր չեն ներդրվում:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Արցախի պետական համալսարանն ավելի քան կարևորում է պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը, քանի որ դժվար է ապահովել լավագույն դինամիկ հոսունություն՝ առաջին հերթին մայրաքաղաք Երևանից (որտեղ կենտրոնացած է ՀՀ բուհերի մեծագույն մասը) մեծ հեռավորության վրա գտնվելով:

Արցախի պետական համալսարանում սահմանված են պրոֆեսորի, դոցենտի, ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի տարակարգերը, որոնցից յուրաքանչյուրը ենթադրում է ինչպես ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հատուկ չափ, այնպես էլ թույլատրելի գործառույթների ցանկեր: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տարակարգերի փոփոխությունների տարեկան տեմպը բնականոն է: 2015-2018թթ. ուստարիների տվյալները ցույց են տալիս, որ ԱրՊՀ հիմնական հիմունքներով աշխատող դասախոսների մոտ կեսն ունեն գիտական աստիճան և կոչում: Հիմնական հիմունքներով աշխատող դասախոսների միջին տարիքը 50 է, մինչդեռ աշխատանքի նոր ընդունվողներինը՝ 44-45: Հիմնական հիմունքներով աշխատող դասախոսները, անցնելով մրցույթ, հնարավորություն են ստանում մինչև հինգ տարի ժամկետով պաշտոնավարել: Ոչ հիմնական հիմունքներով աշխատող դասախոսների հետ կնքվում է մեկամյա աշխատանքային պայմանագիր: Ժամավճարային հիմունքներով դասավանդող և հրավիրյալ դասախոսների համակարգն ապահովումէ կրթական ծրագրերի ապահովվածությունը նեղ մասնագիտացում և գործնական հմտություններ ունեցող մասնագետներով:

Պրոֆեսորադասախոսական կազմը երիտասարդ կադրերով համալրումը տեղի է ունենում հիմնականում լավագույն շրջանավարտներին հարազատ բուհում աշխատանքի ընդունելով:

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ ԱրՊՀ-ը, այնուամենայնիվ, դասախոսական կադրային ռեզերվի որոշ խնդիրներ ունի, ինչը պայմանավորված է ինչպես կադրային հոսունության օբյեկտիվ սահմանափակումներով, այնպես էլ ոչ բարձր աշխատավարձերի հանգամանքով: Դասավանդող դասախոսների բացակայության դեպքում նրանց փոխարինելու խնդիրներ երբեմն առաջանում են, հատկապես, երբ խոսքը գնում է առավել գործնական բնույթի հատուկ դասընթացներ վարող դասախոսների մասին:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ինքնավերլուծության դիտարկումից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ, թեև ԱրՊՀ-ը չունի սկսնակ դասախոսների մենթորության հստակ մշակված քաղաքականություն և կանոնակարգ, այդուհանդերձ ոչ ֆորմալ եղանակով այն իրագործվում է: Ամբիոնի վարիչները, պրոֆեսորներն ու փորձառու դոցենտները ուղղորդում են ասպիրանտներին ու հայցորդներին ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական գործունեության մեջ՝ հետևյալ ձևերով.

- իրենց դասընթացներին ասպիրանտներին ու հայցորդներին մասնակից դարձնելով և փոխանցելով դասավանդման մեթոդները,

- դասալսումների միջոցով վերհանելով ասպիրանտների ու հայցորդների կատարողականի առավելությունները՝ խրախուսելով դրանք և խնդիրները՝ քննարկելով դրանց շտկման ուղիները,
- ամբիոնների նիստերին մասնակից դարձնելով ասպիրանտներին և հայցորդներին՝ նրանց հետ քննարկելով ամբիոնների գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության ուղղությունները, ծրագրերը։

Համաձայն ինքնավերլուծության, բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին նպաստող հանգամանքներ են տարակարգերի համար հետազոտական արդյունքի պահանջների սահմանումը, օտարերկրյա գործուղումների համար նախատեսվող որոշ միջոցները, ինչպես նաև, ամբիոնի ու ֆակուլտետի երաշխավորությամբ, լավ կատարողական ապահովող դասախոսների պարգևատրումները ինչպես գումարով, այնպես էլ մեդալով, պատվոգրով և խրախուսանքի այլ ձևերով։ Թեև բուհը մշակել և ընդունել է դասախոսների գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության համար տրվող լրավճարի հատկացման կանոնակարգ, այն փաստորեն դեռևս չի գործում՝ ֆինանսական միջոցների սղության պատճառով։ Խիստ սահմանափակ են նաև ԱրՊՀ-ի՝ ազդեցության գործակցով հանդեսներում դասախոսների տպագրվելու, արտասահմանյան գիտաժողովներում դասախոսների մասնակցության խրախուսման միջոցները։

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ ԱրՊՀ-ը խրախուսում է իր լավագույն շրջանավարտների դիմելը երրորդ աստիճանի կրթության (ասպիրանտուրա, հայցորդություն) և անցնելը գիտամանկավարժական աշխատանքի։

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար։

2018-2019 ուստարվա դրությամբ Արցախի պետական համալսարանի վարչական աշխատակազմի թիվը կազմել է մոտ 90, ուսումնաօժանդակ համակազմի թիվը՝ մոտ 45։ Վերջին տարիներին բուհում վարչական հատվածի կառուցվածքային, վարչական և ուսումնաօժանդակ կազմերի քանակական փոփոխությունները պայմանավորված են եղել կրթական ծրագրերում տեղի ունեցող փոփոխություններով և դրանց լավարկման տրամաբանությամբ։

ԱրՊՀ-ում կենտրոնական վարչական ապարատից զատ, ֆակուլտետային մակարդակում ուսումնական գործունեության կազմակերպման և օժանդակման գործառույթներ են իրականցնում դեկանը, ամբիոնի վարիչը (վերջինս, գիտամանկավարժական գործառույթներից զատ, կատարում է նաև վարչական աշխատանք), ֆակուլտետի մեթոդիստը, ամբիոնի լաբորանտը, գործակարգավորիչը և տեսուչը։ Կրթական ծրագրերի որակի, բովանդակության, վերահսկողության, բենչմարքինգի, աշխատաշուկայի հետ կապերի, հետազոտության կազմակերպման պատասխանատուն ամբիոնի վարիչն է, որի գործունեության արդյունավետությունը հաճախ կախված է դեկանի կողմից համակարգման գործառույթի որակից։ Փորձուսուցման կազմակերպման և աջակցման, հաշվետվությունների կատարման, կարգ ու կանոնի հաստատման և կազմակերպչական այլ հարցեր համակակարգվում են դեկանի կողմից։ Վարչական և ուսումնաօժանդակ համակազմերի աշխատողների գործառույթները սահմանված են համապատասխան ներքին իրավական ակտերով։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհում առկա է ուսումնաօժանդակ կազմը երիտասարդ, օտար լեզուների իմացությամբ և համակարգչային գիտելիքներ ունեցող աշխատակիցներով համալրելու միտում: Սակայն վարչական և ուսումնաօժանդակ համակազմերի պաշտոնյաների գործունեության գնահատման հիմքերի հստակ սահմանված չլինելը և մեխանիզմների գրեթե բացակայությունը (ինչը, ի դեպ, գիտակցվում է բուհի կողմից), նրանց օբյեկտիվ կարիքների վերհանված չլինելը հնարավորություն չեն տալիս մշակելու այդ աշխատակիցների կատարելագործման քաղաքականությունը:

Դատողություններ: Արցախի պետական համալսարանը ունի պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության փաստաթղթավորված քաղաքականություն, ինչը, թեև լավագույնս չի ապահովում ընտրության մրցակցային գործընթաց, այդուհանդերձ կարևոր հիմք է դասախոսների ներգրավման գործընթացը չափանիշներով կազմակերպելու և հետագայում այն լավարկելու համար: ՝ ստեղծելով դրա նորմատիվ հենքը և որոշ դեպքերում գործարկելով այն: Դասախոսական կազմի ընտրության և գնահատման գործում թեև ամրագրված են չափանիշներ (հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների քանակ, աշխատանքային ստաժ և այլն), որոնք ապահովում են գործընթացների օբյեկտիվությունը, այդուհանդերձ դրանց զուտ մուտքային բնույթ ունենալը այդ գործընթացներն առավելապես ֆորմալ են դարձնում: ԱրՊՀ-ում ուսումնական բեռնվածության ու հատկապես դրա բաշխվածության հարցը (երբ ուսումնական բեռնվածության մեջ լսարանային բաղադրիչը ծանրակշիռ գերակայում է, և թույլ է հետազոտական բաղադրիչը) որոշակիորեն խնդրահարույց է այն առումով, որ առկա ոչ բարձր աշխատավարձերի պայմաններում պարտաճանաչ դասախոսն իր մասնագիտական առաջընթացի վրա աշխատելու հնարավորությունից զրկվում է: Կրթական ծրագրի վերջնարդյունքն ապահովելու համար դասախոսը պետք է որոշ չափով նաև անհատական աշխատանքներ տանի ուսանողների հետ, իսկ մեծ թվով ուսանողների հետ, լսարանային շաբաթական մեծ բեռնվածության պայմաններում, անհնար է արդյունավետ աշխատել: Այնուամենայնիվ, դատելով դասախոսների բարձր մոտիվացվածության, իրենց դասավանդած դասընթացների համար անհրաժեշտ որակավորումներ ունենալու և այլ հանգամանքներից, փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսներն ունեն անհրաժեշտ կարողություններն ու հնարավորությունները՝ կրթական ծրագրերի վերջնարդյունքներն ապահովելու հարցում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԱրՊՀ-ում դասախոսներին ներկայացվում են մասնագիտական պահանջներ, որոնք ամրագրված են համապատասխան ընթացակարգում: Սակայն կրթական ծրագրերի վերջնարդյունքներից բխող մասնագիտական կարողությունների չամրագրվելն այդ կրթական ծրագրերում հնարավորություն չի տալիս, որ դասախոսների ընտրության ու գնահատման գործընթացները ֆորմալ ձևերից ու շրջանակներից դուրս բերվեն և իրականացվեն՝ հիմքում ունենալով նշված վերջնարդյունքները: Այս տեսանկյունից բուհը կշահեր, եթե կրթական ծրագրերում զետեղվեին հատկապես հետազոտությունը կրթությանը կապակցել ենթադրող ելքային բնույթի պահանջներ, ինչի իրացումը նշանակալիորեն կապահովեր կրթական վերջնարդյունքների ամբողջովին ձեռքբերումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ ԱրՊՀ-ում առկա է դասավանդողների գնահատման ուսանողական հարցումների համակարգը՝ հաշվի առնելով այն պրակտիկան, որ հարցումների արդյունքները կիրառվում են դասախոսների մրցութային ընտրության, աշխատանքային պայմանագրերի ձևակերպման ընթացքում: Մյուս կողմից այդ

հարցումների քանակական տվյալները վերիֆիկացնող ֆոկուս-խմբերի բացակայությունը կամ խիստ սակավությունը կարող է վտանգել դրանց արժանահավատությունը կամ հնարավորություն չտալ խնդիրներն առավել խորքային կերպով բացահայտելու համար: Դասալսումների իրականացումը կարևոր նշանակություն ունի դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման գործում: Դրական հանգամանք համարելով այն, որ դասալսումները ԱրՊՀ-ում տասնամյակների ավանդույթ ունեն, այդուհանդերձ դրանց, ինչպես և դրանց արդյունքների ու վերլուծությունների փաստաթղթավորված չլինելը բուհին զրկում է դասալսումներով վերհանված խնդիրներին համակարգված մոտեցում ցույց տալու հնարավորությունից: Հասկանալով հանդերձ ինքնագնահատման ու գործընկերնային գնահատման համակարգերի ներդրման դժվարությունները՝ գտնում ենք, որ այդ ներդնումն այնուամենայնիվ կամբողջացնի դասախոսների գնահատման պատկերն ու առավել հստակ կվերհանի առկա խնդիրները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ԱրՊՀ-ում ներդրված է դասախոսների որակավորման բարձրացման կրթական ծրագիր՝ կրեդիտային հիմքով: Անգլերենի ուսուցմանը նվիրված վերապատրաստումները, անշուշտ, դասախոսներին հնարավորություն կտան շարունակաբար բարելավել իրենց հետազոտական արդյունքները, տպագրվել արտասահմանյան հանդեսներում, ավելի շատ օտարալեզու նյութեր հանձնարարել ուսանողներին և այլն: Սակայն ծրագրի մյուս բաղադրիչների թուլությունը՝ ակտիվ և նորարարական դասավանդում, համակարգչային հմտություններ, դասավանդման մեջ հետազոտական մեթոդների յուրացում և այլն, դանդաղեցնում են կատարելագործումը: Այս տեսանկյունից բավական հուսադրող է կարճ ժամանակահատվածում Google Classroom հարթակի տարրերը յուրացնելու հանգամանքը, ինչը կարող է նաև հոգեբանական առումով դրական ազդեցություն ունենալ՝ դասախոսներին մղելով նորարարական դասավանդման նոր փուլերի:

Չնայած օբյեկտիվ դժվարություններին՝ Արցախի պետական համալսարանը կարողանում է ապահովել դասախոսական կազմի կայունությունը: Բուհում առկա դրական բարոյահոգեբանական մթնոլորտը, բարձրացվող խնդիրներին օպերատիվ լուծումներ տալը, ուսանողների մոտիվացվածությունը դրան նպաստող հանգամանքներ են: Կադրային որակյալ ռեզերվի հետ կապված որոշ խնդիրները (որոնք կարող են լինել ինչպես ցածր աշխատավարձերի, այնպես էլ երևանյան դասախոսական համայնքից տարածապես հեռու լինելու արդյունք) կարող են վտանգել ուսումնառության որակը և այս առումով հեռավար կրթությունը բարելավելու պահանջներ են դնում բուհի առաջ:

Դրական համարելով այն հանգամանքները, որ ԱրՊՀ-ը խրախուսում է իր լավագույն շրջանավարտներին՝ մնալու և աշխատելու բուհում, որ ԱրՊՀ-ը դրամական և այլ կարգի խրախուսական միջոցներ է ձեռնարկում որակյալ կատարողականի դեպքում, որ նպաստում է դասախոսների՝ գիտական աստիճաններ և կոչումներ ձեռք բերելու գործընթացին, փորձագիտական խումբն, այդուհանդերձ, գտնում է, որ դասախոսների մասնագիտական առաջընթացի հստակ քաղաքականության բացակայությունն այս գործընթացը չի դնում ուղղորդված հունի մեջ, այն չի դարձնում համակարգված, չափելի և կանխատեսելի: Այս տեսանկյունից շահեկան կլիներ սկսնակ դասախոսների մենթորության պրակտիկայի սկզբնավորումը և այն տարիների ընթացքում կայուն ավանդույթի վերածումը:

ԱրՊՀ-ում վարչական և ուսումնաօժանդակ համակազմի բավարար քանակությունը հիմնականում ապահովում է ուսումնական բնականոն գործընթացն ու նպաստում կրթական

ծրագրերի իրականացմանը: Այդուհանդերձ, աշխատանքների կատարողականի գնահատման, գործառույթների օպտիմալացման և հստակեցման, մենեջերիալ-կազմակերպչական կարողությունների և հաշվետվողականության հետ կապված որոշ խնդիրները կարող են ռիսկեր հարուցել կրթական ծրագրերի վերջնարդյունքներն իրենց ամբողջականության մեջ ապահովելու տեսանկյունից:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ առկա է լավ դասախոսական կազմ, ովքեր մոտիցված են անընդհատ բարելավում են իրենց կարողությունները, բուհը համալրում է իր դասախոսական կազմը օգտագործելով իր շրջանավարտների բազան, ՄԿԾ-ներում նեղ մասնագիտական պահանջները ամբիոնի վարիչների կողմից ոչ ֆորմալ ձևով սահմանված է, առկա է դասախոսների վերապատրաստումների ծրագիր, պարբերաբար իրականացվում են օտար լեզվի լավացման աշխատանքներ, դասախոսները բաց են փոփոխություններ կատարելու համար, ուսանողները բավարարված են դասախոսական կազմի բարձր որակներոով, ԱրՊՀ-ում դասավանդում են ոլորտի պրակտիկ ներկայացուցիչներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱրՊՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Արցախի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

Խորհրդատվություններ.

- Սահմանել դասախոսների ինքնագնահատման և գործընկերային գնահատման մեխանիզմներ:
- Վերանայել դասավանդումից ուսանողների բավարարվածության հարցումների բովանդակությունը՝ հարցերը վերաձևակերպելով ըստ խնդիրներ վերհանելու նպատակադրման, հարցումների արդյունքները վերիֆիկացնել ֆոկուս-խմբերի և խորը հարցազրույցների ձևաչափերով:
- ՄԿԾ-երում սահմանել դասախոսների մասնագիտական (ուշադրություն դարձնելով միջոլորտային մասնագիտությունների վրա) գիտելիքների, հմտությունների և կարողությունների պահանջներ:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՄՈՒՀ-ի 2019-2023թթ. ռազմավարական ծրագրում (ԱրՊՀ ՊՈԱԿ զարգացման ռազմավարական ծրագիր 2019-2023) գիտահետազոտական գործունեությունը սահմանված է որպես ՄՈՒՀ-ի գործունեության գերակա ուղղություններից մեկը: Այն ներկայացված է ՄՈՒՀ-ի առաքելության, ինչպես նաև նպատակների ու խնդիրների շրջանակում՝ իրականացման համապատասխան քայլերով: Մասնավորապես ԱրՊՀ ռազմավարական ծրագրում որպես հավակնություններ սահմանված են Արցախի կայուն զարգացման գերակա ուղղություններով

գիտա-հետազոտական թեմաների հնարավոր ցանկի ստեղծումը, ասպիրանտների և մագիստրանտների հետազոտական նախագծերում ներգրավվածության ապահովումը, գիտահրատարակչական գոր-ծունեության արդյունավետության բարձրացումը, միջազգային, ՀՀ և հանրապետական գիտական ծրագրերին, դրամաշնորհներին ԱրՊՀ հետազոտողների մասնակցությանը մեծացումը:

ԱրՊՀ 2019-2023թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանում նշված են հետազոտական գործունեության լավացմանն ուղղված միջոցառումներ և ակնկալվող արդյունքներ:

ԱրՊՀ-ն իրականացրել է որոշ քայլեր ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների համար, մասնավորապես ուսանողների հետազոտական թեմաների շտեմարան է ստեղծվել, մագիստրատուրայում Գիտահետազոտական աշխատանքի պլանավորում և մեթոդներ դասընթաց է ներդրվել:

Այդուհանդերձ այցի ընթացքում պարզ դարձավ, որ առկա չէ ո՛չ հետազոտության քաղաքականություն, ո՛չ հետազոտական առաջնահերթությունների հստակ սահմանում, կամ մեխանիզմներ, որոնք կաջակցեն բարձրորակ հետազոտական արտադրանքի ստեղծմանը: Ինչ վերաբերում է Արցախի կայուն զարգացման գերակա ուղղություններով գիտահետազոտական թեմաների հնարավոր ցանկին, ապա ներկայացված ցանկը արտացոլում է ՄՈՒՀ-ի անհատ հետազոտողների կամ կոնկրետ ամբիոնների հետազոտական հետաքրքրությունների շրջանակը:

Վերջին տարիներին ավելացել է ԱրՊՀ գիտության ֆինանսավորումը: Եթե 2018 թվականի ծախսերի նախահաշվում գիտական աշխատանքների համար նախատեսված է 2500 000, ապա 2019-2021 թվականի նախահաշվներում 7500 000[10]:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ՄՈՒՀ-ի 2019-2023թթ ՌԾ-ն ներկայացնում է հետազոտության ոլորտի երկարաժամկետ պլանավորման ռազմավարությունը, որի իրականացման ուղղությամբ մշակված է ժամանակացույց-պլան: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ սահմանված աշխատանքների մեծ մասը դեռևս ընթացքի մեջ է:

Իրականացվում են կարճաժամկետ ծրագրեր, որոնք ներկայացված են ամբիոնների տարեկան գիտահետազոտական պլաններում: Սակայն ամբիոնների տարեկան պլանները հիմնականում չեն հիմնվում ՄՈՒՀ-ի կամ կոնկրետ ֆակուլտետի ՌԾ-ի վրա, այլ արտացոլում են անհատ դասախոսների հետազոտական հետաքրքրությունները: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ որոշ ամբիոններում կատարվում են նաև համակարգված հետազոտություններ, օրինակ՝ Ս.Աբրահամյանի անվ. Հայոց լեզվի (Արցախի ժողովրդագիտություն, Բարբառագիտություն), Պատմության և քաղաքագիտության (Արցախի գյուղերի պատմություն), որոնց մեջ ակտիվորեն ներգրավվում են ուսանողները իրենց փորձուսուցման կամ անհատական աշխատանքների շրջանակում: Ընդհանուր առմամբ, Արցախի հիմնախնդիրների շուրջ հետազոտություններ իրականացվում են հումանիտար գիտությունների ոլորտում, իսկ բնագիտական ուղղությունը այս առումով ավելի պասիվ է: Այս ոլորտում որպես դրական զարգացում կարելի է նշել ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի կողմից

[10] Տեքստը խմբագրվել է համալսարանի դիտարկումների արդյունքում:

ներկայացված «Կենսաբանության արդիականացումն Արցախում» ծրագրի շրջանակներում 2018թ. սեպտեմբերին հիմնված կենսաբանության լաբորատորիան:

Գիտահետազոտական զարգացման մաս է կազմում նաև «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր» պարբերականի հրատարակումը՝ տարեկան երկու անգամ՝ երկու առանձին պրակներով («Հասարական գիտություններ», «Բնական գիտություններ»):

Դրական փաստ է նաև ՄՈՒՀ-ում գիտաժողովների, այդ թվում նաև միջազգային գիտաժողովների կազմակերպումը, որոնց ակտիվ մասնակցում են ուսանողները և պրոֆեսորադասախոսական կազմը: Ուսանողները և դասախոսները մասնակցում են նաև ՀՀ համալսարաններում կազմակերպված գիտաժողովներին:

Չնայած իրականացված տարրաբնույթ աշխատանքների, ընդհանուր առմամբ, բացակայում են կատարված հետազոտությունները ուղղորդելու, համակարգելու և միջազգայնացնելու մեխանիզմները և միջնաժամկետ ու երկարաժամկետ ռազմավարությունները, որոնք կհիմնվեն երկարաժամկետ ռազմավարության վրա:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՄՈՒՀ-ում մշակվել են մի շարք կարգեր և կանոնակարգեր զարգացնելու հետազոտության իրականացումը, մասնավորապես՝ ԱրՊՀ գիտական, մեթոդական և այլ գրականության հրատարակման կարգ, ԱրՊՀ գիտական տեղեկագրի հրատարակման կանոնակարգ, ակադեմիական ազնվության և անազնվության մասին կանոնակարգ: Հարկ է նշել, որ առկա կարգերը չեն սահմանում ԱրՊՀ գիտահետազոտական ուղղության զարգացման քաղաքականությունը, որը կնախանշեր հետազոտության արդյունքում բուհի զարգացումը:

ՄՈՒՀ-ը խրախուսում է ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեությունը՝ տպագրելով նրանց գիտական հոդվածները, մենագրությունները կամ ուսումնամեթոդական ձեռնարկները:

ՄՈՒՀ-ը նաև սահմանել է ՊԴ համակազմի մրցույթային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգ, որում կարևորվում է նաև գիտահետազատոկան բաղադրիչը:
Որպես դրական փաստ պետք է նշել նաև, որ ՄՈՒՀ-ում գործում են մի շարք կենտրոններ՝ Հայագիտական կենտրոն, Հոգեբանական կենտրոն, Իրավաբանական կլինիկա: Այնուամենայնիվ, Հոգեբանական կենտրոնն ու Իրավաբանական կլինիկան հիմնականում իրականացնում են խորհրդատվական աշխատանքներ, և հետազոտական ոլորտը դրանց գործունեության էական մասը չի կազմում:

Ընդհանուր առմամբ, ՄՈՒՀ-ում գործող կենտրոնների, ինչպես նաև ֆակուլտետների միջև չկա սերտ համագործակցություն, մասնավորապես միջգիտակարգային հետազոտություններ իրականացնելու ուղղությամբ: Որոշակի փոխադարձ կապ է առկա նույն ֆակուլտետում գործող ամբիոնների միջև, սակայն դա ևս զարգացած չէ:

Թեև 2017-ից ի վեր որոշակի դրական տեղաշարժ է նկատվում դրամաշնորհների ձեռքբերման ուղղությամբ, համակարգային մոտեցում կամ հստակ մեխանիզմներ չեն ներդրվել: Դրամաշնորհները հիմնականում ստանում են միայն Արցախի հանրապետական գիտության կոմիտեից և սահմանափակ ֆինանսավորում ունեն՝ մինչև 60 000 դրամ: Ըստ այդմ էլ քիչ թվով (3-4) ուսանողներ(ասպիրանտ և հայցորդ) են ներգրավված գիտահետազոտական աշխատանքներում: ՀՀ գիտության պետական կոմիտեից կամ արտերկրից դրամաշնորհներ այս շրջանում առկա չեն:

Որոշակի առաջընթաց է նկատելի գիտահրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստելու ուղղությամբ: Աշխատանքներ են կատարվել համալսարանում հրատարակվող գիտական պարբերականների որակը բարձրացնելու ուղղությամբ, ինչպես նաև համալսարանի դասախոսների և գիտնականների արժեքավոր և որակյալ աշխատությունների հրատարակման, դասագրքաստեղծ գործունեության, գիտական արդիական մենագրությունների հրատարակման ուղղությամբ:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

2019-2023 ՌԾ-ում ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը մի շարք քայլերի միջոցով:

ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը բավականին ակտիվ է համալսարանի պարբերականում հոդվածներ հրատարակելու առումով: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ վերջին տարիներին նվազել են միջազգային պարբերականներում համալսարանի դասախոսների գիտական աշխատանքների հրապարակումները: 2018-2019թթ. միայն 6 աշխատանք է տպագրվել արտասահմանում, այն էլ առավել քիչ միջազգային համբավ ունեցող պարբերականներում: Այս հանգամանքը ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության մեջ հիմնավորվում է այն փաստով, որ մինչև այժմ դասախոսական կազմի գնահատման ժամանակ միջազգային ամսագրերում տպագրությունները հաշվի չեն առնվել: ՄՈՒՀ-ում չկան նաև տվյալներ միջազգային պարբերականներում տպագրված գիտական աշխատությունների մեջբերումների ցուցանիշի մասին:

Բացի, այդ ՀՀ կամ արտասահմանյան բուհերի հետազոտողների և գիտնականների հետ համատեղությամբ ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի տպագրված հոդվածների քանակը խիստ սահմանափակ է /այս առումով աչքի է ընկնում կենսաբանության ամբիոնը/, չկան նաև համատեղ գիտահետազոտական ծրագրեր, թեև ՄՈՒՀ-ն ունի պայմանագրեր և համաձայնագրեր ՀՀ և արտասահմանյան մի շարք համալսարանների հետ[11]:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ԱրՊՀ-ում խրախուսվում է ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծումը: Փորձագիտական այցի շրջանակում պարզ դարձավ, որ ՊԴ կազմը բավականին մեծ ակտիվություն է ցուցաբերում նման ձեռնարկներ կազմելու ուղղությամբ: Բոլոր ամբիոններում առկա էին ԱրՊՀ դասախոսների կողմից կազմված դասագրքեր և ձեռնարկներ, որոնք օգտագործվում են տրամադրվող դասընթացներում:

ԱրՊՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներից է դիտարկվում բոլոր ՄԿԾ-ներում ընդգրկված դասընթացներում ինքնուրույն/անհատական աշխատանքի կատարումը ուսանողների կողմից, որի ժամանակ ուսանողները կատարում են վերլուծական աշխատանք: Այնուամենայնիվ ՄՈՒՀ-ում ինքնուրույն աշխատանքների արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ չկան և դեռևս հիմնվում են դասախոսների բանավոր դիտարկումների վրա: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ հետազոտական և վերլուծական մասը քիչ է ներկայացված ինքնուրույն աշխատանքներում:

Մեկ այլ մեխանիզմ է ուսանողների կողմից կատարված հետազոտությունները ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի շրջանակներում: Ուսանողները

[11] Տեքստը խմբագրվել է համալսարանի դիտարկումների արդյունքում:

հնարավորություն ունեն առաջարկել իրենց նախընտրելի թեման: ԱրՊՀ ՈԱԿ-ը հետևում է, որ թեմաները չկրկնվեն՝ հաշվի առնելով առնվազն վերջին երեք տարվա տվյալները: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի դիտարկումը ցույց տվեց, որ դրանց մի մասը նկարագրական բնույթի են և թերի է հետազոտական մասը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱրՊՀ-ն ջանքեր է գործադրում գիտահետազոտական ուղղության զարգացման համար: Այնուամենայնիվ չնայած հետազոտությունը պաշտոնապես առաջնահերթություն է համարվում ռազմավարական ծրագրում, այն ԱրՊՀ գործունեության ամենաքիչ զարգացած ուղղություններից է: Հետազոտության ռազմավարության և հետազոտական առաջնահերթությունների հստակ սահմանումը կնպաստի ոլորտի համաչափ զարգացմանը, ինչպես նաև կնախանշի բուհի զարգացումը առաջիկա տարիներին, իսկ հետազոտության իրականացման հստակ մեխանիզմների մշակումն ու իրագործումը կաջակցեն բարձրորակ հետազոտական արտադրանքի ստեղծմանը:

ԱրՊՀ-ում ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում խթանելու համար ներդրվել է Հետազոտության պլանավորում առարկան, բոլոր առարկաների շրջանակներում ուսանողները ինքնուրույն աշխատանքներ են իրականացնում: Կարելի է ենթադրել, որ նշված աշխատանքները կարող են նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքներ իրականացնելու, քննական և վերլուծական մտածողության հմտությունների զարգացմանը, նաև խթանել ուսանողների որոշակի շրջանակի հետաքրքրությունը գիտության և գիտահետազոտական աշխատանքների հանդեպ: ՄՈՒՀ-ի կողմից համապատասխան ուղղորդման և նպաստավոր պայմաններ, օրինակ՝ օտար լեզվի դասընթացներ, գիտահետազտական աշխատանքի համար լրավճար, ապահովելու դեպքում հնարավոր է ստեղծել երիտասարդ գիտնականների թիմ, որը կարող է իրականացնել միջգիտակարգային ուսումնասիրություններ, զբաղվել Արցախի հիմնախնդիրների հետազոտությամբ և հետագայում նաև միջազգայնացմամբ:

Դրական կարելի է գնահատել նաև գիտահրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստելու ուղղությամբ տարված աշխատանքները՝ խթանելու պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքները: Գիտահետազոտական աշխատանքները կարևորվում են նաև ՊԴ կազմի մրցույթային ընտրության ընթացակարգում:

Մյուս կողմից, ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության քննարկման և փորձագիտական այցի արդյունքում վեր հանվեցին մի շարք խնդիրներ: Դրանց մեծ մասը առնչվում է 2019-2021թթ ռազմավարական ծրագրում սահմանված գիտահետազոտական նպատակների իրատեսականությանը, դրանց իրագործման համար առաջադրված խնդիրների ուղղությամբ համակարգված աշխատանքների, մշակված քաղաքականության և ընթացակարգերի, Արցախի հիմնախնդիրներին վերաբերող գիտական ուղղությունների հստակ ցանկի բացակայությանը: Գիտահետազոտական աշխատանքները կրում են ապակենտրոնացված բնույթ՝ հիմնականում արտացոլելով առանձին դասախոսների գիտահետազոտական նախասիրությունները, բացառությամբ Հայագիտական կենտրոնի և մի քանի ամբիոնների աշխատանքները, որոնք որոշ չափով համակարգված են: ՄՈՒՀ-ում դեռևս չեն իրականացվում միջգիտակարգային հետազոտություններ և առկա չեն հետազոտությունների միջազգայնացմանը ուղղված մեխանիզմներ: Փաստացի, չի

իրականացվում միջգիտակարգային հետազոտական թիմերի ներգրավվածությամբ ոչ մի նախագիծ: Այս ուղղությամբ ռազմավարական նպատակները չեն իջեցվել ֆակուլտետների ու ամբիոնների մակարդակ, և նրանց իրականացումը չի համակարգվում համալսարանի մակարդակում: Թվում է, թե իրականացվող նախագծերը կախված են անհատ հետազոտողների նախաձեռնությունից և չեն սահմանվում համապարփակ հետազոտական պլաններ: Այս ամենը խոչընդոտում է սահմանված նպատակների իրագործմանը և դասախոսաների մոտ հետազոտությամբ զբաղվելու մոտիվացիային:

ԱրՊՀ-ում իրականացվում են հետազոտական մի քանի նախագծերը, սակայն դրանք չեն համապատասխանում գիտական հետազոտությունների սահմանմանը, քանի որ դրանք փորձագիտական ծառայություններ են (օրինակ Իրավաբանական կլինիկայի կամ Հոգեբանական կենտրոնի կողմից տրամադրվող ծառայություն): ԱրՊՀ անձնակազմի կողմից կատարված տպագրությունները փոքրաքանակ են և տպագրվում են տեղի ամսագրերում: Սա բացատրվում է նրանով, որ դասախոսները իրականում հետաքրքրված չեն հետազոտությամբ, քանի որ մինչև հիմա դասախոսական կազմի գնահատման ժամանակ միջազգային ամսագրերում տպագրությունները հաշվի չեն առնվել: Հայտնի չէ նաև, թե այս հրապարակումները որքանով են հայտնի գիտական հանրությանը, քանի որ հղումների մասին տեղեկատվություն չի հավաքագրվում: Այս աշխատանքների իրականացումը կնպաստի բոլոր ոլորտներում հետազոտական գործունեության համակարգված աշխատանքների իրագործմանը:

Հետազոտության ոլորտում ԱրՊՀ-ի այս թույլ առաջընթացը կապված է հետազոտությունը բավարար կերպով դասավանդման գործընթացում ներառված չլինելու հանգամանքով: Առկա չեն կառույցներ, որոնք կնպաստեն գիտական հետազոտությունների իրականացմանն ու տեխնոլոգիաների փոխանցմանը գործարարության կամ արդյունաբերության ոլորտներ:

Զարգացման ներկա փուլում հետազոտության ոլորտում առաջընթաց ունենալը պահանջում է առավել արժեքավոր հետազոտություններին և հետազոտողներին աջակցության տրամադրում, որը կարող է հանդես գալ անհատական առաջխաղացման և համալսարանի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության տեսքով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում հետազոտության կազմակերպումը և զարգացման գործընթացները իրականացվում են ոչ համակարգված ձևով, հետազոտությունները հիմնականում իրականացվում են դասախոսների անհատական նախաձեռնություններով, ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներում ցածր է, ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում հետազոտական բաղադրիչը թույլ է, հստակ սահմանված չեն հետազոտական ուղղությունները, ուսանողների գնահատման մեջ հետազոտական բաղադրիչին շատ քիչ միավոր է հատկացվում, որը չի ազդում ընդհանուր գնահատականի վրա, ընդհանուր առմամբ կրթության հետազոտահեն լինելու խնդիր կա, ՌԾ նպատակները չեն հստակեցվում և համակարգվում համապատասխան հետազոտական քաղաքականությամբ, հետազոտության միջազգայնացում առկա չէ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱրՊՀ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

Խորհրդատվություններ.

- Մշակել իրականացված հետազոտությունների որակի գնահատման մեխանիզմ:
- Ստեղծել գործարարություն-համալսարան հետազոտական համագործակցությունը խթանող հարթակ:
- Ստեղծել ֆինանսական ֆոնդ՝ աջակցելու ԱրՊՀ-ի համար առաջնահերթություն համարվող գիտահետազոտական ծրագրերի իրականացմանը :

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Համալսարանը իր ենթակայության տակ ունի 4 մասնաշենք և կից հանրակացարան: Ըստ ինքնավերլուծության ՄՈՒՀ -ում առկա է գրադարան և 2 ընթերցասրահ, որոնցից 1-ը ուսանո-ղական (համակարգչային տեխնիկայով և համացանցով ապահովված), մյուսը՝ գիտական: Ընթերցասրահները միաժամանակ կարող են սպասարկել մոտ 39 ընթերցողի: Գրադարանը պարբերաբար համալրվում է անհրաժեշտ գրականությամբ: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ գրադարանը համագործակցում է ՀՀ տարբեր գրադարանների հետ գրքերի համալրման հետ կապված: Ինչպես նաև առկա է համագործակցություն Շվեյցարական հիմնադրամի հետ, որի շրջանակենրում ԱրՊՀ-ն ձեռք է բերել 3495000 դրամի գիրք[12]:

Ներկայում, բնագիտական ուղղությամբ ժամանակակից գրականությունը սակավաթիվ է: Ուսանողներին հասանելի են գրականության որոշ էլեկտրոնային ռեսուրսներ:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԱրՊՀ-ում կառուցվում է նոր մասնաշենք, որտեղ կլինեն նոր սարքավորումներով բնագիտական լաբորատորիաներ և ժամանակակից գրադարան, որը կսպասարկի ինչպես բուհի անձնակազմին և ուսանողներին, այնպես էլ հանրությանը: Ձեռք է բերվել համագործակցություն Հայաստանում Ամերիկյան Համալսարանի գրադարանի հետ նոր կառուցվող գրադարանի մասով, որը հնարավորություն կտա հասանելություն ստանալ միջազգային ցանցերին:

Ըստ ինքնավերլուծության ԱրՊՀ-ում առկա են 7 լաբորատորիաներ և 6 համակարգչային լսարաններ, սակայն այդ լաբորատորիաները համալրված չեն ժամանակակից սարքավորումներով: Նոր մասնաշենքի կառուցմամբ նախատեսվում է լուծել այս խնդիրը:

ԱրՊՀ-ում առկա է երկու բուժկետ, որը համալրված է առաջին օգնության բոլոր անհրաժեշտ դեղորայքներով, առկա է հիվանդների գրանցման մատիան:

ԱրՊՀ-ում գործում է Իրավաբանական կլինիկա, որտեղ հասարակությունը կարող է դիմել որևէ հարցով և ստանալ անհրաժեշտ խորհրդատվություն Իրավաբանական կլինիկայի իրավաբանից: ԱրՊՀ-ում գործում է նաև Հոգեբանական կենտրոնը, որը սպասարկում է ինչպես ԱՀ հասարակությանը այնպես էլ ուսանողներին:

[12] Տեքստը խմբագրվել է համալսարանի դիտարկումների արդյունքում:

ԱրՊՀ-ում առկա է նաև նախնական զինվորական պատրաստվածության սենյակ, որը հագեցած է անհրաժեշտ տեխնիկայով:

ԱրՊՀ-ում առկա է տպարան, որը հագեցված է մի քանի տպագրական սարքավորումներով, իսկ ԱրՊՀ-ում մշակվող ձեռնարկները տպագրվում են տպարանում:

ՄՈՒՀ-ում նաև ներդրված է «Google Classroom» համակարգը, ինչը տալիս է ուսանողներին ավելի մատչելի հասանելիություն դասընթացի նյութերին: ՄՈՒՀ-ը նաև ունի բավական թվով համակարգիչներ դասընթացների և քննությունների կազմակերպման համար, սակայն համակարգիչների բազան մոտակա ժամանակ նույնպես թարմացման կարիք կունենա:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ըստ ինքնավերլուծության ՄՈՒՀ-ի ֆինանսական եկամուտների մեծ մասը կազմվում են վարձավճարներից (51.9%-ը) և պետական ֆինանսավորումից (42.6%-ը) ինչպես նաև այլ եկամուտներից (5.5%-ը): Գիտական աշխատանքների գծով ծախսերն վերջին երկու տարիների ընթացքում ավելացել են 3 անգամ:

Ֆինանսական ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում աշխատավարձերի ֆոնդին: Սակայն ՄՈՒՀ-ը փորձում է հայթհայթել ֆինասական այլ աղբյուրներ ռեսուրսների բարելավման համար: Նոր կառուցվող մասնաշենքը զգալիորեն կբարելավի ենթակառուցվածքների մակարդակը: Պետք է նշել, որ ներկայում ՄՈՒՀ-ում ֆինանսական պլանավորումը չի իրականացվում ըստ ռազմավարական ծրագրի նպատակների:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ըստ ինքնավերլուծության ԱրՊՀ կանոնադրության 7-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ համալսարանը ինք-նուրույն է որոշում բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, իրականաց-նելու աշխատողների ընտրությունը, նշանակումը, բաշխումը և ատեստավորումը՝ ներառյալ գիտամանկավարժական կազմի համալրումը, պրոֆեսորադասախոսական կազմի, գիտա-կան եւ ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կար-գերը: Ֆինանսական միջոցների կառավարման և դրանց նպատակային բաշխման հիմքում են տարեկան բյուջեի նախահաշվի կազմումն ու բյուջեի կատարման վերահսկողությունը՝ հաշվետվությունների ներկայացման միջոցով: Բյուջեի կատարման կառավարման և մշտադիտարկման նպատակով հաշվապահական հաշվառման բաժինը եռամսյակային կտրվածքով ներկայացնում է հաշվետվություն ստաց-ված մուտքերի և ելքերի վերաբերյալ՝ նշելով փաստացի շեղումները:

Սակայն փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ ԱրՊՀ-ում առկա չէ կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Ըստ ինքնավերլուծության ԱրՊՀ-ում ռեսուրսների պլանավորումը և բաշխումը իրականացվում է ըստ ՌԾ-ում նախատեսված խնդիրների: Պրոֆեսորադասախոսական

անձնակազմի ուսումնական բեռնվածության բաշխումն իրա-կանացվում է ուսումնական տարվա վերջին: Յուրաքանչյուր ամբիոն ուսումնական աշ-խատանքների գծով պրոռեկտորին է ներկայացնում ամբիոնի դասախոսների համար նախա-տեսվող բեռնվածությունը, որը նրանց աշխատավարձերի հաշվարկման և բյուջեում աշխա-տավարձին ուղղվող ռեսուրսների պլանավորման հիմք է ծառայում:

Լսարանային ֆոնդի բաշխումն ու պլանավորումը իրականացվում են ֆակուլտետների կողմից ուսումնական տարվա սկզբին՝ ելնելով յուրաքանչյուր մասնագիտությամբ սովորող ուսանողների թվից:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Ըստ ինքնավերլուծության համալսարանում տեղեկատվության տարածմանն ու շահակիցների իրազեկվածության բարձրացմանն էապես նպաստում է կայք էջի միջոցով տեղեկատվության տարածումը: Կայ-քում տեղադրվում է ԱրՊՀ կառավարման մարմինների, կառուցվածքի, հաշվետվությունների, ընդունելության, ֆակուլտետների, ընթացիկ նորությունների, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:

COVID19 համավարակի պայմաններում ՄՈՒՀ-ին հաջողվել է ներդնել «Google Classroom» համակարգը և կարճ ժամանակում վերապատրաստել ՊԴ կազմը այդ համարգից օգտվելու համար: Ներդրված համակարգը կարողացել է ապահովել ՄՈՒՀ-ի անխափան աշխատանքը առցանց ուսուցման պայմաններում: Փորձագիտական այցը ցույց տվեց, որը ՊԴ կազմը և ուսանողները դրական են գնահատում «Google Classroom» համակարգի կիրառման փորձը: ՄՈՒՀ-ի կայք էջը նույնպես տրամադրում է օգտակար ինֆորմացիա. ուսանողները կարող են տեսնել դասացուցակներ, ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի աշխատակցիներ կոնտակտային տվյալներ և նորություններ:

ՄՈՒՀ-ում հաստատված է առաջարկությունների, դիմում-բողոքների ներկայացման և քննարկման կարգը, սակայն դիմումները ընդունվում են միայն թղթային եղանակով:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Փորձագիտական այցից և ինքնավերլուծությունից պարզ դարձավ, որ ներկայումս ՄՈՒՀ-ը չի կարողանում ապահովել հատուկ կարիք ունեցող ուսանողների պահանջները: ՄՈՒՀ-ի ղեկավարության հավաստիացմամբ նոր կառուցվող մասնաշենքը տրամադրելու է այդպիսի հնարավորություններ:

ՄՈՒՀ-ում գործում են երկու բուժկետ, որոնք հագեցած են առաջին օգնության ցուցաբերման համար անհրաժեշտ պարագաներով: Բուժկետի ծառայություններից ազատորեն կարողանում են օգտվեն ինչպես աշխատակիցները, այնպես էլ ուսանողները: Շահակիցների շրջանում անցկացված հարցումները ցույց են տալիս, որ ուսանողների 69,2%-ն են բավարարված բուժկետի ծառայություններից: ՄՈՒՀ-ում գործում է նաև ՔՊ շտաբ, հարկերում առկա են տարահանման սխեմաները և կրակմարիչներ: Իրականացրած հարցումներրի արդյունքում պարզ է դառնում, որ ուսանողների 52,6%-ն են բավարարված անվտանգության ծառայությունից:

Ըստ ինքնավերլուծության բուհը չունի կենտրոնացված սննդի կազմակերպման համակարգ, այն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի կողմից վարձակալական

հիմունքներով, ընդ որում դրանք երկուսն են, որոնց սանիտարահիգիենիկ վիճակը վերահսկվում է բուհի կողմից: Համալսարանի հիմնանորոգվող մասնաշենքում այդ խնդիրները հիմնովին լուծված կլինեն:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ՈԱԿ-ի կողմից պարբերաբար կատարվում են հարցումներ ռեսուրսներից նրանց բավարավածության գնահատման նպատակով: Այսպիսի օրինակներ են բուժկետի կամ անվտանգության ծառայությունների որակի գնահատման նպատակով կատարված հարցումները: Սակայն տվյալ պահին, այդ հարցումների արդյունքները ոչ միշտ են խորքային վերլուծվում: Քիչ են հարցումների հիման վրա վերհանված խնդիրների լուծման օրինակները:

Պետք է նշել նաև, որ առկա չեն ռեսուրսների բավարարվածությունից ԱրՊՀ-ի շահակիցների հարցումների արդյունքների մասին շահակիցներին տեղեկացնելու հիմքեր: Ներքին շահակիցները չեն տեղեկանում հարցաթերթերում իրենց կողմից նշված խնդիրները լուծելու, վերհանված կարիքները բավարարելու ուղղությամբ բուհի պլանավորած քայլերի վերաբերյալ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ԱրՊՀ-ում առկա են համապատասխան ուսումնական մասնաշենքեր, որոնցում համապատասխանաբար առկա են ուսումնական լաբորատորիաներ և գրադարան: Այդուհանդերձ, նոր մասնաշենքի կառուցումը, լաբորատորանիաների և գրադարանի վերազինումը կնպաստի ուսումնառության առավել արդյունավետ իրականացմանը:

Դրական է գնահատվում այն, որ համավարակով պայմանավորված, բուհում ներդրվել է «Google Classroom» համակարգը, որը տվել է ուսանողներին ավելի մատչելի հասանելիություն դասընթացի նյութերին:

Բուհում ֆինանսական միջոցները գոյանում են մեծամասամբ ուսման վարձավճարներից, և փորձագիտական խմբի գնահատմամբ, ուսանողների թվաքանակի նվազումը, եկամտի աղբյուրների քիչ բազմազանությունը (եկամուտների կեսից ավելին կազմվում է վարձավճարներից, իսկ 42%-ը՝ պետական բյուջեից սուբսիդավորում) վտանգում են համալսարանի երկարաժամկետ ֆինանսական կայունությունը:

Փորձագիտական խումբը դրական է գանահատում այն, որ բուհում առկա է տեղեկատվության տարածման և շահակիցների իրազեկվածության բարձրացման կայուն համակարգ: Բուհում առկա է նաև ներքին ցանց, սակայն էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կազմակերպման համար չեն կիրառվում ժամանակակից համակարգեր: Փաստաթղթավորման էլեկտրոնայնացումը կնպաստի ներքին փաստաթղթաշրջանառության արդյունավետության բարձրացմանը:

Դրական է գնահատվում այն, որ ՈԱԿ-ի կողմի պարբերաբար իրականացվում են հարցումներ ռեսուրսային բազայից բավարարվածությունը ստուգելու նպատակով, սակայն առկա չեն ռեսուրսների բավարարվածությունից ԱրՊՀ-ի շահակիցների հարցումների արդյունքների մասին շահակիցներին տեղեկացնելու մշակված մեխանիզմներ, որը կարող է վտանգել բացահայտված խնդիրների հիման վրա բարելավումների իրականացմանը:

Փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում իրականացնել ռեսուրսների թարմացումների պլանավորում, ինչը թույլ կտա գնահատել նաև անհրաժեշտ ֆինանսական ծախսերը:

Եզրակացություն: Հաշվի առնելով, որ ԱրՊՀ-ում ուսումնառության միջավայրը ընդհանուր առմամբ արդյունավետ է, առկա ռեսուրսները նպաստում են ՄԿԾ-ների արդյունավետ իրականացմանը, ԱրՊՀ-ում առկա է գրադարան և գրադարանը պարբերաբար համալրվում է անհրաժեշտ գրականությամբ ինչպես միջազգային գործընկերների, այնպես էլ տեղացի գործընկերների կողմից, ԱրՊՀ-ում պատրաստվում է նոր մասնաշենք, որտեղ վերազինված և համալրված կլինեն ինչպես բնագիտական լաբորատորիաները, այնպես էլ ժամանակակից գրադարանը, ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը կատարվում է ներքնից վերև պահանջով, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը բուհի ինստիտուցիոնալ կարողությունները Չափանիշ 7-ի պահանջներին, գնահատում է **բավարար**:

Խորհրդատվություններ:

- Մշակել կրթական ենթակառուցվածքի պարբերաբար գնահատման ընթացակարգ:
- Հարմարեցնել ենթակառուցվածքը հատուկ կարիքներ ունեցող մարդկանց կարիքներին:
- Ապահովել ուսանողների մուտքը էլեկտրոնային շտեմարաններ և միջազգային մատենագիտական շտեմարաններ:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Ըստ ինքնավերլուծության՝ ԱրՊՀ հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքներով, ԱՀ կառավարության մի շարք որոշումներով, ինչպես նաև «ԱրՊՀ կանոնադրությամբ»: Կառավարման բարձրագույն մարմին ԱրՊՀ Խորհուրդն է, որի տարեկան նիստերին ռեկտորի կողմից ներկայացվում է տարեկան հաշվետվությունը: Բոլոր ստորաբաժանումները սահմանված ձևաչափով ներկայացնում են հաշվետվություններ, որոնք ամբողջանում են մեկ փաստաթղթի՝ ուստարվա գործունեության հաշվետվության ձևով:

Տարվա գործունեությունը ներկայացնող հաշվետվությունում ներառվում է նաև ֆինանասական հաշվետվությունը, որը մշակվում է հաշվապահության կողմից: Սա մեկ ամբողջական փաստաթղթի ձևով հասանելի է համալսարանի պաշտոնական կայքում:

Ինչպես ներկայացված է ինքնավերլուծության մեջ՝ համալսարանի կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված է նաև ֆակուլտետների մակարդակով հաշվետվողականության համակարգ: Դեկանները հաշվետվությունը ներկայացնում են ֆակուլտետի մեծ խորհրդին, իսկ առանձին ստորաբաժանումների ղեկավարները՝ գիտխորհրդին:

Բացի ԱրՊՀ խորհրդին ներկայացվող հաշվետվություններից, համալսարանը տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով հաշվետվություններ է ներկայացնում ԱՀ

կրթության, գիտության և սպորտի նախարարությանը, ԱՀ հարկային ծառայությանը, վիճակագրական ծառայությանն ու պետական այլ գերատեսչություններին:

Հասարակության առջև բուհի հաշվետվողականության բարձրացումը դրված է որպես ռազմավարական խնդիր, սակայն հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հաշվետվությունները ըստ ՌԾ նպատակների չեն իրականացվում[13]:

Հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք բավականին ծավալուն են, ներկայացնում են ողջ բուհի մասին տեղեկատվություն փաստերով և համապատասխան տեղեկատվությամբ, այնուամենայնիվ վերլուծությունները սակավ են, խնդիրներ վերհանված չեն, վերջնական ամփոփիչ եզրահանգումներ կամ գործողությունների պլանի հետ համադրում առկա չէ: Վերլուծված չեն չիրականացված աշխատանքների պատճառները:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ԱրՊՀ-ն ունի մշակված կանոնակարգեր՝ Հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման և Տեղեկատվության տարածման, որոնցով կանոնակարգվում են հանրային առնչությունները:

2018թ.-ից Հանրային կապերի և լրատվության բաժինը դարձել է առանձին ստորաբաժանում, որի առջև խնդիր է դրվել բարձրացնել համալսարանի դրական վարկանիշը: Բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարի ներկայացնում է հաշվետվություն՝ կատարված PR աշխատանքների վերաբերյալ: Սակայն փորձագիտական այցի ընթացքում ի հայտ եկավ, որ PR հստակ քաղաքականություն մշակված չէ:

Գործընթացների թափանցիկության ապահովման հիմնական գործիքներից են ԱրՊՀ պաշտոնական կայքը (www.asu.am) և Ֆեյսբուքյան էջը: Կայքի՝ Նորություններ բաժնում հրապարակվում է համալսարանում տեղի ունեցող հանրային նշանակության միջոցառումների և իրադարձությունների մասին տեղեկատվություն: Կայքում հասանելի են ԱրՊՀ տարեկան հաշվետվությունները, ինքնավերլուծությունը, ՌԾ-ն, գիտական տեղեկագրերի էլեկտրոնային տարբերակները: Տեղադրվում են նաև համալսարանական կյանքի վերաբերյալ տեսանյութեր: Ընդունելության շրջանում «Դիմորդ» բաժնի տեղեկատվությունը թարմացվում է ամեն օր: ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում պարբերաբար ներկայացվում են բուհի առօրյայի մասին տեղեկատվություն, լուսաբանվում են բոլոր միջոցառումները: ՄՈՒՀ-ի կայքէջում այնուամենայնիվ բացակայում են կրթական ծրագրերը, իսկ իրավական ակտերը ամփոփված են մեկ ամբողջական փաստաթղթի մեջ:

Կայքը հասանելի է նաև անգլերեն ու ռուսերեն տարբերակներով, սակայն կայքի թե՛ անգլերեն, թե՛ ռուսերեն տարբերակներում համալսարանի և հատկապես տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկատվությունը խիստ սահմանափակ է, իսկ կայքի բաժիններից շատերում բովանդակային նյութը բացակայում է:

Ըստ ինքնավերլուծության՝ ԱրՊՀ-ում գործում է «Արցախի համալսարան» ամսաթերթը (հրատարակվում է 1993 թվականից), որն անդրադառնում է բուհի կրթական, գիտական, հասա-րակական և մշակութային գործունեությանը: Այն տարածվում է ներքին և արտաքին շահակիցների, ինչպես նաև շահագրգիռ այլ կազմակերպությունների շրջանում: Այցի

[13] Տեքստը խմբագրվել է համալսարանի դիտարկումների արդյունքում:

ընթացքում պարզվեց, որ քաղաքական և ֆինանսական իրավիճակով պայմանավորված՝ կրճատվել է տպագրվող ամսաթերթերի քանակը:

Գործընթացների թափանցիկության ապահովման մեխանիզմներից է սերտ համագործակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ: Համալսարանում գործում է լրագրողների մասնագիտական գործունեությանը համակողմանի աջակցություն ցուցաբերելու քաղաքականություն:

Հարկ է նշել նաև, որ ԱրՊՀ-ում առկա չէ հասարակայնության հետ կապերի զարգացման քաղաքականություն:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հասարակայնության հետ կապերի զարգացումը և հանրային ծրագրերում համալսարանի ակտիվ ներգրավումը ռազմավարական ծրագրի կարևորագույն խնդիրներից է: Համաձայն ինքնավերլուծության՝ համալսարանը համագործակցում է լրատվամիջոցների հետ, կազմակերպվում են հեռուստահաղորդումներ, ասուլիսներ՝ ԱրՊՀ ղեկավար կազմի, դասախոսների մասնակցությամբ: Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինը իրականացնում է մամուլի ամենօրյա մշտադիտարկում, որի վերլուծության հիման վրա մշակվում է տարվող քաղաքականության գնահատում ու վերանայում:

Հասարակության հետ կապի ձևավորմանը նպաստում է ԱրՊՀ կայքի և սոցցանցերում պաշտոնական էջերի (Facebook, Twitter, Google +, Instagram) ակտիվ գործունեությունը: Կայքում գործում է «Հարց-Պատասխան» բաժինը, որտեղ կայքի այցելուները կարող են մեկ օրվա ընթացքում ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները: Արագ արձագանք են ստանում նաև համալսարանի պաշտոնական էլ.հասցեին (rector.am, lratu.asu@mail.ru) ուղարկվող նամակները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ լրատվության բաժնի կողմից հասարակության շրջանում իրականացվում են հարցումներ՝ համալսարանի, պաշտոնական կայքի և միջոցառումների վերաբերյալ կարծքների հավաքագրման նպատակով: Սակայն նման տվյալների վերլուծություն չի ներկայացվել:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ԱրՊՀ-ն, լինելով հանրապետության գիտական մտքի ձևավորման կենտրոնը, կարևորում է հասարակության կրթական և գիտամշակութային մակարդակի բարձրացումը: Ըստ ինքնավերլուծության տվյալների՝ մշտապես կազմակերպվում են վերապատրաստումներ ուսուցիչների համար: Դիմորդների համար անցկացվում են նախապատրաստական դասեր և խորհրդատվական ծառայություններ՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ հասարակությանը գիտելիքների փոխանցման հիմնական կիրառական մեխանիզմներից են այցելությունները հանրակրթական դպրոցներ, զորամասեր, մանկատներ: Կազմակերպվում են ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումներ, որոնք լուսաբանվում և ներկայացվում են համալսարանի պաշտոնական կայքում:

Գիտական աշխատանքների էլեկտրոնային տարբերակները հասանելի են կայքում: Համալսարանի գրադարանի կարող են օգտվել նաև ոչ համալսարանականները:

Փորձագիտական խմբին հայտնի դարձավ, որ վերակառուցվող մասնաշենքում նախատեսվում են ստեղծել նաև ճաշարան, սպորտային և հանդիպումների դահլիճներ, որոնք հասանելի կլինեն հասարակության լայն շերտերին:

Համալսարանի ներսում գործում են հոգեբանական կենտրոնը և իրավաբանական կլինիկան, որոնք անվճար խորհրդատվություններ են մատուցում ԱՀ քաղաքացիներին: Ծառայությունների մասին տեղեկացվում են թերթերի, ռադիոյի, հեռուստատեսության միջոցով: Ծառայությունների արդյունքների գնահատումը իրականացվում է տարեկան օգտվողների քանակի համեմատությամբ:

Հարկ է նշել, որ արդյունաբերությանը կամ գործարարության ոլորտին փորձագիտական կարծիքների տեսքով գիտելիքի փոխանցման ապացույցներ չկան: Սա հավանաբար պայմանավորված է գիտական հետազոտություններ իրականացնելու առաջընթացի ցածր մակարդակով: Տեղեկատվություն չկա նաև, թե որքանով են դիպլոմային աշխատանքների առաջարկություններ ներկայացվում գործարարության ոլորտի ներկայացուցիչների կողմից և թե որքանով են դրանք կիրառվում տվյալ ոլորտի կոնկրետ խնդիրների լուծման համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱրՊՀ-ում առկա է ներքևից վերև և վերևից ներքին հաշվետվողականության սահմանված համակարգ: Դրական է, որ գրեթե բոլոր ստորբաժանումները կազմում են հաշվետվություններ ըստ պլանավորվածի և ներկայացնում են համապատասխան խորհուրդներ քննարկման: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ աշխատանքի կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով ԱրՊՀ հաշվետվողականության մեխանիզմի բարելավումը և վերլուծական մոտեցման ներդրումը կնպաստի խնդիրների բացահայտմանը, չիրականացված աշխատանքների պատճառների վերլուծությանը և շարունակական բարելավման մշակույթի ներդրմանը բուհում:

Դրական է, որ ակտիվ գործում է ԱրՊՀ կայքէջն ու ֆեյսբուքյան էջը, որտեղ լուսաբանվում է ԱրՊՀ գործունեությունը, ինչպես նաև կայքում հասանելի են ԱրՊՀ հիմնական փաստաթղթերը, շահակիցները կայքի և ֆյեսբուքյան էջի միջոցով շահակիցները հնարավորություն ունեն հետադարձ կապ ապահովել բուհի հետ և ստանալ արագ արձագանք: Այնուամենայնիվ կայքի անգլերեն և ռուսերեն տարբերակի գործարկումն ու բարելավումը, հիմնական փաստաթղթերի հասանելիությունը օտար լեզուներով հնարավորություն կտա բարձրացնել բուհի տեսնալիությունը միջազգային մակարդակում, ինչպես նաև նպաստել արտաքին կապերի ամրապնդմանը: Հարկ է նաև նշել կայքի հայերեն տարբերակում բացակայում են ԱրՊՀ կրթական ծրագրերը: Կրթական ծրագրերի առկայությունը կնպաստի դիմորդների շրջանում տեղեկացվածության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը մեծապես կարևորում և դրական է գնահատում ԱրՊՀ-ի ջանքերը գիտելիքի փոխանցման ուղղությամբ տարվող աշխատանքներում: ԱրՊՀ իրավաբանակն կլինիկան, հոգեբանական կենտրոնը, դպրոցների ուսուցիչների համար վերապատրաստումները, այցելությունները զորամասեր նպաստում են հասարակության շրջանում ԱրՊՀ գործունեության մասին տեղեկացվածության բարձրացմանը, ինչպես նաև ԱրՊՀ-ի կողմից ստեղծված արժեքների փոխանացմանը հասարակության լայն շերտերին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱրՊՀ-ն հաշվետվողականության երկար փորձ ունի, բոլոր մակարդակներում ապահովվում է հաշվետվողականություն, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին, քննադատական մոտեցումը առաջին փորձը ինքնավերլուծության

հաշվետվություններ է, բուհը գիտակցում է նման մոտեցմամբ հաշվետվությունների ներդրումը, առկա է վեբ կայք, Ֆեյսբուքյան էջ, որոնք բավականին ակտիվ գործում են, բոլոր ներքին գործընթացները լուսաբանվում են, ԱրՊՀ քաղաքականությունն ու ընթացակարգերը հասանելի են հասարակությանը վեբ կայքի միջոցով, վեբ կայքը հնարավորություն է տալիս հետադարձ կապի համար, առկա են հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմներ, օրինակ ուսուցիչների վերապատրաստումներ, առկա է հոգեբանական կենտրոն, իրավաբանական կլինիկա, որտեղ անվճար հիմունքներով ծառայություններ են մատուցվում հասարակությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱրՊՀ-ն բավարարում է չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱրՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

Խորհրդատվություններ.

- Շարունակել հասարակության գիտելիքի և արժեքների փոխանցման մեխանիզմների զարգացումը՝ նպաստելով հասարակության լայն շերտերին ԱրՊՀ գործունեության մասին տեղեկացվածության բարձրացմանը:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտա քին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ի միջազգայնացման նպատակները ամրագրված են ԱրՊՀ 2019-2023 թթ. Ռազմավարական ծրագրում: Մասնավորապես՝ ԱրՊՀ-ն միջազգայնացման ուղղությամբ ձգտում է ապահովել համալսարանի արտաքին կապերի համակողմանի զարգացումը և խթանել ԱրՊՀ գործունեության միջազգայնացումը: Որպես գերակա ուղղություններ սահմանված են համալսարանի միջազգային կապերի ընդլայնումն ու բազմազանեցումը, միջազգայնացման շարունակական գործընթացները արտերկրի համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ խթանումը ինստիտուցիոնալ ու ծրագրային մակարդակներում, համալսարանի միջազգային գիտական համագործակցության ընդլայնում, գործընկերային կապերը համալսարանի պատվիրատու կազմակերպությունների և հանրապետական հանրային կառույցների հետ բազմազանեցում:

Մշակված է Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարություն, որտեղ սահմանված են այդ ուղղությամբ ՄՈՒՀ-ի առաջնահերթությունները և անհրաժեշտ քայլերը, սակայն փաստաթղթում առկա չեն հստակ չափելի ցուցիչներ գործողությունների արդյունքների գնահատման համար: Յուրաքանչյուր տարի ԱրՊՀ գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորը ներկայաց-նում է տարեկան հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ: Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հաշվետվություններում մեծամասամբ ներկայացված են փաստեր կատարված աշխատանքի վերաբերյալ, իսկ արդյունքների վերլուծությունը և խոչընդոտները ներկայացված չեն:

Փորձագիտական վերլուծությունից պարզ դարձավ, որ ԱրՊՀ-ն մշտապես զարգացնում է իր կապերը Արցախի և Հայաստանի Հանրապետության տարբեր կազմակերպությունների, կրթական հաստատությունների հետ, որի արդյունքում ուսանողները հնարավորություն են ստանում անցնել փորձուսուցում, դասախոսների փորձի փոխանակում է տեղի ունենում, ՀՀ ուսումնական հաստատությունների մասնագետներ դասախոսություններով հանդես են գալիս ԱրՊՀ-ում: ԱրՊՀ-ն շարունակաբար համագործակցում է Արցախի հանրապետության դպրոցների հետ՝ մասնագիտական կողմնորոշման, ուսանողների և աշակերտների համար համատեղ ինտելեկտուալ, մարզական, մշակութային միջոցառումների կազմակերպման և այլ ուղղություններով:

Միջազգայնացման զարգացման համար ԱրՊՀ-ն համագործակցում է չճանաչված պետությունների ուսումնական հաստատությունների հետ փորձի փոխանակման նպատակով, փորձ է կատարում օգտագործել Սփյուռքի ներուժը ակտիվացնելու դասախոսների և ուսանողների շարժունությունը:

Միջազգայնացման ուղղությամբ աշխատանքները իրականացվում են Արցախի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության միջոցով: Հարկ է նշել, որ միջազգայնացման զարգացումը դեռևս մնում է մարտահրավեր ԱրՊՀ-ի համար:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

2018թ. սեպտեմբերից ՄՈՒՀ-ում գործում է գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժինը, որի գործառույթները մինչ այդ իրականացվել է համալսարանական կրթության որակի ապահովման և միջազգային համագործակցության բաժնի կողմից: Բաժինը հաշվետու է Գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորին:

Բաժնի հաստիքներն են՝ բաժնի վարիչ, 1 մեթոդիստ, 1 տեսուչ և 1 միջազգային համագործակցության գծով մասնագետ:

Ըստ իր կանոնադրության, բաժինը կանոնակարգում է միջազգային գիտակրթական ծրագրերի, դրամաշնորհների և արտասահմանյան համալսարանների կողմից առաջարկվող գիտակրթական և ուսումնական ծրագրերի հայտերի մասին իրազեկության գործընթացը:

Հետազոտական գործընթացում բաժինը կանոնակարգում է արտասահմանից դասախոսների հրավերների կազմակերպումը, միջազգային ամսագրերում ԱրՊՀ աշխատակիցների հրատարակման գործընթացը:

Ուսումնասիրելով ԱրՊՀ-ի Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարության մեջ սահմանված նպատակներից և խնդիրներից՝ կարելի է փաստել, որ Գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժինը իրականացնում է դրանց փոքր հատվածը և ռազմավարությունում նախանշված միջոցառումների ուղղությամբ կոնկրետ քայլեր չի նախատեսել:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ԱրՊՀ-ն համագործակցում է ՀՀ և արտերկրի մոտ 45 բուհերի հետ կնքված պայմանագրերի և հուշագրերի հիման վրա:

Վերոնշյալ պայմանագրերի, ինչպես նաև Արցախի արտգործնախարարության ջանքերով ԱրՊՀ հրավիրվում են արտերկրից դասախոսներ, որոնք հանդես են գալիս

դասախոսություններով, կամ կազմակերպում սեմինարներ: Սակայն այս գործընթացը միակողմանի է:

Ուսանողների և ՊԴ կազմի շարժունությունը ապահովելու խնդիրը լուծելու համար ԱրՊՀ-ն համագործակցում է ՀՀ բուհերի հետ և փորձում է կազմակերպել շարժունություն ՀՀ բուհերի միջոցով:

Կրթական ծրագրերը բենչմարքինգի են ենթարկվել Ղազախստանի ու Ռուսաստանի համանման կրթական ծրագրերի հետ, ուսումնասիրվել և ընդունվել են Ռուսաստանի մի քանի համալսարանների դասավանդման և ուսուցման փորձերը:

Դրական փաստ է միջազգային գիտաժողովների և միջազգային ճամբարի կազմակերպումը, որը հնարավորություն է ընձեռում ոչ միայն ներկայացնել Արցախը և իր պատմամշակութային ժառանգությունը արտերկրից ժամանած դասախոսներին և ուսանողներին, այլև օգնել ԱրՊՀ դասախոսներին և ուսանողներին բարելավել իրենց օտար լեզվի իմացությունը և կապեր հաստատել արտասահմանցի գործընկերների և ուսանողների հետ՝ հետագայում համագործակցության հնարավորություններով:

Տեղական կազմակերպությունների հետ՝ դպրոցներ, քոլեջներ, բուհեր, ԱՀ պետական կառավարման մարմիններ, ֆինանսական կազմակերպություններ, բանկեր, ԱրՊՀ համագործակցությունը հիմնականում սահմանափակվում է փորձուսուցման կազմակերպմամբ և այդ կազմակերպություններից դասախոսների հրավիրմամբ: Համագործակցությունը չի ընդգրկում, օրինակ՝ գիտահետազոտական ոլորտը: Ընդհանուր առմամբ, քաղաքականություն մշակված չէ առկա խոչընդոտների վերլուծության և ներկայիս համատեքստին համապատասխան միջազգայնացման զարգացման քայլեր իրականացնելու համար:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Արցախի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգի շրջանակներում իրականացվում է դասախոսների օտար լեզվի պարտադիր վերապատրաստումներ, քանի որ ՄՈՒՀ-ի ղեկավար կազմը, ինչպես նաև ՊԴ կազմը գիտակցում է օտար լեզվի իմացության կարևորությունը կրթության որակի բարձրացման, գիտահետազոտական գործունեության միջազգայնացման համար:

Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրում ևս ամրագրված է, որ պետք է աստիճանաբար ավելացնել օտար լեզուներով դասավանդվող առարկաների քանակը, խրախուսել բուհում մեկ և ավելի օտար լեզուներով հաղորդակցման քաղաքականությունը և այլն: Աշխատանքի ընդունելության պահանջների մեջ էլ ավելացել է օտար լեզվի իմացության պարտադիր պայմանը:

Ըստ բուհի ներկայացված 2018 թվականի տվյալներով դասավանդողների 46,1% է տիրապետում անգլերենին, իսկ ռուսերենի 100%-ը: Բակալավրիատի ուսանողների 36,2% է տիրապետում անգլերենին, իսկ մագիստրատուրայում սովորողների 48,6%-ը: Ռուսերենին տիրապետում է բակալավրիատի ուսանողների 39,3%-ը, իսկ մագիստրատուրայի ուսանողների 100%-ը:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ չնայած բուհի կողմից իրականացվող ջանքերին, ներկայում անգլերենի իմացության մակարդակը ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների մոտ ցածր է:

Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ սահմանափակ են դասախոսների կողմից ուսուցման որակի բարձրացման նպատակով միջազգային փորձի ուսումնասիրության փորձերը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԱրՊՀ-ն շարունակաբար զարգացնում է իր արտաքին կապերը՝ մեծացնելով համագործակցության շրջանակը ՀՀ բուհերի, տեղական կազմակերպությունների, դպրոցների հետ: Դրական է, որ ԱրՊՀ-ն գիտակցում է միջազգայնացման կարևորությունը և քայլեր է ձեռնարկում այս ուղղությամբ: ԱրՊՀ-ի ՌԾ-ում սահմանվել է արտաքին կապերի և միջազգայնացման զարգացումը որպես գերակայություն, մշակված են մի շարք կանոնակարգող փաստաթղթեր ոլորտի զանգարցման համար:

Հատուկ ուշադրության են արժանի ԱրՊՀ ղեկավարության ջանքերը ակադեմիական մեկուսացվածությունը հաղթահարելու և միջազգային ասպարեզ դուրս գալու ուղղությամբ: Համալսարանը նախ զարգացնում է համագործակցությունը ՀՀ բուհերի և չճանաչված պետությունների բուհերի հետ: Կնքվել են համագործակցության պայմանագրեր 47 օտարերկրյա գործընկերների հետ, ներառյալ Լյուվենի Կաթոլիկ համալսարանի, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի, Հունգարիայի Պազման Պիտեր կաթոլիկ համալսարանի, Բեյրութի Հայկազյան քոլեջի, Բասկերի երկրի համալսարանի հետ: Կրթական ծրագրերը բենչմարքինգի են ենթարկվել, ուսումնասիրվել և ընդունվել են Ռուսաստանի մի քանի համալսարանների դասավանդման և ուսուցման փորձերը, օտարերկրյա ուսանողներ են հաճախում ԱրՊՀ ամառային դպրոց, ԱՀ ԱԳ նախարարի օգնությամբ ժամանում են օտարերկրացի հրավիրյալ դասախոսներ Չեխիայից, Նիդերլանդներից և Ռուսաստանից, հայկական սփյուռքը հովանավորում է մի քանի նախագծեր/դրամաշնորհային ծրագրեր, սահմանափակ քանակով դասախոսներ և ուսանողներ են այցելել օտարերկրյա համալսարաններ: Կատարված աշխատանքները նպաստում են արտաքին կապերի ուժեղացմանը և բուհի տեսանելիության բարձրացմանը միջազգային ասպարեզում:

Միջազգայնացման աշխատանքների համակարգումը թույլ է զարգացած: Այս գործընթացով զբաղվում է Գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժինը, որը ի թիվս այլ պարտականությունների իրականացնում է նաև միջազգայացման աշխատանքների համակարգումը, ինչպես նաև այս ուղղությունը ղեկավարվում է մեկ պրոռեկտորի կողմից:

Արցախի հանրապետության չճանաչված լինելու և սուղ ֆինանսական միջոցների պատճառով այս գործողությունների փաստացի արդյունքները շատ համեստ են: Ուսանողների ու դասախոսների փոխանակում գործնականում առկա չէ: Համալսարանը չի մասնակցում օտարերկրյա բուհերի հետ համատեղ իրականացվող հետազոտությունների: Սա վերաբերում է նաև այն երկրների բուհերին, որոնք միջազգային հարթակում ճանաչում չունեն: Համալսարանը չի իրականացնում կրթական ծրագրեր կամ դասընթացներ օտար լեզվով իր կամ օտարերկրյա ուսանողների համար:

ԱրՊՀ-ի համար միջազգայնացումն ավելին է, քան պարզապես դասախոսների և ուսանողների փոխանակումը, քանի որ միջազգայնացման կարևորագույն բաղադրիչները ավելին են, քան շարժունության ծրագրերը, դրանք ներառում են կառավարման համակարգում միջազգային չափանիշների կիրառում, հետազոտություն և զարգացում, դասավանդում և ուսուցում, ուսումնական պլան: Նման բարդ իրավիճակում հարկ է, որ ԱրՊՀ-ն վերաձևակերպի այս ոլորտի համար առկա կետերը ռազմավարությունում, և այն ուղղի դեպի

համալսարանի ներսում միջազգայնացմանն ուղղված քայլերի առավել ինտենսիվ զարգացմանը: Այստեղ ամենաառանցքայինը օտար լեզվի, հատկապես անգլերենի, իմացության բարելավումն է ուսանողների ու դասախոսական կազմի շրջանում: Սա, ի թիվս այլ գործողությունների, պահանջում է օտար լեզվի դասավանդման համար նախատեսված ժամաքանակի ավելացում (ներկայումս միայն 3 կիսամյակ)՝ պահանջելով անգլերենի իմացության առնվազն C1 մակարդակ երիտասարդ և նոր աշխատանքի ընդունված կադրերի համար: Դասախոսների համար անգլերեն լեզվի վերապատրաստումների իրականացումը խիստ կարևոր է: Լեզվի լավ տիրապետումը կնպաստի շրջանավարտների զբաղվածության բարձրացմանը և անձնակազմի՝ միջազգային գիտահետազոտական ծրագրերում ընդգրկմանը: Ուսանողները պետք է մասնակցեն գործընկեր համալսարանների կողմից կազմակերպված առցանց դասընթացներին, պետք է տեղեկանան առկա անվճար դասընթացների վերաբերյալ, պետք է օգտվեն համացանցում առկա բաց կրթական հասանելի ռեսուրսներից: Օտարերկրյա համալսարանների համար գրավիչ լինելու նպատակով պետք է բարելավվի հետազոտության որակը: Սփյուռքի հայտնի շրջանավարտներին որպես հրավիրված դասախոսներ, փորձագետներ, հովանավորներ, դոնորներ հրավիրելը խիստ անհրաժեշտ է:

Եվ վերջապես, համալսարանի միջազգայնացումը բարձրացնող գործողությունները պետք է իրականացվեն միջազգայնացման համար ընդունված քաղաքականության սահմաններում, որը կհաստատի ԱրՊՀ խիստ հանձնառությունը միջազգայնացման ուղղությամբ:

Եզրահանգում: Ընդունելով հանդերձ, որ Արցախի Հանրապետության՝ միջազգայնորեն չճանաչվածության հանգամանքը լրջորեն խոչընդոտում է Արցախի պետական համալսարանի միջազգայնացման գործընթացներին, այդուհանդերձ հաշվի առնելով այն հանգամանքները, որ բուհը նպատակաուղղված աշխատանքներ չի տարել առնվազն ՀՀ միջազգայնացված բուհերի հաջողության փորձերն ուսումնասիրելու, դրանք տեղայնացնելու ուղղությամբ, բաց է թողել «միջազգայնացում տեղում» իրականացնելու հնարավորությունը, ինչի վկայությունն են նշված ուսումնասիրությունների վերաբերյալ փաստաթղթավորված տվյալների բացակայությունը, բուհում միջազգայնացման գործառույթներ ունեցող արհեստավարժ վարչական անձնակազմի գրեթե բացակայությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունները չեն համապատասխանում չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ըստ բուհի ինքնավերլուծության որակի ապահովման աշխատանքները մեկնարկել են դեռևս 2014 թվականից սկսած, երբ ընդունվել է Արցախի պետական համալսարանի կրթության որակի ապահովման քաղաքականությունը: Մինչև 2018 թվականը որակի ապահովման

գործընթացները ուղղված են եղել ուսումնական գործընթացին և կրել են վերահսկողական բնույթ:

2014թ-ից ի վեր ԱրՊՀ-ում աշխատանքներ են տարվել որակի ապահովման մեխանիզմերի ներդման ուղղությամբ, մշակվել են կանոնակարգեր, կազմավորվել են աշխատանքային խմբեր: Մշակված կանոկարգերի թվում են ԱրՊՀ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգը և հարցաշարը, ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգը, ԱրՊՀ ՊՈԱԿ դասալսումների կազմակերպման և անցկացման կարգ և այլն :

ԱրՊՀ 2019-2023 Ռազմավարական ծրագրի մշակման փուլում արդեն ավելի համակարգված մոտեցում է ցուցաբերվել որակի մշակույթի զարգացմանը և 2018թ. սեպտեմբերի 1-ին ԱրՊՀ համալսարանական կրթության որակի ապահովման և միջազգային համագործակցության բաժինը վերանվանվել է «Որակի ապահովման կենտրոն» և գիտական խորհրդի 2018թ. նոյեմբերի 9-ի որոշմամբ հաստատվել է կենտրոնի նոր կանոնադրությունը:

ԱրՊՀ-ում որակի ապահովման գործընթացները կանոնակարգելու նպատակով մշակվել է «ԱրՊՀ որակի ապահովման ձեռնարկը», որտեղ ընդգրկված են որակի ապահովման և որակի կառավարման հիմնահարցերը: Մշակվել է նաև ԱրՊՀ որակի ապահովման քաղաքականությունը: Որակի ապահովման քաղաքականության նպատակն է ստեղծել որակի մշակույթ և դրան հասնելու մեթոդներ, սակայն հարկ է նշել, որ ոչ մի փաստաթղթում մասնավորեցված չէ, թե ինչպես է ընկալվում և տեղայնացվում որակի մշակույթը ԱրՊՀ գործունեության համատեքստում:

Որակի ձեռնարկում ներկայացված են երեք փուլեր՝ անցումային, որակի մշակույթ և որակի ամբողջական կառավարում: Հարկ է նշել, որ որակի ձեռնարկում բացակայում է պարզաբանում այն մասին, թե ինչպես են համալսարանի գործունեության հետևյալ երեք ուղղությունները՝ կրթություն, գիտական հետազոտություն և համալսարանի կառավարում, համակցվում մեկ համակարգում:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ որակի ապահովման սկզբունքը համալսարանի ռազմավարության հիմքում է: Այդուհանդերձ ոչ մի նպատակ ուղղակիորեն չի վերաբերում որակի ապահովմանը, որակի մշակույթին կամ որակի ներքին ապահովման համակարգին: Իսկ որակի ապահովման քաղաքականությունը կապակցված չէ ԱրՊՀ ռազմավարական ծրագրի հետ:

Ընդհանուր առմամբ, փորձագիտական խմբի այցելության ընթացքում կատարված դիտարկումներից, ինչպես նաև ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունից կարել է եզրակացնել, որ դեռևս լիարժեք չէ ՊԻԳԲ շրջափուլի մասին պատկերացումը: Թեև գնահատման համար հավաքագրվում են մի շարք տվյալներ, հիմնականում հարցումների միջոցով, այդ տվյալները ինչպես հարկն է չեն վերլուծվում և վավերացվում, քանի որ դրա համար մշակված չեն հստակ մեխանիզմներ: Հարկ է նշել նաև, որ ՈԱԿ-ը ավելի մեծ ուշադրության է արժանացնում կրթական գործընթացի արդյունավետության գնահատմանը՝ երկրորդ պլան մղելով գիտահետազոտական գործունեության և կառավարման համակարգի արդյունավետության ուսումնասիրմանը:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2012թ. սեպտեմբերի 1-ից գործող՝ Համալսարանական կրթության զարգացման կենտրոնը 2014թ-ին վերանվանվել է Համալսարանական կրթության զարգացման բաժին: Այնուամենայնիվ, այդ բաժինը հիմնականում իրականացրել է ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկողության գործառույթներ՝ ավելի պակաս ուշադրություն դարձնելով որակի ապահովման մեխանիզմների մշակմանը և ներդրմանը, ՊԻԳԲ շրջափուլի իրականացմանը:

2019-2021 ՌԾ ընդունումից հետո ստեղծվել է «Որակի ապահովման կենտրոն»՝ համապատասխան կանոնադրությամբ: Կենտրոնը անմիջապես հաշվետու է գիտխորհրդին և ռեկտորին:

ՈԱԿ-ն ունի 4 հաստիք՝ կենտրոնի վարիչը, 2 մեթոդիստը և 1 մասնագետ. նրանց գործառույթները սահմանված են ՈԱԿ-ի կանոնադրությամբ: Տրամադրված էր համապատասխան նյութական ռեսուրսներ, սակայն բյուջեում առանձնացված տող առկա չէր ՈԱԿ-ի գործընթացների կազմակերպման համար:

Նշենք, որ ԱրՊՀ ՈԱԿ-ի գործառույթները դեռևս հստակեցման կարիք ունեն, քանի որ դրանց մեջ ներառված են նաև այնպիսի գործառույթներ, որոնք կարող են իրականացվել ՈՒՀՏԱ և կարիերայի բաժնի կողմից, օրինակ՝ շրջանավարտների շրջանում հարցումների կազմակերպում և հետադարձ կապ կամ ֆակուլտետների խորհուրդներին կից գործող որակի ապահովման հանձնաժողովներում: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ վերջին երկու տարիների ընթացքում ՈԱԿ-ը բավականին ծավալուն աշխատանքներ է իրականացրել ֆակուլտետների և ամբիոնների հետ համատեղ:

Որակի ապահովմանը կենտրոնը իրականացրել է մի շարք վերապատրաստման դասընթացներ, մասնավորապես ՄԿԾ-ների մշակման վերջնարդյունքահեն մոտեցման, դասընթացների նկարագրերում ուսումնառության վերջնարդյունքների ձևակերպման և ՄԿԾ-ի վերջնարդյունքների հետ համադրման, ուսանողակետրոն ուսուցմանը նպաստող դասավանդման և ուսումնառության մեթոդների ներառման վերաբերյալ: Կազմակերպվել են նաև արդյունավետ թեստեր մշակելու ձևերի մասին վերապատրաստումներ:

ՈԱԿ-ը համագործակցում է ԱրՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի, ինչպես նաև ֆակուլտետների խորհուրդներին կից որակի ապահովման մշտական հանձնաժողովների հետ, որոնց աշխատակարգը դեռևս գտնվում է մշակման փուլում: ՈԱԿ-ը համագործակցում է նաև ամբիոնների կողմից նշանակված ՄԿԾ-ների պատասխանատուների հետ: Վերոնշյալը փաստում է, որ տարբեր օղակների համագործակցության միջոցով ՄՈՒՀ-ը համակարգված ինստիտուցիոնալ մոտեցում է ցուցաբերում կրթության որակի ապահովմանը:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ ՈԱԿ-ը չունի հստակ պլան, որը կբխի ԱրՊՀ ռազմավարությունից և կներկայացնի ՈԱԿ-ի որակի ապահովման գործընթացների քայլերը և նախատեսվող հանդիպումները:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ընդգրկման կարևորությունը ակնհայտ է դարձել 2019-2023թթ Ռազմավարական ծրագրի մշակման և ինքնավերլուծության իրականացման ժամանակ:

ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ընթացքում ՄՈՒՀ-ը կոնկրետ քայլեր է իրականացրել արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը

ընդլայնելու ուղղությամբ: Ուսանողների և ՊԴ կազմի անդաները ներկայացված են բոլոր խորհուրդներում և աշխատանքային խմբերում՝ ըստ ընդունված կանոնակարգերի:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները կարևորում են իրենց մասնակցությունը, քանի որ համոզված են, որ իրենց ձայնը լսելի է, իրենց կողմից բարձրացված խնդիրները քննարկվում և լուծում են ստանում:

Ինչ վերաբերում է արտաքին շահակիցներին, ապա նրանց հետ կապը ակտիվացնելու ուղղությամբ ևս քայլեր են ձեռնարկվել, կազմակերպվել կլոր սեղաններ և քննարկումներ: Արտաքին շահակիցների հետ կապված հիմնական խնդիրն այն է, որ Արցախի Հանրապետությունում հիմնական գործատուն կառավարությունն է: Կառավարության հետ կապը ՄՈՒՀ-ը ապահովում է նաև շնորհիվ հրավիրված դասախոսների, որոնք հիմնականում պետական սեկտորից են, սակայն կան նաև դասախոսներ մասնավոր սեկտորից, մասնավորապես SS ոլորտից: Արտաքին շահակիցների հետ կապ փորձում են պահել նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում նրանց ընդգրկելու միջոցով:

Որակի մշակույթի հետագա զարգացման համար մեծ խթան են հանդիսացել Ինստիտուցիոնալ հավատարամագրման համար ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համար իրականացված աշխատանքները, որի արդյունքում էլ ընդլայնվել է ներքին շահակիցների (ՊԴ կազմ, ուսանողներ) մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում: Ուսանողների կրթական և այլ կարիքները վերհանելու նպատակով մշակվել են մի շարք հարցաթերթիկներ, անցկացվել հարցումներ: Լրամշակվել են ՄԿԾ-ները՝ հաշվի առնելով ուսումնառության վերջնարդյունքները և դրանց համապատասխանությունը ՈԱՇ բնութագրիչներին, մշակվել են դասընթացների առարկայական նկարագրերի և փորձուսուցման մասնագիրը: Ըստ այդմ էլ, ՈԱԿ-ի կողմից կազմակերպվել են ոչ միայն ՊԴ կազմի մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, այլև որակի ապահովման մեխանիզմների շուրջ իրազեկման համար հանդիպումներ:

2019-2023 ՌԾ-ի մշակման և ինքնավերլուծության աշխատանքների շրջանակում ընդլայնվել է նաև համագործակցությունը արտաքին շահակիցների հետ: Նշված գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ընդգրկման արդյունքում ուսումնական գործընթացում, ՄԿԾ-ներում կատարվել են մի շարք փոփոխություններ՝ փորձուսուցման ժամանակահատվածի ընդլայնում, դասընթացներում ինքնուրույն աշխատանքների բաղադրիչի ներմուծում և այլն, որոնք բարձր են գնահատվում ուսանողների և դասախոսների կողմից:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ՄՈՒՀ-ում որակի ապահովման համակարգի ստեղծման և ներդրման աշխատանքները սկվել են 2014թ-ից և դրա գործառույթներն իրականացվել են ՄՈՒՀ-ի տարբեր ենթաբաժինների կողմից, ինչը ենթադրում է, որ այս տարիների ընթացքում որակի ապահովման քաղաքականությունը պարբերաբար վերանայվել է, կատարվել են որոշակի փոփոխություններ, որոնց մեծ մասը իհարկե իրականացվել են 2018թ-ին «Որակի ապահովման կենտրոն»-ի ստեղծումից հետո:

2018թ-ից ի վեր կատարվել են մի շարք կանոնակարգերի և կարգերի, ՄԿԾ-ների ձևաչափերի, դասընթացների նկարագրերի, տարբեր հարցումների համար նախատեսված հարցաթերթիկների լրամշակումներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՊԻԳԲ շրջափուլը դեռևս փակված չէ: Համալսարանի՝ որակին առնչվող գործողությունները, որոնք հիմնված են ՊԻԳԲ

շրջափուլի վրա չեն պարունակում ԱրՊՀ կատարողականի վերաբերյալ վերլուծություն և նույնիսկ չեն պատասխանում այն հարցին, թե որքանով են կատարված փոփոխությունները բարելավել հիմնական գործընթացների որակն ու ռազմավարական ծրագրերի արդյունավետությունը:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Որակի ապահովման արտաքին գնահատում ապահովելու համար իրականացվել է ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն, որի համար ձևավորվել է 10 աշխատանքային խումբ՝ արտաքին և ներքին շահակիցների ներգրավմամբ: Ինքնավերլուծությանը կից ներկայացվել են նաև մի շարք հիմքեր՝ ՄՈՒՀ-ում գործող կանոնակարգեր, կարգեր և ընթացակարգեր, հաշվետվություններ, գիտխորհրդի, ֆակուլտետների խորհուրդների, ամբիոնների նիստերի արձանագրություններ, հարցումների համար մշակված հարցաթերթիկներ, ՄԿԾ-ներ, դասընթացների և փորձուսուցման նկարագրեր, դասալսումների արձանագրություններ և այլն, որոնք հնարավորություն են տալիս համակողմանի պատկերացում կազմել ՄՈՒՀ-ում իրականացվող ուսումնական և հետազոտական գործընթացների մասին, վերհանել որոշ խնդիրներ և ձևակերպել հարցադրումներ և դիտարկումներ: Նշենք, որ վերոնշյալ փաստաթղթերի մեծ մասը մատչելի են նաև ԱրՊՀ-ի կայքում:

Այնուամենայնիվ, նշենք, որ ինքնավերլուծության որոշ հատվածներ նկարագրական, այլ ոչ թե վերլուծական բնույթի են, պարունակում են ընդհանուր ձևակերպումներ՝ առանց կոնկրետ օրինակների, հիմնավորումների և անհրաժեշտ հենքերի:

ԱրՊՀ-ում առկա է տվյալների հավաքագրման մեխանիզմ, սակայն ոչ բոլոր ոլորտների վերաբերյալ են հավաքագրվում տվյալներ, իսկ տվյալների վերլուծություն ոչ բոլոր դեպքերում է կատարվում:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Արտաքին և ներքին շահակիցները ՄՈՒՀ-ի գործունեության մասին տեղեկատվությունը ստանում են հիմնականում պաշտոնական կայքի և Ֆեյսբուքի էջի միջոցով: ՄՈՒՀ-ի կայք էջում հրապարակված են ԱրՊՀ գործունեության հիմնական փաստաթղթերը և հաշվետվությունները:

ԱրՊՀ Որակի ապահովման ստորաբաժնման վերաբերյալ կայքում առանձին բաժին կա, որտեղ ներկայացված է ստորաբաժանման գործառույթները և կանոնադրությունը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կայք էջում հրապարակված չեն հարցումների և ֆոկուս խմբերի ամփոփ վերլուծությունները, Որակի ապահովման կենտրոնի հաշվետվությունները: Հարկ է նաև նշել, որ կատարված հարցումների արդյունքները ոչ միշտ են քննարկվում և ներկայացվում թիրախային խմբերին: Առկա չէին նաև հարցումների արդյունքում բացահայտված խնդիրների հիման վրա կազմված բարելավման պլաններ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գնահատում է այն, որ որակի ապահովման գործընթացները գտնվում են ԱրՊՀ ղեկավար կազմի ուշադրության կենտրոնում: Ընդհանուր առմամբ, կարելի է նշել ԱրՊՀ-ում որակի ապահովման գործընթացի մի շարք դրական կողմեր: Ակնհայտ է, որ ԱրՊՀ-ի ղեկավարությունը կարևորվում է որակի

մշակույթի ձևավորումը և կոնկրետ քայլեր է իրականացրել և շարունակում է իրականացնել ուսումնական գործընթացի որակի ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրման ուղղությամբ: ԱրՊՀ-ն տրամադրում է անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ՝ նպաստելով որակի ապահովման համակարգի բարելավմանը և ամրապնդմանը համալսարանի բոլոր օղակներում:

Դրական կարելի է գնահատել մի շարք կանոնակարգերի մշակումը, Որակի ապահովման կենտրոնի հիմնումը, և վերջին երեք տարիների ընթացքում ՄԿԾ-ների և դասընթացների լրամշակման, կատարված հարցումների արդյունքների ամփոփման ուղղությամբ տարված աշխատանքները, ինչպես նաև ՌԾ-ի և ԱրՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության աշխատանքներում ներքին և արտաքին շահակիցների ավելի լայն շրջանակի ընդգրկումը: Այս ամենի շարունակական աշխատանքները կնպաստեն որակի մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը ԱրՊՀ-ում:

Մյուս կողմից, կատարված աշխատանքները դեռևս լիարժեք համարել հնարավոր չէ, քանի որ ԱրՊՀ-ում որակի մշակույթը դեռևս ձևավորման փուլում է: Որակի ապահովման կենտրոնի գործառույթների հստակեցման կարիք կա: Որակի ապահովման գործընթացներից դուրս է մնացել նաև գիտահետազոտական ոլորտի և կառավարման համակարգի արդյունավետության գնահատումը:

Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումները ապացուցեցին, որ որակի ապահովմանն առնչվող խնդիրները բավարար կերպով չեն ընկալվում ակադեմիական հանրության կողմից: Ներքին շահակիցների իրազեկվածության բարձրացումը համարվում է ամենամեծ մարտահրավերը որակի մշակույթի արդյունավետ զարգացման գործընթացում: Այս առումով կարիք կա նախաձեռնելու համահամալսարանական քննարկում որակի ապահովման քաղաքականության, որակի ներքին ապահովման համակարգի ու դրա արդյունքների մասին: Անհրաժեշտ է ԱրՊՀ-ում առկա ինստիտուցիոնալ ավանդույթներում արմատացնել նաև <<որակի մշակույթ>> հասկացությունը: Ինքնավերլուծության զեկույցը կարևոր գործիք է որակի ապահովման քաղաքականության մեջ առանցքային առաջնահերթությունների բացահայտման և որակի բարձրացման գործընթացում դրանց նոր թափ հաղորդելու համար: Կարելի է ներգրավել ուսանողական կառույցներին ուսանողների շրջանում որակի ապահովման մեխանիզմների մասին իրազեկվածության բարձրացման համար: Ըստ փորձագիտական խմբի կարծիքի՝ որակի ապահովման համակարգը չի ապահովում ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը կրթության հետագա բարելավման համար: Հետևաբար ցանկալի է վերանայել գործընթացների որակի մասին տեղեկատվության հավաքագրման մեթոդը, գնահատել այդ մեթոդի վստահելիությունն ու համապատասխանությունը և հետո միայն այն տեղադրել տվյալների բազայում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ առկա են որակի ապահովման հիմքային փաստաթղթերը. ձեռնարկ, քաղաքականություն, գործիքակազմ, որակի կենտրոնը համալրված է բուհի խնդիրներին քաջատեղյակ անձնակազմով, առկա են նաև աջակցող օղակներ ֆակուլտետների մակարդակում, բուհում գործում է ՊԻԳԲ շրջափուլը, վերանայվել են իրականացվող հարցաթերթերը, առկա է տվյալների հավաքագրման որոշակի մեխանիզմներ, օրինակ հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ, նախատեսվում է ընդլայնել որակի ապահովման շրջանակը, շահակիցները մասկացում են որակի ապահովման գործընթացներին, որակի մշակույթի նախադրյալներ առկա են ԱրՊՀ-ում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱրՊՀ-ն բավարարում է չափանիշ10 -ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

Խորհրդատվություններ.

- Թարմացնել Որակի ձեռնարկը՝ համապարփակ ներկայացնելով որակի ներքին ապահովման համակարգը, ներառելով բոլոր գործընթացների, ընթացակարգերի սահմանումը, կազմակերպական կառուցվածքը, ստորաբաժանումների միջև փոխադարձ կապվածությունը, ինչպես նաև որակի կատարողականի ցուցանիշները:
- Բարձրացնել որակի ապահովման ու որակի մշակույթի հանդեպ ակադեմիական հանրության տեղեկացվածությունն ու հանձնառությունը՝ կազմակերպելով վերապատրաստումներ, բարելավելով հետադարձ կապի մեխանիզմները, նպաստելով շահակիցների միջև երկխոսության իրականացման, ինչպես նաև խթանելով համալսարանի տարբեր կազռուցվածքային ստորաբաժանումների միջև համագործակցությունը:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում և վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

21-ը հունիսի, 2021

Մենուա Սողոմոնյան, փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մենուա Սողոմոնյան՝ 2004 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրան: 2007-ին ստացել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 2007-2008 թթ. դասախոսել է Երևանի պետական բժշկական համալսարանի պատմության ամբիոնում: 2008-2015 եղել է ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասիստենտ, 2008-2011 թթ. -ին՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2011-2019թթ. -ին՝ ԵՊՀ դիտական քարտուղար, 2019 թ. -ին՝ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 2015 թ. -ից ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ է: Մի շարք գրքերի և հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Լիլիթ Բաղալյան՝ 1992-1997 թթ. սովորել է Երևանի պետական լեզվաբանական համալսարան /նախկին՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտ/ Ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետում: 2008 թ.-ի սեպտեմբերին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն /«Անգլերենի «ավերման» բայերի բառակազմական հնարավորությունները՝ հայերենի զուգադրությամբ» թեմայով/ և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1997-2019 թթ. աշխատել է Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի Անգլերենի ամբիոնիում որպես դոցենտ: 2019 թ. դեկտեմբերից աշխատում է Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնում որպես ամբիոնի վարիչ:

Վահագն Վարդանյան՝ 2007-2011 թթ. սովորել է ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում: Շնորհվել է բակալավրի աստիճան: 2011-2013 թթ. սովորել ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում: Շնորհվել է մագիստրոսի աստիճան:2013-2016 թթ. աշխատել է ԵՊՀ SS կրթական և հետազոտական կենտրոնում որպես ասպիրանտ: Հետազոտության թեման եղել է «Դինամիկ տիպերով լեզուների ստատիկ օպտիմալացման մեթոդները»: Շնորհվել է տեխնիկական գիտությունների թեկնածու գիտական աստիճան: 2011 թ.ից-մինչ օրս աշխատում է ԵՊՀ համակարգային ծրագրավորման լաբորատորիում որպես գիտաշխատող: 2020 թ.ից-մինչ օրս աշխատում է ՀՌՀ Մաթեմատիկայի և Ինֆորմատիկայի ինստիտուտում որպես դասախոս:

Միսչեսլավ Սոխա՝ 1969 թ. ավարտել է Լոդզի (Լեհաստանի) համալսարանը՝ ստանալով տնտեսագիտության մագիստրոսի աստիճան: 2000 թ.-ին Վարշավայի համալսարանում ստացել է գիտությունների դոկտորի աստիճան: Ներկայումս դասախոսում է Վարշավայի համալսարանում, Լեոնի Կոզմինսկիի ակադեմիայում, Հյուսիսային պետական համալսարանում, Եվրոպական քոլեջում, Պետական կառավարման դպրոցում: 2014թ.-ից Լեհական հավատարմագրման կոմիտեի խորհրդատվական խորհրդի անդամ է, իսկ 2017թ.-ից՝ Հունգարիաի հավատարմագրման կոմիտեի Միջազգային խորհրդատվական խորհրդի անդամ:2002 թ.-ից Բարձրագույն կրթության լեհական հավատարմագրման հանձնաժողովի փորձագետ է, իսկ 2014 թ.-ից՝ Բարձրագույն կրթության հավատարմագրման Եվրոպական Կոնսորցիումի ֆինանսական կոմիտեի անդամ:Մասնակցել է բազմաթիվ

գիտահետազոտական ծրագրերի, ազգային և միջազգային դասընթացների և գիտաժողովների: Հեղինակ և համահեղինակ է ավելի քան 120 գիտական աշխատանքների և ավելի քան 40 գիտաժողովների զեկույցների, որոնք հրատարակվել են տեղի և արտասահմանյան մի շարք ամսագրերում:

Աշխեն Արզումանյան՝ Սովորում է Երևանի Պետական համալսարանի քիմիաի ֆակուլտետի 3-րդ կուրսում: 2020 թ.-ին մասնակցել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի <<Ուսանողության ձայն>> նախագծի ուսանող փորձագետների դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

08.03.21 թ. – 12.03.21 թ.

	08.03. 2021 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Մեկնում Արցախ	09:00	14:00	300 րոպե
2	Ռեսուրսների դիտարկում	15:30	17:30	120 րոպե

	09.03. 2021 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ԱրՊՀ ռեկտորի հետ	9:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Հանդիպում դեկանների հետ	12:00	12:40	40 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	14:10	14:50	40 րոպե
6	Հանդիպում գործատուների հետ	15:00	16:00	60 րոպե
7	Հանդիպում շրջանավարտների հետ	16:15	17:15	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

	10.03.2021 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ԱրՊՀ խորհրդի անդամների հետ	09:30	10:10	40 րոպե
2	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:30	11:30	60 րոպե
3	Հանդիպում հիմնական և համատեղությամբ աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 հոգի)	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչների (8-10 հոգի) հետ	14:20	15:00	40 րոպե
6	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	15:20	16:20	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե

	11.03.2021թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Դասալսումներ Հայոց լեզու			09:30	10:30	60 րոպե
2	Զուգահեռ հանդիպում «Հայոց լեցու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Ֆինանսներ» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	11:00	12:00	60 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			12:30	13:30	60 րոպե
4	Զուգահեռ հանդիպում «Հայոց լեցու և գրականություն» մասնագիտության դասախոսների հետ	Հանդիպում «Ֆինանսներ» մասնագիտության դասախոսների հետ	Հանդիպում «տեղեկատվական տեխնոլոգիաներ» դասախոսներ հետ	13:40	14:40	60 րոպե
5	Զուգահեռ հանդիպում «Հայոց լեցու և գրականություն» մասնագիտության ուսանողների հետ	Հանդիպում «Ֆինանսներ» մասնագիտության ուսանողների հետ	Հանդիպում «տեղեկատվական տեխնոլոգիաներ» Ուսանողների հետ	15:00	16:00	60 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:30	18:30	120 րոպե

	12.03.2021 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում Ստորաբաժանումների ղեկավարների (ուսումնական	09:30	11:00	90 րոպե

	գործընթացի կազմակերպման, վերահսկման, գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության, հաշվապահական հաշվառման,կադրերի, ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի, լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինների) հետ /այց ստորաբաժանումներ/			
2	Բաց հանդիպում	11:30	12:10	40 րոպե
3	Հանդիպում Որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ	12:30	13:30	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:50	17:30	160 րոպե
6	Հանդիպում ԱՐՊՀ ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե

	13.03. 2021 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Մեկնում Երևան	11:00	16:00	300 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Գիտահետազոտական թեմաների ցանկ /առկայության դեպքում/	1
2.	ՌԾ մշակման հիմքում ընկած վերլուծություններ /առկայության դեպքում/	1
3.	Կառավարման խորհրդի աշխատակարգ	2
4.	Կադրերի խրախուսման, աջակցման, պահպանման և անհրաժեշտ կադրերի ներգրավման քաղաքականություն /առկայության դեպքում/	2
5.	Կառավարման խորհրդին ներկայացվող 2018-19, 2019-20թթ. հաշվետվություններ	2
6.	Արտաքին շահակիցների շրջանում կարիքների բացահայտման հարցումների օրինակներ և վերլուծություններ	2
7.	Ստորաբաժանումների և դրանց ղեկավարների գործունեության պլաններ	2
8.	2018-2019թթ ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա ավարտական աշխատանքներ	3
9.	Տարեկան հաշվետվության օրինակ, որտեղ բերված են ՄԿԾ-ների բարելավման առաջարկներ	2
10.	ՄԿԾ-ների վերաբերյալ արտաքին կարծիքը ՀՀ Վանաձորի պետական մանկավարժական համալսարանից և ներքին շահակիցներից	3
11.	Ուսումնական պլանի այնպիսի տարբերակ, որտեղ նշված են նաև կիսամյակները և, որոնք ենք կամընտրական դասընթացները /ներկայացված ՄԿԾ-ների շնչանակներում/	3
12.	Առարկայական նկարագրի նմուշ, որտեղ ներկայացված են ըստ շաբաթների, անհատական և խմբային աշխատանքների թեմաները	3
13.	ՏՏ ՄԿԾ-ի առարկանների նկարագիր ըստ թեմաների	3
14.	Նախկին առարկայական նկարագրերի նմուշ	3
15.	Ուսանողների կողմից լրացվող հարցաթերթիկների ամփոփման եզրակացություն	3
16.	Դասալսումների արդյունքների ամփոփում	3
17.	ԱրՊՀ-ում իրականացվող մի քանի ՄԿԾ-ներ	3
18.	Ներկայացված ՄԿԾ-ների մասնագիտական առարկաների հանձնարարականների օրինակներ /միջանկյալ, վերջնական հանձնարարություններ/	
19.	Ներկայացված ՄԿԾ-ների շրջանակներում ավարտական աշխատանքներ մի քանի օրինակ	
20.	Դասախոսների ինքնավերլուծության նմուշ	5
21.	Ամբիոնի նիստի արձանագրություն, որտեղ ներկայացված են ուսանողների շրջանում իրականացրած հարցման արդյունքների ամփոփումը	5
22.	Վերջին 3 տարիների ընթացքում ԱրՊՀ դասխոսների կողմից տպագրված գիտական կամ գիտամեթոդական աշխատանքների ցանկ.	5
23.	Որակավորման բարձացում անցած դասախոսների ցանկ	5

24.	Դասախոսների ցանկ, որոնք մասնակցել են գիտաժողովների (գիտաժողովների տվյալները)։	5
25.	Ուսանողների բավարարվածության հարցումների օրինակներ և արդյունքներ	7
26.	Հաստիքացուցակ/դրույքաչափ/	7
27.	Ստորաբանժանումներին տրվող հաշվետվության սահմանված կարգ	8
28.	<<Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից իրականացվում է պարբերական մամուլի և ինտերնետային պարբերականների ամենօրյա մշտադիտարկում և վերլուծություն>>. Վերլուծության փաստաթուղթը	8
29.	Փորձուսուցման արդյունքների ամփոփիչ վերլուծություններ	10
30.	Շրջանավարտների հարցումների հարցաթերթիկներ։ Հարցումների արդյունքների ամփոփում, կամ վերլուծություններ /առկայության դեպքում/	10
31.	Ֆակուլտետներում տեղի ունեցող կլոր սեղան-քննարկումների արդյունքներ, ինչպես օրինակ տնտեսագիտության ֆակուլտետի դեպքն է	10
32.	<<2017թ. փետրվարին վերանայվել է ուսանողական հարցումների կանոնակարգն ու հարցաշարերը>>. վերանայված փաստաթղթային հիմքը /առկայության դեպքում/	10
33.	Վերջին երեք տարիներին կատարված բոլոր հարցումների նմուշներ և վերլուծություններ	10
34.	Որակի ապահովման պլան	10
35.	Որակի ապահովման կենտրոնի վերջին երեք տարիների հաշվետվությունները	10
36.	Հոգեբանական կենտրոնի վերլուծություններ, արձանագրություններ.	4
37.	Կուրսղեկի աշխատանքային պլան.	4
38.	Առաջին կուրսեցիների ուղեցույց.	4
39.	Քննությունների բողոքարկման ընթացակարգ.	4
40.	ՈԻԽ և ՈԻԳԸ ինքնավերլուծության նմուշ.	4
41.	Ինֆորմ և կիրառական մաթեմատիկա. Լավագույն 5 թեզեր.	6
42.	Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան հաշվետվությունները (վերջին 3 տարվա համար)	9

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Ամբիոններ
3. Ստորաբաժանումներ
4. Լաբորատորիաներ
5. Կաբինետներ
6. Գրադարան
7. Ընթերցասրահ
8. Հոգեբանական կենտրոն
9. Իրավաբանական կլինիկա
10. Բուժկետ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՀՀ- Հայաստանի Հանրապետություն
2. ԱրՊՀ- Արցախի պետական համալսարան
3. ԱՀ- Արցախի Հանրապետություն
4. ՄԿԾ-մասնագիտության կրթական ծրագիր
5. ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն
6. ՈԱ-Որակի ապահովում
7. ՈԱԱԿ-«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
8. ՊԴԿ-պրոֆեսորադասախոսական կազմ
9. ՌԾ- Ռազմավարական ծրագիր
10. ՈՒԽ-Ուսանողական խորհուրդ
11. ՈՒՀՏԱ-Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին
12. ՈՒԳԸ-Ուսումնական գիտական ընկերություն